

9 074 25

ՀԱՅՈՑ ԼԵԶԱԻ  
ՔԵՐԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՆՍՏԱՆՍ 1911 ՎՊ

ԳՐԱԳՐԻ ՄԵԶՆԱԿԱՆՑ՝ ԳՐԱԳՐ  
VI ՅԵՂ, VII ՊԵՐՍՊԵԿՏԻՆԻ ԶԱՎԱՐ

491.99-5  
U-41

ԿՈՒՆՍՏԱՆՍԻ ԶԵՅՆՈՑՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՊԵՏԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԳՐԱՆ

1911

1005-10

491.99-5

U-41

W

Գ. ՍԵՎԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՇԱՐԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ VI ՅԵՎ VII  
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաստատված է ՀՄԽՀ Լուսժողովմասի կողմից

ԵՈՐՀՐԴՈՅԻՆ ՀԱԹԱՍԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1936

Պատ. խմբագիր՝ Հ. Մելիքյան  
Տեխ. խմբագիր՝ Հ. Կարապետյան  
Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

### Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Մեր «Շարահյուսությունը» միջնակարգ դպրոցի 2 և 3 դասարանների հայոց լեզվի նոր, կայուն ծրագրին համապատասխան կազմված դասագիրքը և սպառում և այն ամբողջ նյութը, վորը նախատեսված է յերկու դասարաններում անցնելու համար: Ծրագրից կատարված վորոշ արտուղությունները բղխում են դասագրքի շարադրման մեթոդական պահանջից:

«Շարահյուսությունը» սրտնված է յերկու հատվածի՝ ա) շարահյուսության սխառեմառիկ դասընթացի և բ) վարժությունների: Առաջին հատվածում բերված որինակների հեղինակները, իբրև կոնսուլտանտ, չեն նշված, վորովհետև «Շարահյուսությունը» կազմողն իրեն ազատ և զգացել ինչպես ինքնուրույն որինակներ գնելու, այնպես էլ բերված որինակների մեջ կրճատումներ և փոփոխումներ կատարելու: Վարժությունների հատվածում, ընդհակառակը, միշտ նշված են այն հեղինակները, հին և նոր, վորոնցից որինակներ են բերված: Թարգմանական որինակների համար հաճախ նշված են վոր թե թարգմանիչները, այլ հեղինակները:

Այս հատվածում հաճախ անհրաժեշտ էր լինում՝ ա) վերահսկողները զեղչված լեռնական կամ զերանվամբ արտահայտված անունները (հատուկ և հասարակ), վորպեսզի կցկառու որինակները չափազանց վերացական չլինեն:

բ) վորոշ նախադասությունների մեջ իմաստը չաղճատող թեթև կրճատումներ կատարել:

գ) մի որինակացնել կեաագրությունը և ուղղագրությունը: Մեր գյուղագրիչներից բերված որինակների մեջ պահպանված է բարբառային ուղղագրությունը:



1177-50

Գլավկուտի լրագոր Գ.—2021

Գառվեր 445

Հրատարակ. 3655

Տիրոժ 45000

Գեահրատի ապարան, Յերեվան, II Գնունի, № 4

Հանձնված է արտագրության 17 մարտի 1936 թ.

Ստորագրված է աղագրության 7 ապրիլի 1936 թ.

Յ Ո Ւ Յ Ա Կ

Գործածված ազգանունների համառոտագրությունների

- |                                      |                       |
|--------------------------------------|-----------------------|
| Ալ.—Վարձավ Ալազան                    | Ղ. Աղ.—Ղազարոս Աղաչան |
| Ավ. Ա.—Ավետիք Իսահակյան              | Մ. Արմ.—Մկրտիչ Արմեն  |
| Բակ.—Ակսել Բակունց                   | Յե. Չ.—Յեղիշի Չարենց  |
| Գ. Ման.—Գուրգեն Մանարի               | Ն. Չար.—Նաիրի Չարյան  |
| Դ. Դեմ.—Դերենիկ Դեմիր-<br>ճյան       | Ն.-Դ.—Նար-Դոս         |
| Զ. Յես.—                             | Շիրվ.—Շիրվանդադե      |
| Թոթ.—Վահան Թոթովենց                  | Պոռչ.—Պերճ Պոռչան     |
| Խ. Ար.—Խաչատուր Արսվյան              | Վահ. Տ.—Վահան Տերչան  |
| Հ. Թում.—Հովհ. Թումանյան             | Ստ. Չ.—Ստեփան Չորյան  |
| Հ. Հովհ.—Հովհաննես Հով-<br>հաննիսյան | Փափ.—Վրթանես Փափազյան |

Հ Ա Տ Վ Ա Ս Ա Ռ Ա Ջ Ի Ն  
Շ Ա Ր Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԽՈՍԲ ՅԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### § 1. Խ Ո Ս Ք

Լեզուն մարդկանց հաղորդակցման ամենակարևոր միջոցն է: Լեզվի միջոցով մարդիկ մտածում են և իրենց մտածությունները հաղորդում ուրիշներին:

Մտածությունները կարող են հաղորդվել ա) բանավոր, բ) գրավոր:

Բանավոր կամ գրավոր արտահայտված ամեն մի մտածություն կոչվում է խոսք:

Բանավոր արտահայտված մտածությունը բանավոր խոսք է, իսկ գրավոր արտահայտված մտածությունը՝ գրավոր խոսք:

Սոսքը միշտ ամբողջական է լինում, այսինքն արտահայտում է հեղինակի, կամ խոսողի ամբողջ մտածությունը այս կամ այն հարցի, նյութի մասին կամ արտահայտում է այն բոլոր մտքերը, վոր հեղինակը կամ խոսողը ցանկանում է հաղորդել ուրիշներին:

Յեթե հեղինակի կամ խոսողի նպատակն է շատ մտքեր հաղորդել, նա այդ կատարում է ընդարձակ, ծավալուն խոսքով, վորը պարունակում է բազմաթիվ մտքեր (որինակ՝ վեպ, պոեմ, դասագիրք, զեկուցում և այլն): Յեթե հեղինակը ցանկանում է քիչ մտքեր հաղորդել, նա այդ կատարում է վոչ-ընդարձակ խոսքով, վորը պարունակում է համեմատաբար պակաս մտքեր (որինակ՝ պատմվածք, բանաստեղծություն, հոդված, նամակ, անդեկություն և այլն): Յերբեմն անհրաժեշտ է լինում հաղորդել միայն մի կամ մի քանի միտք, այսպիսի դեպքերում խոսքը շատ կարճ է լինում և պարունակում է միայն մի կամ մի

ճանի միաք (որինակ՝ կոչ, լողունք, առած, բացականչություն, հայտաբարություն և այլն):

Որինակներ.

1. Բարձրացնենք ուսման վորակը:
2. Վերտեղ հաց՝ այնտեղ կաց:
3. Պրոլետարներ՝ բոլոր յերկրների, միացե՛ք:
4. Սապոնը սեվին ի՞նչ անի, խրատը՝ խեղին:
5. Ծիծաղում ե նա, ս՛վ վերջինն ե ծիծաղում:
6. Այսորվա «Ալմաստ» ներկայացումը հետածգվում ես

Վերցրած տոմսերը պահում են իրենց ույժը:

Այս որինակներից յուրաքանչյուրը մի խոսք ե և արտահայտում ե մեկական կամ յերկուական միտք պարունակող մտածություն:

Պատմությունը տվել ե մեզ ուսուցիչներ յերեք մեծ.

Մեկը դեռ հին կապանքներում միտք ու ընթացք մեզ տվեց.

Մյուսն յեկավ ու կործանեց կապանքները մեզ գերող.

Կերտում ե կյանք նրանց հունով Ուսուցիչը մեր յերրորդ:

Այս ել մի ամբողջական խոսք ե և արտահայտում ե վոչ թե մեկ կամ յերկու, այլ չորս առանձին մտքեր, վորոնք կազմում են մի մտածություն: Յեթե չորս մտքերից բաղկացած այս խոսքից հանենք մի կամ յերկու միտք, նրանք առանձին խոսք չեն կազմի, վորովհետե թերի կլինեն և լրիվ, ամբողջական մտածություն չեն արտահայտի, մինչդեռ վերևի որինակներից (1-6) յուրաքանչյուրը, չնայած նրան, վոր մի կամ յերկու միտք ե պարունակում, ամբողջական խոսք ե, վորովհետե արտահայտում ե ամբողջական մտածություն և թերի չե, կազմված չե ուրիշ մտքերի հետ:

Պոսքի մեջ, ուրեմն, կարևորը վոչ թե նրա ծավալն ե, այլ այն ինքնուրույն գործածությունը և ամբողջականությունը, վոր նա ունի: Այսպես որինակ, Հ. Թումանյանի «Անուշ» պոեմը մի ինքնուրույն և ամբողջական խոսք ե, վորի բոլոր մասերը կապված են իրար հետ և արտահայտում են մի ամբողջական մտածություն: Բայց նույն այդ պոեմից հանված «Ասում են՝ ուռին» և «Բա՛րձր սարեր» հատվածները, չերբ առանձին արտա-

սանվում են կամ յերգվում, կտրվում են այդ պոեմից, այլևս չեն կապվում նրա մյուս մասերի հետ և ինքնուրույն գործածություն են ստանում, իբրև առանձին խոսքեր: Նույն ձևով «Պրոլետարներ՝ բոլոր յերկրների, միացե՛ք» արտահայտությունը, վոր առնված ե Կ. Մարքսի և Ֆ. Ենգելսի «Կոմունիստական մանիֆեստից», ստացել ե ինքնուրույն գործածություն, դարձել ե առանձին գործածվող խոսք, մինչդեռ հիշատակված գրքի մեջ այն վոչ թե խոսք ե, այլ՝ առանձին միտք, վորը կապված ե նույն գրքի մյուս բոլոր մտքերի հետ և բղխում ե նրանցից:

§ 2. ՆՍՆԱԴՍՈՒԹՅՈՒՆ

Մեկից ավելի միտք պարունակող խոսքը կազմված ե լինում առանձին մասերից, միավորներից, վորոնցից յուրաքանչյուրն արտահայտում ե մի ամփոփ միտք: Միտքն ամփոփ ե կոչվում, յերբ արտահայտված ե այնպես, վոր կարող ե առանձին ել առնվել և թերի չլինել: Որինակ, վերևում (§ 1) բերված քառյակի մեջ արտահայտված ե չորս ամփոփ միտք, յուրաքանչյուր տողում՝ մեկը. ա) պատմությունը մեզ տվել ե յերեք մեծ ուսուցիչ, բ) մեկը դեռ հին կապանքներում մեզ միտք և ընթացք տվեց, գ) մյուսն յեկավ ու կործանեց մեզ գերող կապանքները, դ) նրանց հունով կյանք ե կերտում մեր յերրորդ Ուսուցիչը:

Մի ամբողջություն հանդիսացող այս խոսքը (քառյակը) կազմված ե չորս միավորներից, վորոնցից յուրաքանչյուրը արտահայտում ե ամփոփ միտք:

Յառեռով արտահայտված յուրաճանչուր ամփոփ միտք կոչվում ե նախադասություն:

Մեր ա, բ, գ և դ որինակներից ամեն մեկը մի նախադասություն ե, վորովհետև արտահայտում ե ամփոփ միտք:

Նախադասությունները գրավոր խոսքի մեջ իրարից բաժանվում են վերջակետով, իսկ յերբեմն միջակետով:

Որինակ.

Ոպերային փոխարինեց դրաման: Մեծ պատի առաջին կիրակիից սկսվեցին ներկայացումները: Լեվոնը մտավ իր գե-

րի մեջ, բայց վոչ նախկին սիրով. դրաման ուզերայի չափ չէր սիրում, մանավանդ վոր յեկվոր խմբի մեջ չկային զբավիչ ուժեր: Սակայն պատանուն պաշարել եր մի ուրիշ տեսակի աշխույժ, վոր ինձ անհանգստացնում եր:

Այս հատվածի մեջ հինգ ամփոփ մտքեր արտահայտված են հինգ առանձին նախադասություններով, վորոնք իրարից բաժանված են վերջակետով և միջակետով:

### § 3. ՊԱՐԶ ՅԵՎ ԲԱՐԴ ԼԱՆՍԻՍՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոոսքի մեջ յուրաքանչյուր նախադասություն մտքի վորոշ կապ ունի նախորդ և հաջորդ նախադասությունների հետ: Այդ կապը սովորաբար պարզ և լինում և հասկացվում է իրար հաջորդող նախադասությունների արտահայտած մտքից: Վերցնենք որինակ, «Գիքոր» պատմվածքի առաջին յերեք նախադասությունները.

1. Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել:
2. Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի:
3. Կինը չեր համաձայնում:

Այս յերեք նախադասությունները իրար հետ ունեն մտքի հետևյալ կապը. յերկրորդ և յերրորդ նախադասությունները պարզում են, թե ինչի համար եր կռիվ ընկել Համբոյի տունը (վորովհետև Համբոն ուզում եր Գիքորին քաղաք տանել, իսկ կինը չեր համաձայնում). յերկրորդ նախադասությունը միաժամանակ վորոշ կապ ունի յերրորդի հետ և պարզում է, թե ում կինը չեր համաձայնում և ինչ բանի չեր համաձայնում (Համբոյի կինը չեր համաձայնում և այն բանին, վոր Համբոն Գիքորին քաղաք տանի):

Հաճախ հեղինակը կամ խոսողը մտքի սերտ կապ ունեցող չերկու և ավելի նախադասությունները իրար է միացնում և արտահայտում մի նախադասությամբ: Այս ձևով նախադասությունների միջև չեղած մտքի կապն ավելի չի շեղավում և միաժամանակ ցույց է տրվում, թե ինչպիսի կապ գոյություն ունի նրանց միջև: Այս կերպով ստացված նախադասությունը արտա-

հայտում է վոչ թե մի միտք, այլ մի քանի մտքեր, վորոնք այլևս ամփոփ չեն և իրար միանալով կազմում են մի, բայց բարդ, ամփոփ միտք արտահայտող նախադասություն:

Մեկից ավելի միտք արտահայտող նախադասությունը կոչվում է բարդ նախադասություն: Միայն մի միտք արտահայտող նախադասությունը կոչվում է պարզ նախադասություն:

«Գիքոր» պատմվածքի սկզբի առաջին և յերրորդ նախադասությունները պարզ են, վորովհետև արտահայտում են մեկական միտք, իսկ յերկրորդ նախադասությունը բարդ է, վորովհետև արտահայտում է մեկից ավելի միտք. այս յերկրորդ նախադասության մեջ հեղինակը միացրել է և միասին արտահայտել հետևյալ մտքերը՝ ա) Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, բ) վոր (Գիքորը) մարդ դառնա, գ) (վոր Գիքորը) աշխատանք անի:

Իհարկե, կարելի չէ այս բարդ նախադասությունն ավելի բարդացնել՝ նրան միացնելով մտքով նրա հետ կապված առաջին և յերրորդ նախադասություններն եր Այս դեպքում կստացվի հետևյալ բարդ նախադասությունը. Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել, վորովհետև Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի, իսկ կինը չեր համաձայնում:

### Ո Ր Ի Ն Ա Կ.

- 1) Դուան շեմքին նստելն ուներ յեվ մի ուրիշ նպատակ:
- 2) Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջովն եր անցնում:
- 3) Ուրիշ գյուղից յեկողը մեր տան կողքովը պիտի գնար:
- 4) Հանդից տուն դարձողները՝ վորը մի խուրճ խոտ շալակին, վորը՝ լուծի կապերն ուսին ու բեզարած յեզներն առաջն արած, վորը՝ եշի վրա, վորաները գետնին քսելով, մի խոսքով, իրիկնապահին ով անցներ փողոցով, պապիս պիտի ասեր «բարի իրիկուն»: 5) Պապս ել նրանց պիտի հարցներ, թե վարը պրծա՞ն, կամ թե այսինչ սարի խոտն ինչպե՞ս է:

Այս հատվածի առաջին յերեք նախադասությունները պարզ են և արտահայտում են մեկական ամփոփ միտք, չորրորդ և

հինգերորդ նախագաստությունները բարդ են, չորրորդն արտահայտում է յերկու միաք, իսկ հինգերորդը՝ յերեք:

§ 4. ՆԱՆԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՅԵՎ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Ինչպես վոր խոսքը կազմված է լինում առանձին միավորներից՝ նախագաստություններից, այնպես ել նախագաստությունը կազմված է լինում առանձին միավորներից՝ բառերից:

Նախագաստություն կազմող բառերը կոչվում են նախագաստության անդամներ:

Նախագաստության անդամ լինում են դոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը և մակերայր. կապերը, շարկապաները և ձայնարկությունները նախագաստության անդամ չեն կարող լինել:

Որ ի ն ա կ.

Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը նախագաստությունը կազմված է ութ բառերից, վորոնք նախագաստության անդամներ են:

Յուրաքանչյուր նախագաստության մեջ նախագաստության անդամներն իրար հետ մտքի վորոշ կապ ունեն: Այդ կապն արտահայտվում է նրանց վորոշ դասավորությամբ (յեռեռաջությամբ) և վերջավորության փոփոխությամբ (հոլովմամբ և խոնարհմամբ) ու կապերով:

Նախագաստության անդամների մեջի կապը Գրանց դասավորությամբ յեվ վերջավորությունների փոփոխությամբ արտահայտելը կոչվում է կապակցություն:

Յեթե վերևի նախագաստությունը կազմող բառերը իրար յեռեկից շարված լինելին առանց վերջավորությունների փոփոխության, կստացվեր բառերի հետևյալ անմիտ կույտը.

Կյանք վերջին շող լուսավորել Մարկոս Ալիմյան հողագույն դեմք:

Մրանք վոչ թե նախագաստության անդամներ են, այլ սոսկ բառեր, վորոնք իրար հետ մտքի վոչ մի կապ չունեն և չեն կապակցված:

Նույնպես մի անմիտ բան կստացվի, յեթե նախագաստության անդամները նույնությամբ վերցնենք և դասավորենք

այնպես, վոր խախտվի մտքով իրար հետ կապված անդամների յեռեռաջությունը. վերջին կյանքի Մարկոս Ալիմյանի լուսավորեց հողագույն շողը դեմքը: Բառերի այսպիսի անկարգ դասավորությամբ նախագաստություն չի ստացվում և միաք չի արտահայտվում, վորովհետև չի պահպանված նախագաստության անդամների անհրաժեշտ յեռեռաջությունը, թեև նրանց վերջավորություններն. անհրաժեշտ ձևով փոփոխված են:

Հայերենում նախագաստության անդամների դասավորության քարացած կարգ գոյություն չունի, և կարելի չե միևնույն նախագաստությունն արտահայտել շատ ձևերով, նախագաստության անդամների տարբեր յեռեռաջությամբ, բայց անհրաժեշտ է պահպանել նրանց մտքի կապը: Այսպես, որինակ, մեր նախագաստությունը կարելի չե արտահայտել հետևյալ տարբեր դասավորություններով.

ա) Կյանքի վերջին շողը Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը լուսավորեց.

բ) Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը կյանքի վերջին շողը լուսավորեց.

գ) Կյանքի շողը վերջին՝ լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը յեվ այլն:

§ 5. ՆԱՆԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ

Նախագաստությունները, նայած թե ինչպես են արտահայտվում և բալի վոր յեղանակով, ըստ այդմ ել ստանում են վորոշ բնույթ կամ յերանգ. որինակ՝ Սուրենը գնա՞ց, Սուրենը գնաց, յերանի՞ Սուրենը գնացած լինի, Սուրեն՞ն, գնա՞ յեվ այլն:

Նախագաստություններն ըստ յերանգի լինում են ա) պատմողական, բ) հարցական, գ) բացականչական, դ) հրամայական: Ա. Պատմողական նախագաստություններ արտահայտվում են բայի սահմանական, յենթադրական (պայմանական) և հարկազրական յեղանակներով և ցույց են տալիս հաստատ կամ յենթադրվող գործողություն, որինակ՝

Սուրենը կես ժամ առաջ դպրոց գնաց:

Այնտեղ աշակերտական ժողով պիտի լինի:

Հիմա Սուրենը դպրոցում կլինի:

Բ. Հարցական նախադասություններն արտահայտվում են բոլոր յեղանակներով, բացի հրամայականից, և արտահայտում են վորևե հարցում. որինակ՝

Սուրենը դպրոց գնա՞ց:

Այնտեղ աշակերտական ժողովը կայացա՞վ:

Սուրենն այժմ դպրոցո՞ւմ կլինի:

Գ. Բացականչական նախադասությունները սովորաբար արտահայտվում են ըզձական յեղանակով կամ լինում են անդեմ և անստորոգյալ և ցույց ե տալիս ցանկութուն, կոչ, պահանջ և այլն. որինակ՝

Յերանի՛ հիմա Սուրենը դպրոցում լինի:

Յեկե՛ք միասին դպրոց գնանք: Ժողովն սկսե՛լ, ժողովն սկսե՛լ:

Հավի՛րժ հիշատակ Քսանովեց կոմիսարներին:

Դ. Հրամայական նախադասություններն արտահայտվում են հրամայական յեղանակով և ցույց են տալիս վորևե հրաման կամ կարգադրութուն, որինակ՝

Սուրեն, դպրո՞ց շտապիր:

Ոգնեցե՛ք ֆաշիզմի զոհներին:

Բա՛րձր պահեցեք կարմիր դրոշակները:

Պատմողական, հարցական, բացականչական և հրամայական նախադասություններն իրենք ևս կարող են արտահայտվել յերկու ձևով. որինակ՝

Սուրենը գնաց, Սուրենը չգնաց:

Հիմա Սուրենը դպրոցում կլինի: Հիմա Սուրենը դպրոցում չի լինի:

Առաջին որինակներում նախադասությունն արտահայտված ե դրական ձևով, յերկրորդ որինակներում նույն նախադասութուններն արտահայտված են բացասական, ժխտական ձևով: Այս յերկու ձևերով արտահայտված նախադասությունների մեջ յենթակայի և ստորոգյալի փոխհարաբերության տարբեր բնույթ ե դրսևորվում: Մի դեպքում ստորոգյալը կապվում, վերադրվում ե յենթակային, մյուս դեպքում ստորոգյալը ժխտը

վում, ոտարվում ե յենթակայից: Ըստ այդմ ել նախադասութունները կոչվում են ա) հաստատական, բ) ժխտական:

Վերևում բերված որինակներից առաջինները հաստատական են, յերկրորդները՝ ժխտական:

Ծանոթութուն. Հրամայական նախադասությունների ժխտականն արտահայտվում ե արգելական ձևով, որինակ՝ մի՛ հավատա թշնամու բարբաջանքներին. մի՛ սպասեք, վոր ձեզ համար ուրիշներն աշխատեն յեվ այլն:

## ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### § 6. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ. ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Վորդեպի նախադասությունը միտք արտահայտի, անհրաժեշտ ե, վոր նրա անդամներից մեկը ցույց տա մի առարկա, վորը մի բան ե անում կամ լինում, իսկ մի ուրիշը ցույց տա, թե ինչ ե անում կամ լինում այդ առարկան:

Որինակ.

Լույսը բացվեց: Սուլիչները հնչեցին: Յես արթնացա:

Այս նախադասություններից յուրաքանչյուրն ունի յերկու անդամ, վորոնցից մեկը ցույց ե տալիս այն առարկան, վորը մի բան ե անում կամ լինում (լույսը բացվում ե, սուլիչները հնչում են, յես արթնանում եմ), իսկ մյուսը ցույց ե տալիս, թե ինչ ե անում կամ լինում այդ առարկան (լույսը բացվում ե, սուլիչները հնչում են, յես արթնանում եմ):

Նախադասության այն անդամը, վորը ցույց ե տալիս մի բան անող կամ լինող առարկան, կոչվում ե յենթակա:

Լույսը, սուլիչները և յես յենթականեր են, վորովհետե համապատասխան նախադասությունների մեջ ցույց են տալիս մի բան անող կամ լինող առարկան:

Նախադասության այն անդամը, վորը ցույց ե տալիս, քե ի՞նչ ե անում, ի՞նչ ե լինում կամ ի՞նչ ե յենթական, կոչվում ե ստորոգյալ:

Բացվեց, հնչեցին և արթնացա ստորոգյալներ են, վորով

Տեսե ցույց են տալիս, թե ինչ է անում համադատասխան նախադատութեան չենթական:

Լույսը բացվեց, սուլիչները հնչեցին և յես արթնացաւ նախադատութեանները կազմված են յերկուսական անդամից, վորոնցից մեկը յենթակա յես, իսկ մյուսը՝ ստորոգյալ:

Յենթական և ստորոգյալը նախադատութեան կազմող անդամներ են, նրանք միայնակ կարող են նախադատութեան կազմել:

Յենթական յեվ ստորոգյալը կոչվում են նախադատության գլխավոր անդամներ:

Միայն յենթակալով յեվ ստորոգյալով կազմված նախադատությունները կոչվում են համառոտ նախադատություն:

Լույսը բացվեց, սուլիչները հնչեցին և յես արթնացաւ համառոտ նախադատություններ են:

§ 7. ՆԱԽԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ,  
ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Նախադատությունները մէջտ միայն յենթակալով և ստորոգյալով չեն արտահայտվում: Նախադատութեան մեջ կարող են լինել և այնպիսի անդամներ, վորոնք լրացնում, պարզաբանում են գլխավոր անդամների արտահայտած միտքը:

Որինակ.

Լույսը աստիճանաբար բացվեց:

Գործարանների սուլիչները ընդհատումներով հնչեցին:

Յես անմիջապես արթնացաւ:

Այս նախադատությունների մեջ, բացի յենթականերից և ստորոգյալներից, կան նաև այնպիսի բառեր, վորոնք պարզաբանում են նրանց արտահայտած միտքը: Լույսը ինչպէս բացվեց,—աստիճանաբար, ինչի՞ սուլիչները հնչեցին,—գործարանների, սուլիչները ինչպէս հնչեցին,—ընդհատումներով, յես լերը արթնացաւ,—անմիջապես:

Աստիճանաբար, գործարանների, ընդհատումներով և անմիջապես բառերը պարզաբանում են նախադատութեան գլխավոր անդամների արտահայտած միտքը:

Նախադատության միտքը պարզաբանող, լրացնող անդամները կոչվում են նախադատության յերկրորդական անդամներ: Աստիճանաբար, գործարանի, ընդհատումներով և անմիջապես բառերը նախադատութեան յերկրորդական անդամներ են: Յերկրորդական անդամներ ունեցող նախադատությունը կոչվում է ընդարձակ նախադատություն:

Լույսը աստիճանաբար բացվեց, գործարանների սուլիչները ընդհատումներով սուլեցին և յես անմիջապես արթնացաւ ընդարձակ նախադատություններ են:

§ 8. ԼՐԱՅՄԱՆ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ

Յերկրորդական անդամներն ևս կարող են ունենալ պարզաբանող կամ լրացնող բառեր, վորոնք սակայն լրացնում են վոչ թե գլխավոր անդամների արտահայտած միտքը, այլ այն յերկրորդական անդամի իմաստը, վորի վրա նրանք դրված են:

Որինակ.

Մեր քաղաքի գործարանների սուլիչները սովորական ընդհատումներով սուլեցին:


Այս ընդարձակ նախադատութեան մեջ, բացի գլխավոր անդամներից և նրանց լրացումներից, կան նաև այնպիսի անդամներ, վորոնք լրացնում են յերկրորդական անդամների իմաստը: Սուլիչները յենթական ունի գործարանների լրացումը, վորը յերկրորդական անդամ է, սա իր հերթին ունի քաղաքի լրացումը (վեր գործարանների,—քաղաքի), իսկ այս վերջինս ունի յուր լրացումը՝ մեր (վեր քաղաքի կամ համ քաղաքի,—մեր): Նույն նախադատութեան մեջ սուլեցին ստորոգյալն ունի ընդհատումներով լրացումը, վորը յերկրորդական անդամ է, այս յերկրորդական անդամն էլ ունի յուր լրացումը հանձին սովորական բառի (ինչպիսի՞ ընդհատումներով,—սովորական):

Նախադատության յերկրորդական անդամների լրացումները կոչվում են լրացման լրացումներ:

Վերևի նախադատութեան մեջ մեր, քաղաքի և սովորական բառերը լրացման լրացում են:

Նախադատության այն բոլոր անդամները, վորոնք լրացումներ ունեն, կոչվում են լրացյալ:


05-741  
1477-50



Մեր բառը քաղաքի լրացումն է, քաղաքը՝ մեր բառի լրացյալը, քաղաքի բառը գործարանների լրացումն է, իսկ գործարանների բառը՝ քաղաքի լրացյալը, գործարանների բառը սուլիչները յենթակայի լրացումն է, իսկ սուլիչները՝ գործարանների լրացյալը, ընդհատումներով բառը սուլիցին ստորոգյալի լրացումն է, սուլիցին ստորոգյալը՝ ընդհատումներով բառի լրացյալը և այլն:


Յուրաքանչյուր նախադասության մեջ բոլոր անդամները իրար նկատմամբ լրացում չե՛վ լրացյալ են հանդիսանում, բացի յենթակայից չե՛վ ստորոգյալից, վորոնք իրար նկատմամբ հավասար են, իբրե՛վ գլխավոր անդամներ:

Ամեն մի ընդարձակ նախադասության բոլոր անդամները կարելի չէ բաժանել յերկու խմբի, մի խմբում՝ յենթական իր լրացումներով և լրացման լրացումներով, մյուս խմբում՝ ստորոգյալը իր լրացումներով և լրացման լրացումներով: Լրացում և լրացյալ իրար տակ դասավորելով կարելի չէ կազմել ամեն մի նախադասության սխեման հետևյալ ձևով:



Վերցնենք մի նախադասություն և կազմենք նրա սխեման՝ նախ գտնելով յենթական և ստորոգյալը, ապա նրանց լրացումները և լրացման լրացումները: Նախադասությունը հետևյալն է. Մութ սենյակի լուռության մեջ պատի ժամացույցի լեզվակը խորհրդավոր անտարբերությամբ հնչեցնում եր իր չափաբերական զարկերը: Այս նախադասության յենթական և լեզվակը, ստորոգյալը՝ հնչեցնում եր, մյուս անդամները նրանց լրացում-

ներն են և լրացման լրացումները: Այս նախադասության սխեման կարելի չէ կազմել հետևյալ ձևով:



### Յ Ե Ն Թ Ա Կ Ա

#### § 9. ՅԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասության յենթական միշտ այն առարկան է, լինի նա անձ, իր թե յերևույթ, վորը մի բան է անում կամ լինում: Քանի վոր առարկա ցույց են տալիս միայն գոյականները և դերանունները, այդ պատճառով էլ յենթական սովորաբար արտահայտվում և գոյականով կամ դերանվամբ:

Հաճախ, սակայն, իբրև յենթակա գործածվում են նաև ածականը, թվականը, բայը և այլ խոսքի մասերը: Նման դեպքերում ածականը, թվականը, բայը և այլն առնվում են իբրև գոյական կամ փոխարինում են վորևիցե գոյականի:

Հայերենում յենթական դրվում է միշտ ուղղական հոլովով, յեզակի կամ հոգնակի թվով:

Յենթական կարող է արտահայտվել հետևյալ կերպ:

Ա. Վորեվե գոյակաճով.

Որինակներ.

1. Ծիծաղախիտ Վանա ծովի  
Փոքրիկ գյուղից առափնյա,  
Ծովն և մտնում դադապողի  
Ամեն գիշեր մի տղա:
2. Ոչինակելի աշակերտները սլաքեկատրվեցին:
3. Մեր գրականութչան վրակեղարը նոյեմբերից և սկիզբ  
առել:
4. Գամինները լինում են տաք և սառն:

Բ. Վորեվե դերանվամբ.

Որինակներ.

1. Յեռ աշակերտ եմ: Ո՞վ և աշակերտ:
2. Դու Սուրենին իզուր նա- Սուրենին այդ պեսք չեր:  
խատեցիր:
3. Մենք գնացել ելինք ճամ- Ովքե՞ր ելին գնացել ճամբար:  
բար:
4. Նրանք մեր դատարանի ա- Սա մեր պարծանքն և  
ռաջադեմ աշակերտներն են:

Գ. Գոյակաճաբար առնված ածականով.

Որինակներ.

1. Կույրը զուրկ և տեսողութչունից:
2. Փոքրերը սովորաբար ձկուն են լինում:
3. Կոլանտեսականն ամենաառաջավոր գյուղացին և:
4. Լավը և գերազանցը տարեվերջին կպարզվի:

Դ. Գոյակաճաբար առնված բնականով.

Որինակներ.

1. Տասը յերկսի հնգապատիկն և:
2. Յերես գնացինք պարտեզ:
3. Յերկուսը անպատվաբեր գնահատական և:
4. Ութսուն կովից յոթանասունութը ծնեցին:

Ե. Վորեվե դերբայով կամ բայանվամբ.

Որինակներ.

1. Մեր գնալը հաջողվեց:
2. Միայն աշխատողն իրափունք ունի ուտելու:
3. Հոգնածները գնում են հանգստյան տուն:
4. Ծխել չի կարելի:

2. Վորեվե այլ բառով կամ նույնիսկ միջարկուրյամբ յեվ այլն,  
վար առնվում և գոյակաճաբար.

Որինակներ.

1. Վերացավ մեր յերկրից ախն ու վայր:
2. Գ-ն բաղաձայն և, իսկ Ա-ն՝ ձայնավոր:
3. Ու-ն շաղկապ և:
4. Յեվը համադոր և ու-ին:

§ 10. ՁԵՂԶՎԱԾ ՅԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Յենթական նախադասութչան գլխավոր անդամներից մեկն  
և, առանց յենթակայի նախադասութչուն չի կարող կազմվել,  
քանի վոր այդպիսի դեպքերում չի կարելի իմանալ, թե ով և  
մի բան անում կամ լինում: Այսպես, որինակ, վերցնենք հետե-  
վյալ նախադասութչունները. Յերեկ դպրոց յեկավ 10 բույկ  
ուշացումով: Ճանապարհին վայր եր ընկել յեվ ցեխոտվել:  
Յերը դատարան մտավ, շփոթված եր մեղապարտի նման:

Այստեղ խոսվում և ինչ վոր մի անձնավորութչան մասին,  
վորը ճանապարհին վայր և ընկել, ցեխոտվել, դասից ուշացել  
և այլն, բայց մենք չենք իմանում, թե ով և նա, վոր աշա-  
կերտն և: Այդ նրանից և, վոր այս նախադասութչունների մեջ  
յենթական չի արտահայտված: Դրութչունը վոչնչով չի փոխվի,  
յեթե ավելացնենք նա դերանունը և ասենք՝ յերեկ նա դպրոց  
յեկավ 10 բույկ ուշացումով և այլն, քանի վոր նա դերանունն  
ևս չի ցույց տալիս, թե ով և այդ ուշացած աշակերտը: Իհարկե,  
չի կարելի ասել, թե վերևի նախադասութչունները յենթակա  
չունեն: Յենթական նա յե, ով ուշացել և դասից:

Վորպեսզի նախադասութչունների միտք լրիվ և ճիշտ հաս-  
կանալի լինի անհրաժեշտ և, վոր մենք իմանանք, թե ով և  
յենթական: Այդ կարող և արվել, և սովորաբար արվում և, նա-

խաղասութեան յենթակայի անունը տալու միջոցով (Սուրենը յերեկ դպրոց յեկավ 10 բուլե ուշացումով): Մակայն հաճախ յենթակայի անունը տալն ավելորդ է լինում, և այդ պատճառով էլ յենթական չի արտահայտվում, զեղչվում է: Այդ լինում է սովորաբար հետևյալ դեպքերում.

ա) յերբ առանց յենթական արտահայտելու էլ մաքի շփոթութուն չի առաջանա և ստորոգյալը մի ուրիշ յենթակայի չի վերադրվի.

բ) յերբ յենթական խոսողն ինքն է.

գ) յերբ յենթական խոսողի խոսակիցն է.

դ) յերբ յենթական արդեն մի կամ մի քանի անգամ արտահայտված է նախորդ նախադասութունների մեջ:

Որինակներ.

1. Յերեկ հանդիպեցի Կիմիկին. ասաց, վոր վաղը զնալու յենք ԼԿՅԵՄ Գաղկոմ:

Այս որինակի մեջ չեն արտահայտված յես, նա, մենք յենթակաները (յես հանդիպեցի. նա ասաց. մենք զնալու յենք):

2. Սուրեն, ինչո՞ւ յես դասից ուշացել:

Այս նախադասութեան մեջ չի արտահայտված դու յենթական (դու ուշացել ես):

3. Պրոլետարներ՝ բոլոր յերկրների, միացե՛ք:

Այստեղ չի արտահայտված դուք յենթական (դուք միացեք):

Այն նախադասութունը, վորի յեքրակացի արտահայտված, բայց մտնով իմացվում է, կոչվում է զեղչված յեքրակայով նախադասութուն:

Յենթական չի կարելի ամեն դեպքում զեղչել: Այդ հնարավոր է, միայն այն ժամանակ, յերբ ստորոգյալը (բայի դեմքով և թվով) մասնացույց է անում, հիշեցնում, թե ո՞վ է կամ ի՞նչն է յենթական: Անիմաստ բան կստացվի, յեթե կազմենք այսպիսի նախադասութուններ.

«Սուրենը և Արամը զնում ելին առն: Ճանապարհին վաչր ընկավ: Ծիծաղելով ասաց՝ այս ինչ բան էր»: Այս արտահայտութունից չի իմացվի, թե ո՞վ վաչր ընկավ, ո՞վ ասաց՝ «այս ինչ բան էր»: Թեպետ ձևականորեն կարող ենք ասել «նա վաչր ընկավ» և «նա ասաց», բայց այս նա-երը լոկ բառեր են և չեն

կարող սվյալ դեպքում ձիշտ կերպով վորոշել, թե ո՞վ էր վաչր ընկնողը, ո՞վ էր ասողը<sup>1</sup>:

### § 11. ԱՆԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

Ձեզված յենթակայով նախադասութուններից պետք է տարբերել այն նախադասութունները,

ա) վորոնց յենթական չկա ընդհանրապես, և յենթական ու ստորոգյալը արտահայտված են միասին, մի բառով,

բ) վորոնց յենթական չի արտահայտված, և անհնար է վերականգնել ու արտահայտել,

գ) վորոնք վերաբերում են ընդհանրապես բոլորին և վոր թե առանձին անձերի կամ առաջկանների.

Որինակներ.

1. Մթնեք:

2. Յերեք ժամ անձրեվում էր:

3. Յերկաթը տաք-տաք կծծեն:

Այն նախադասութունը, վորի յեքրակացի արտահայտված յե՞վ չի կարող արտահայտվել, կոչվում է անեքրակա նախադասութուն:

Անենթակա նախադասութուններն արտահայտվում են.

Ա. Բայի յեզակի յերրորդ դեմքով և ցույց են տալիս ընդ-թեյան յերևույթներ, տեղումներ:

Որինակներ.

1. Ամառն ուշ է մթնում, ծմեռը շուտ է մթնում:

2. Հենց վոր լուսացավ, զինվորները ճանապարհ ընկան:

3. Ամպերից յերևում է, վոր անձրեվելու յե:

Նման տեսակի նախադասութունների և՛ յենթական, և՛ ստորոգյալը արտահայտված են լինում մի բառով (մթնում ես, լուսացավ, անձրեվելու յե):

Սրանց յենթակայով ձևերն են. 1. Ամառը մութն ուշ է ընկնում, ծմեռը մութը շուտ է ընկնում: 2. Հենց վոր լույսն ընկավ, զինվորները ճանապարհ ընկան: 3. Ամպերից յերևում է, վոր անձրեվ է գալու:

<sup>1</sup> Վորոշ քերականներ սխալվում են՝ ընդունելով, վոր «նախադասութունն ամենակարճ ձևով մի բայ է, իսկ յենթական՝ նրա լրացումը»:

Բ. Բայի հոգնակի յերրորդ դեմքով և ցույց են առլիս ընդ-  
հանրապես բոլորին վերաբերող գործողությունն, վոր սովորում և  
սովորաբար իբրև առած:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Յերկաթը տաք-տաք կծեծեն:
2. Ճտերը աշնանն են համարում:
3. Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես:

Այս նախադասությունների մեջ յերբեք չի կարելի վերա-  
հանգնել նրանք յենթական, վորովհետև միտքն իսկուհն կփոխ-  
վի և անենթական նախադասությունը կդառնա յենթակալով նա-  
խադասություն, վորի յենթական, սակայն, կոնկրետ կերպով  
մատնացույց արվել չի կարող:

Սրանց յենթակալով ձևերը կլինեն.

1. Յերկաթը պետք է տաք-տաք ծեծել<sup>1</sup>: 2. Ճտերը հար-  
կավոր է աշնանը համարել<sup>1</sup>: 3. Յես լսել եմ՝ ուռին աղջիկ էր  
ինձ պես:

Գ. Չեզոք յեվ մասամբ ներգործական սեռի բայերից կազմված  
կրթավորական ձևվի յեզակի յերրորդ դեմքով:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Այստեղ չի նստվում:
2. Խավարի մեջ դժվար է խոսվում:
3. Այդ խնդրի մասին գրվել է:

Սրանց յենթակալով ձևերն են. 1. Այստեղ անկարելի յե  
նստել<sup>1</sup>: 2. Խավարի մեջ խոսելը դժվար է<sup>1</sup>: 3. Այդ խնդրի  
մասին բան գրվել է:

Դ. Բայի յեզակի յեկրորդ դեմքով:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Մի՛ լինի ուրազի պես՝ միշտ դեպի քեզ, միշտ դեպի  
քեզ, այլ յեղի՛ր սրոցի պես՝ մին դեպի քեզ, մին դեպի  
մեզ:

2. Մինչեվ չտաս մին, չես առնի տամուսին:

Սրանց յենթակալով ձևերն են՝ 1. Չպետք է լինել ուրա-

<sup>1</sup> Այս նախադասության մեջ անսրոջ դերբայը յենթակալ յե (տես § 9, Ե.):

զի պես ... այլ պետք է լինել սրոցի պես... 2. Մինչեվ  
չտրվի մին, չի առնվի տամուսին:

Ե. Անենթական նախադասության իմաստ ունեն և այն  
նախադասությունները, վորոնց յենթական արտահայտված է  
մարդ բառով առանց հոգի:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Մարդը պետք է ապրի յեվ աշխատի մեր մեծ յերկ-  
րում. 2. Նրա նվազը լսելիս մարդ ա կամայից լուռ է.  
3. Մարդ իր վառը չի ուզի:

## Մ Տ Ո Ր Ո Գ Յ Ա Լ

### § 12. Պ Ս Ր Զ Մ Տ Ո Ր Ո Գ Յ Ա Լ

Ստորոգյալը ցույց է առլիս, թե ինչ է սենում, ինչ է,  
կամ ինչ է լինում յենթական, և կատարում է յերկու պաշտոն.  
ա) արտահայտում է այն հատկանիշը (գործողություն, դրու-  
թյուն, վորակ, հատկություն), վոր ունի յենթական և բ) ար-  
տահայտած հատկանիշը վերադրում, կապում է յենթակալին:

Վերցնենք յերկու նախադասություն. 1. Տերեվը դեղնեց,  
2. Տերեվը դեղին է: Առաջին նախադասության մեջ ստորո-  
գյալն է դեղնեց բառը, իսկ յերկրորդի մեջ՝ դեղին է բառերը:  
առաջին նախադասության ստորոգյալը (դեղնեց) մի բառով  
արտահայտում է և՛ այն հատկանիշը (դեղնելու գործողությու-  
նը), վոր ունի յենթական, և՛ այդ արտահայտած հատկանիշը  
վերադրում, կապում է յենթակալին:

Յերկրորդ նախադասության ստորոգյալը (դեղին է) կազմ-  
ված է յերկու առանձին բառերից (դեղին և է), վորոնցից մեկը  
(դեղին) արտահայտում է այն հատկանիշը (դեղին գույնը),  
վոր ունի յենթական, իսկ մյուսը (է) առաջին բառի արտահայ-  
տած հատկանիշը վերադրում, կապում է յենթակալին: Առաջին  
նախադասության դեղնեց ստորոգյալը միաժամանակ կատարում  
է այն յերկու պաշտոնները, վոր յերկրորդ նախադասության  
մեջ կատարում են դեղին և է բառերը միասին, ըստ վորում

<sup>1</sup> Այս նախադասության մեջ անսրոջ դերբայը յենթակալ յե (տես § 9, Ե.):

դեղին ածականը արտահայտում է միայն հատկանիշ, իսկ երայը այդ հատկանիշը վերագրում, կապում է յենթակային:

Հատկանիշ արտահայտել կարող են և՛ ածականը, և՛ թվականը, և՛ գոյականը, և՛ բայը, մինչդեռ յենթակային հատկանիշ վերագրել կարող են միայն բայերը: Քանի վոր բայը կարող է և՛ հատկանիշ արտահայտել, և՛ արտահայտած հատկանիշը յենթակային վերագրել, հետևաբար նա կարող է միայնակ հանդես գալ իբրև ստորոգյալ:

Հատկանիշը յենթակային վերագրելը կոչվում է ստորոգում: Ստորոգում կարող են կատարել միայն բայերը: Հատկանիշ արտահայտող և այդ հատկանիշը յենթակային ստորոգող բայը ինքնին ստորոգյալ է: Վերևի նախադասութան մեջ դեղինց բայը ստորոգյալ է, մինչդեռ յերկրորդ նախադասութան դեղին և ե բառերից վոչ մեկը, առանձին վերցրած, ստորոգյալ չէ: Այստեղ դեղին բառն արտահայտում է հատկանիշ, բայց ստորոգում չի կատարում, իսկ ե բայը ստորոգում է կատարում, բայց հատկանիշ չի արտահայտում: Ինդին և ե բառերը միասին կատարում են այն չերկու պաշտոնը, վոր դեղինց բառը կատարում է միայնակ: Ստորոգյալի յերկու պաշտոնը միաժամանակ կատարել կարող են միայն բայերը:

Միայն բայով արտահայտված ստորոգյալը կոչվում է պարզ ստորոգյալ:

Պարզ ստորոգյալը միշտ արտահայտվում է այնպիսի բայով, վորը ունի վորոշ նյութական բովանդակություն, ցույց է տալիս վորոշ հատկանիշ:

Որինակներ.

1. Վաչեն փոխադրվեց վեցերորդ դասարան.
2. Յես դասս լավ գիտեմ.
3. Աշակերտները կսովորեն հրաձգություն:

Այս նախադասությունների մեջ ընդգծված բառերը պարզ ստորոգյալներ են, վորովհետև նրանք և՛ հատկանիշ են արտահայտում, և՛ այդ հատկանիշը ստորոգում են (վերագրում) յենթակային: Նրանք փոխադրվելու, գիտենալու և սովորելու հատկանիշներն են արտահայտում և ստորոգում Վաչեն, յես և աշակերտները յենթակայիններին:

Պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել ինչպես բայի պարզ, ամանակներով, այնպես էլ բաղադրյալ ժամանակներով: Բայի բաղադրյալ ժամանակները, ինչպես արդեն ձևաբանությունից գիտենք, արտահայտվում են անկատար, վաղակատար, հարակատար կամ ապառնի դերբայով և ոժանդակ բայով:

### § 13. ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼ

Բայի բաղադրյալ ժամանակներով արտահայտված պարզ ստորոգյալից պետք է տարբերել այնպիսի ստորոգյալը, վորի ստորոգումը սովորաբար նույնպես արտահայտվում է ոժանդակ բայի միջոցով, այն տարբերությամբ, սակայն, վոր հատկանիշը արված է լինում վոչ թե դերբայի մեջ, այլ՝ վորևե դոչականի, ածականի կամ թվականի. որինակ՝

Սուրենը աշակերտ է.

Տերևը դեղին է.

Դուք բյուր եք.

Մենք միլիոն ենք:

Այս որինակների մեջ աշակերտ է, դեղին է, բյուր եք և միլիոն ենք ստորոգյալները պարզ ստորոգյալ չեն, նրանք միայն բայով չեն արտահայտված: Այս ստորոգյալներից յուրաքանչյուրը կազմված է ոժանդակ բայից (ե, եք, ենք) և գոյականից, ածականից, թվականից (աշակերտ, դեղին, բյուր, միլիոն):

Այն ստորոգյալը, վոր արտահայտվում է ոժանդակ բայով չեմ մի գոյականով, ածականով կամ թվականով, կոչվում է բաղադրյալ ստորոգյալ:

Բաղադրյալ ստորոգյալ կազմող բայը սովորաբար նյութական բովանդակություն չի ունենում, հատկանիշ չի արտահայտում, դրա համար էլ ստորոգյալ դառնալ չի կարող:

Բաղադրյալ ստորոգյալի մեջ հատկանիշն արտահայտվում է առանձին բառով, վորը լինում է գոյական, ածական կամ թվական:

Բաղադրյալ ստորոգյալ մաս կազմող յեմ ստորոգվող հասկանիցն արտահայտող բառերը կոչվում են ստորոգելիական վերադիր:

Վերևի նախադասությունների մեջ աշակերտ, դեղին,

բյուր և միլիոն բառերը ստորագելիական վերագրերն են:

Ստորագելիական վերագրի հետ սովորաբար լինում է մի դիմավոր բայ, վորը կատարում է ստորագումը:

Քաղաքայալ ստորագյալի մաս կազմող յեվ ստորագելիական վերագրից յեքթակափն ստորագող բայը կոչվում է հանգույց:

Գանի վոր բաղադրյալ ստորագյալի մեջ ստորագելիական վերագրերն և արտահայտում հատկանիշը, ապա հանգույցը հասկանիչ արտահայտել չի կարող: Իբրև հանգույց հանդես դալ կարող են միայն այնպիսի բայեր, վորոնք նյութական բովանդակութուն չունեն կամ չեն արտահայտում:

Ինքնուրույն նյութական բովանդակութունը չարտահայտող յեվ իբրեվ հանգույց հանգես յեկող բայերը կոչվում են վերացական բայեր:

Վերացական բայերը շատ սակավաթիվ են՝ դառնալ, լինել, համարել, թվալ, և այլն: Վերացական է նաև ոժանդակ բայը:

Յուրաքանչյուր բաղադրյալ ստորագյալ, ուրեմն, կազմված է լինում մի ստորագելիական վերագրից (գոյական, ածական, թվական) և մի հանգույցից (վերացական բայ):

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Յեղբայրս ուսանող ե .
2. Խավարի մեջ ծառը ինձ մարդ թվաց .
3. Դիլիջանը սանատորիայի լավ վայր է համարվում .
4. Յես հարվածային չեյի, բայց 5) այս տարի հարվածային դարձա .
6. Մենք հինգ ենք, իսկ 7) դուք չորս եք .
8. Այն որվանից դրա համար կղզին կոչվեց Ախթամար:

§ 14. ՎԵՐԱՅԱԿԱՆ ԲՍՑՈՎ ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ

Վերացական բայերը յերբեմն միայնակ կարող են դառնալ ստորագյալ՝ արտահայտելով վորեւ այլ բայի իմաստ: Այսպիսի դեպքերում նրանք դադարում են վերացական բայ լինելուց, այլևս ստորագելիական վերագրի չեն պահանջում և կազմում են պարզ ստորագյալ: Այսպես որինակ՝ յես դարձա հարվածային և յես դարձա տուն նախադասութուններից առաջինում դարձա

բայը վոչ թե ստորագյալ է, այլ՝ հանգույց և հարվածային վերագրի հետ է կազմում ստորագյալ, իսկ յերկրորդ նախադասութւան մեջ նույն դարձա բայը ստորագյալ է, ստորագելիական վերագրի չի պահանջում:

Այս յերկրորդ դեպքում դարձա (դառնալ) վերացական բայը գործածվում է վերադառնալ բայի նյութական իմաստով:

Վերացական բայով բաղադրյալ յեվ պարզ ստորագյալների որ ի ն ա կ ն ե ր .

- |  |   |
|--|---|
| <p>1. Վերացական բայով բաղադրյալ ստորագյալ</p> <p>ա) Յես դարձա հարվածային .</p> <p>բ) Նրանք ուսանող համարվեցին .</p> <p>գ) Ալեքսանդրապոլը լենինական կոչվեց .</p> <p>դ) Նա աշխատատեղ ե .</p> <p>ե) Ձուկը յերբեք չոր չի լինում:</p> | <p>2. Կույն բայով պարզ ստորագյալ</p> <p>ա) Յես դարձա տուն .</p> <p>բ) Փողոցի բոլոր տները համարվեցին .</p> <p>գ) Խնդրատուն ատյան կոչվեց .</p> <p>դ) Նա տանն է .</p> <p>ե) Ծուլ հարվածային չի լինում:</p> |
|--|---|

Յերկրորդ շարքի մեջ առաջին շարքի վերացական բայերը արտահայտում են նյութական վորող բովանդակութուն և միայնակ կազմում են ստորագյալ. դարձա գործածվում է վերադարձա, գնացի իմաստով, համարվեցին՝ հաշվվեցին իմաստով, կոչվեց՝ հրավիրվեց, կանչվեց իմաստով, և ոժանդակ բայը գործածվում է գտնվում է, կա բայի իմաստով, չի լինում՝ գոյութուն չի ունենում, չկա բայի իմաստով:

§ 15. ԶԵՂԶՎԱԾ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախադասութւան մեջ կարող է գեղջվել վոչ միայն յենութական, այլև ստորագյալը, ըստ վորում պարզ ստորագյալը գեղջվում է ամբողջովին, մինչդեռ բաղադրյալ ստորագյալը կարող է գեղջվել և՛ ամբողջովին, և՛ մասամբ (կամ միայն հանգույցը, կամ միայն վերագրի): «Հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին» արտահայտութւան մեջ գեղջված է «ասա՛» ստորագյալը (պետք է լինի «հասկացողին մին ասա,

չհասկացողին հազար ու մի'ն ասա): Նույն ձևով «Յես գնացի տուն, դու՛ դպրոց, իսկ Վահեն՛ կինո» արտահայտության մեջ զեղչված են «գնացիր» և «գնաց» ստորոգյալները:

Ե. Յն նախադասութիւնը, վորի ստորոգյալը ամբողջովին կամ մասամբ զեղչված է, բայց մտքից իմացվում է, քե ի՛նչ է անում կամ լինում յենթակէս, կոչվում է զեղչված ստորոգյալով նախադասութիւն:

Զեղչված ստորոգյալով նախադասութիւն կազմվում է սովորաբար հետեյալ զեպքերում.

Ա. յերբ տվյալ նախադասութիւնն ունի նո՛ւյն ստորոգյալը, ինչ վոր նրան նախադրող նախադասութիւնը:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Յես յերեկոյան ակումբ եմ գնալու, իսկ Սուրիկը՛ կինո (զեղչված է գնալու յե ստորոգյալը).

2. Մեկը քաղաքից ե յեկել, մեկը՛ գյուղից, սա՛ գործարանից, նա՛ կոլտնտեսութիւնից (չերեք անգամ զեղչված յեկել ե ստորոգյալը).

3. Հայրս ցերեկը գործարանում ե լինում, յերեկոյան՛ քանիքակում, գիշերը՛ տանը (չերկու անգամ զեղչված ե լինում ե ստորոգյալը):

Բ. Յերբ նույն յենթական ունի մի քանի ստորոգումներ, վերոնք իրար հետ կապված են ժամանակով, նպատակով յեվ այլն:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Մենք գոհ ենք մեր կյանքից, հպարտ՝ մեր գործով յեվ անպարտելի՛ մեր ուժով (պահպանված են հպարտ և անպարտելի ստորոգելիական վերադիրները, բայց յերկու անգամ զեղչված է նրանց ննք հանդուցը).

2. Ծիծեռնակը բուն ե շինում, յե՛վ շինում է, յե՛վ յերգում (զեղչված է յերգում ե ստորոգյալի ե հանդուցը).

Գ. Յերբ ստորոգյալը հարցի ձևով տրվել է հարցական նախադասության մեջ յեվ պատասխանի մեջ չի կրկնվում:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Այսոր դուք քա՛նի դաս ունեյիք.—Մենք հինգ դաս, իսկ չորրորդ դասարանը՛ չորս (զեղչված է մենք յենթակայի ունեյինք ստորոգյալը և դասարանը յենթակայի ունեք ստորոգյալը).

2. Յես դպրոցից եմ գալիս, իսկ դո՞ւ վորտեղից.—Իսկ յես՛ շրջագայութիւնից (զեղչված է դու յենթակայի գալիս ես ստորոգյալը, յես յենթակայի գալիս եմ ստորոգյալը):

Դ. Յերբ ստորոգյալը մտքից հասկացվում է.

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Հասկացողին մի՛ն, չհասկացողին՛ հազա՛ր ու մի՛ն (զեղչված է ասա).

2. Վորտեղ հաց՛ այնտեղ կաց (զեղչված է կա ստորոգյալը).

3. Մեկը՛ հա, մյուսը՛ չե, վերջը կուվեցին (զեղչված է ասաց ստորոգյալը):

## § 16. ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զեղչված ստորոգյալով նախադասութիւններից տարբերվում են այն նախադասութիւնները, վորոնք ստորոգում ընդհանրապես չունեն, թեև համադր են ստորոգյալով և յենթակայով նախադասութիւններին: Այսպիսի նախադասութիւնները սովորաբար ցանկութիւն, կամք, հրաման և կոչ են արտահայտում:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Բարձրացնե՛լ աշխատանքի արտադրողականութիւնը:

2. Պահպանե՛լ մաքրութիւն.

3. Մա՛հ պալատներին, խաղաղութիւն խողերին.

4. Կյանքի, մահի այս ամենի աղքատուղջում՝ հրակիզվող վոգիններին վողջո՛ւյն, վողջո՛ւյն.

5. Ավելի՛ աչալուրջ, ավելի՛ զգաստ:

Անդեմ նախադասութիւնները չունեն նաև յենթակա, թեպեա կարելի չի այդ նախադասութիւնները շքել և դարձնել յենթակայով ու ստորոգյալով նախադասութիւններ, որինակներ՝

1. Պետք է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը.

2. Պետք է պահպանել մաքրություն.

3. Մա՛հ լինի պալատներին, խաղաղություն լինի խուղերին.

4. Հրակեզվող վոզիններին վողջո՛ւն հասնի և այլն:

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

#### § 17. ՅԵՆԹԱԿԱՑԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Նախադասութեան գլխավոր անդամները՝ յենթական և ստորոգյալը՝ հաճախ բավարար չսփով պարզ և լրիվ չեն. արտահայտում նախադասութեան միտքը: Այդ միտքը լրացնելու, պարզելու համար գործածվում են յերկրորդական անդամներ կամ լրացումներ (§ 6): Յենթական և ստորոգյալը ունենում են սարբեր լրացումներ՝ միանգամայն տարբեր պաշտոններով: Յենթական կարող և ունենալ յերեք տիպի լրացում՝ վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, վորոնք զանազան կողմերից պարզարանում են յենթակայի էությունը: Վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ՝ կարող են ունենալ նախադասութեան այլ անդամներն ել, յեթե գոյական են կամ ունեն գոյական տառ:

#### § 18. ՎՈՐՈՇԻՉ

Յենթական կամ նախադասութեան այլ անդամի վորակը, վորախտությունը, չափը, բանակը ցույց տվող լրացումները կոչվում են վորոշիչ:

Նախադասութեան այն անդամը, վոր վորոշիչ ունի, կոչվում է վորոշյալ:

Վորոշիչը միշտ պատասխանում է ինչպիսի՞, վո՞ր և վո՞րքան հարցերին:

Որ ինակն եր.

1. կով աշակերտը ուսման ատճամբարտիկ է.
2. կոյանտանապին կյանքը ունենվոր և յերջանիկ կյանք է.
3. կենիկյան կամունխտական կուսակցությունն անպարտեի յն.

4. Տասնինգ տարի յն անցել Նոյեմբերյան հեղափոխութեանից:

Վորոշիչն արտահայտվում է՝

Ա. Վորեվե ածականով. որինակ՝ լավ տուն, նոր հյուրանոց, իմպերիալիստական պատերազմ, քաղաքացիական կռիվ.

Բ. Վորեվե ցուցական, վորակական, հարցական կամ այլ դերանվամբ. որինակ՝ այս գիրքը, այնպիսի մարդ, ինչպիսի՞ հերոս, վո՞ր դպրոցը.

Գ. Վորեվե դերբայով. որինակ՝ քնած յերևխա, վազող ձի, քննող հանձնաժողով:

Դ. Վորեվե մակերայով, վոր առնվում է իբրև ածական, որինակ՝ նրա ընավ չզգացվելը ինձ համբերությունից հանցապատեղ խտիվ կարգադրելը խորթ է, կրկին հիվանդանալը շատ ծանր նստեց նրան:

Ծանոթութուն. Մակերայն իբրև վորոշիչ գործածելը պահանջում է վորոշ հմտություն, այլապես ստեղծվում է տգեղ և ծանր վոճ: Մակերայն իբրև վորոշիչ կարելի չէ գործածել միայն գոյականաբար առնված գերբայների հետ: Միայն ձևեր են՝ ընավ լուծությունը, խտիվ կարգադրությունը, և այլն:

Ե. Վորեվե գոյականով, վոր կարող է դրվել ուղղական, սեռական, բացառական յեվ գործիական հոլովներով.

Ուղղական հոլովով գոյական վորոշի որինակներ.

1. Իշխան ձուկը Սևանում է աճում.
2. Թանգարանում ցուցադրված է մի վրակի բաժակ.
3. Նրա քար սիրտը ոլտի վափկի՞:

Սեռական հոլովով գոյական վորոշի որինակներ.

1. Յերեկ քարի կարկուտ յեկավ.
2. Մառույցի խուղը եսկիմոսի բնակարանն է.
3. Այս տարի սարի շուշան քիչ կար:

Բացառական հոլովով վորոշի որինակներ.

1. Կարմիր սատինից վզկապս կորել է.

2. Մարմարից թանաքամանը ցամաքել է.

3. Գնեցի ռետինից դրամապանակ:

Գործիական հոլովով վորոշի որինակներ.

1. Յուղով կարկանդակը սառեց.

2. Համով խորտիկը պատրաստ է.

3. Շեմքին յերեաց մորուքով մարդը:

§ 19. ՀԱՏԿԱՅՈՒՅԻՉ

Յեճքակալի կամ նախագասուրյան այլ անգամի պակասեցուցումը, հասկացումը, վերաբերումը կամ սերումը, ծագումը ցույց տալու լրացումները կոչվում են հասկացուցիչ:

Նախագասուրյան այն անգամը, վոր նախագացուցիչ ունի, կոչվում է հասկացյալ:

Հատկացուցիչը միշտ պատասխանում է ո՞ւմ և ինչի՞ հարցերին և դրվում է սեռական հոլովով:

Որինակներ.

1. Սուրիկի գիրքը մաքուր է.

2. Շողիկի ձայնը դյուրեկան է.

3. Պատերազմի հետևանքներն աղետաբեր են լինում աշխատախորթյան համար.

4. Պիոներների ճամբարները դաստիարակիչ են.

5. Լենինի գրքերը մեծ հոգացողությամբ են պահվում.

6. Մարքսի նկարները սեղանի վրա էյին:

Այս որինակների մեջ ընդգծված բառերը հատկացուցիչներ են: Հինգերորդ նախագասուրյան հատկացուցիչը կարող է ցույց տալ յերկու բան՝ ա) պատկանելութուն (Լենինի գնած կամ ունեցած գիրքը), բ) սերում (Լենինի գրած գիրքը), իսկ վեցերորդ նախագասուրյան հատկացուցիչը կարող է ցույց տալ յերեք բան՝ ա) պատկանելութուն (Մարքսի գնած նկարներ), բ) սերում (Մարքսի նկարած նկարներ) և գ) վերաբերում (Մարքսին ներկայացնող նկարներ):

Հասկացուցիչն արտահայտվում է՝

Ա. Վորեվե գոյականով (յեզակի կամ հոգնակի), որինակ քարի կտոր, գրքի շապիկ, գործերի շարան:

Բ. Վորեվե դերանվամբ (յեզակի կամ հոգնակի), որինակ՝ քո խոսքը չպետք է փոխվի, ո՞ւմ ձայնն է լսվում, սրանց առևնը շին է:

Գ. Վորեվե դերբայով, ածականով կամ այլ բառով, վոր առնված է իբրև գոյական, որինակ՝ գնալու ժամանակը հասել է, հարբածի ձայնը հեռվից ճանաչվում է, կապույտի և դեղինի խառնուրդը կանաչ է տալիս, շատի մայրը մնաց լալով, մեկի կեսը հավասար է յերկուսի քառորդին:

§ 20. ԲԱՅՍԱՅՈՒՅԻՉ

Յեճքակալի կամ նախագասուրյան այլ անգամի ով կամ ինչ յինչը արտահայտող լրացումները կոչվում են բացահայտիչ: Նախագասուրյան այն անգամը, վոր բացահայտիչ ունի, կոչվում է բացահայտյալ:

Բացահայտիչը սովորաբար դրվում է բացահայտյալից հետո և պատասխանում է այն հարցին, ինչ հարց վոր արվում է բացահայտյալին: Բացահայտիչը դրվում է այն հոլովով, ինչ հոլով վոր ունի բացահայտյալը:

Որինակներ.

Սուրենը՝ ընկերս կոմյերիտական է.

Հարցրեք Սուրենին՝ ընկերոջս.

Բոլորը գոհ են Սուրենից՝ ընկերոջիցս.

Ընկեր Ստալինը՝ պրոլետարիատի իմաստուն առաջնորդը, պիոներների բարեկամն է.

Մեր ջերմ վողջույնն ընկեր Ստալինին՝ պրոլետարիատի իմաստուն առաջնորդին.

Անճանաչելի յե դարձել Յերեանը՝ Հայաստանի մայրաքաղաքը:

Այս նախագասուրյունների մեջ ընդգծված բառերը՝ բացահայտիչները արտահայտում են, թե ով է Սուրենը (ընկերս), ընկ. Ստալինը (պրոլետարիատի առաջնորդը) և ինչ է Յերեանը (Հայաստանի մայրաքաղաքը):

Բացահայտիչը ավելի ճշտած, մանրամասնած կրկնությունն է բացահայտյալի: Բացահայտիչը կարող է արտահայտվել վորևէ

գոյականով, դերանվամբ և իբրև գոյական տնված ածականով, թվականով, դերբայով և այլն:

Բացահայտիչը բացահայտյալի հետ հաճախ կապվում է իբրև վորպես, ինչպես և այլ բառերով և այս դեպքում վորոշ սահմանափակում ձուցնում բացահայտյալի առման մեջ: Այս սահմանափակումն արտահայտվում է նրանով, վոր բացահայտյալը կամ վոչ ամբողջովին է գրսևորվում բացահայտի մեջ կամ վորոշ անխտանությամբ, թերահավատությամբ և արտահայտվում բացահայտի միջոցով:

Այն բացահայտիչը, վոր բացահայտյալի էես կապվում է վորպես, իբրև, ինչպես բառերով յեմ առնվում է սահմանափակումով, կոչվում է մասնական բացահայտիչ:

Որինակներ.

Սովորական բացահայտիչ

Մասնական բացահայտիչ

1. Արմիկը՝ դասարանի լավագույն աշակերտունին, պարգևատրվեց.
2. Յես դիմեցի նրան՝ մեր վարիչին.
3. Դուք՝ աշակերտներդ իրավամբ չերջանիկ եք:

1. Արմիկը վորպես դասարանի լավագույն աշակերտունի պարգևատրվեց.
2. Յես դիմեցի նրան իբրև մեր վարիչի.
3. Դուք իբրև աշակերտներ իրավամբ չերջանիկ եք:

Մասնական բացահայտիչը սովորական բացահայտիչից տարբերվում է նրանով, վոր

ա) սովորաբար հող չի առնում, այսինքն դեմքով չի համաձայնում իր բացահայտյալին (համեմատիր վերելի որինակները).

բ) նախադասության մեջ իր անփոփոխ տեղը չունի, այսինքն կարող է դրվել վոչ միայն բացահայտյալից հետո, այլև նրանից առաջ: Ըստ վորում բացահայտյալի յեմ մասնական բացահայտիչի միջով կարող են դրվել նախադասության այլ անդամներ: Այսպես որինակ, մինչդեռ սովորական բացահայտիչը բերված 1-ին որինակներում կարող է գործածվել միայն «Արմիկը՝ դասարանի լավագույն աշակերտունին պարգևատրվեց» ձևով, մասնական բացահայտիչը կարող է գործածվել նայեմ մի շարք այլ ձևերով՝ «Արմիկը վորպես

դասարանի լավագույն աշակերտունի պարգևատրվեց», «Արմիկը պարգևատրվեց վորպես դասարանի լավագույն աշակերտունի», «Վորպես դասարանի լավագույն աշակերտունի Արմիկը պարգևատրվեց»:

§ 21. ՍՏՈՐՈՂՅԱԼԻ ԼԲՆՈՒՄՆԵՐ

Ստորոգյալի լրացումները դրալի չափով տարբերվում են յենթակայի լրացումներից: Ստորոգյալը յեբեք չի կարող ունենալ վորոշիչ, հատկացուցիչ կամ բացահայտիչ: Այս լրացումները կարող են դրվել միայն ստորոգյալի հետ վերադրել վրա, յերբ նա գոյական է կամ ունի գոյական առում: Բուն ստորոգյալի լրացումները ցույց են տալիս ա) այն առարկաները, վորոնց հետ կապված է գործողությունը. բ) այն հանդամանքները, պարագաները, վորոնց հետ կապ ունի գործողությունը: Ըստ այդմ ել ստորոգյալի լրացումները բաժանվում են յերկու խմբի՝ ա) խնդիրներ և բ) պարագաներ:

Այն լրացումները, վոր ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկան, կոչվում են խնդիրներ:

Որինակներ.

Սուրիկը առամով կադին ջարդեց.  
Ինձ հայրիկից նամակ յեկավ:

Այս որինակների մեջ ընդգծված բառերը խնդիրներ են, վորովհետև նրանք ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաները:

Ծանոթություն. Յենթական չափաք է շիթիլ խնդրի հետ, քանի վոր յենթական վոչ թե գործողության հետ կապ ունեցող առարկան է, այլ գործողությունը կատարողը:

§ 22. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

Այն խնդիրը, վոր ցույց է տալիս գործողության անմիջական առարկան, այսինքն այն առարկան, վորի վրա յե անցնում յերակայի գործողությունը, կոչվում է ուղիղ խնդիր:

Ուղիղ խնդիր պահանջում են ներգործական և պատճառական բայերով արտահայտված ստորոգյալները, վորովհետև նրանք ցույց են տալիս այնպիսի գործողություն, վորի կատարման

համար անհրաժեշտ է մի վորեւ առարկա, որինակ՝ կառուցել (գործարան, դպրոց), կարդալ (գիրք, դաս), մոտեցնել (գրատախտակը, աթոռը): Այդ պատճառով էլ ներգործական և պատճառական բայով արտահայտված ստորոգյալները միշտ ունենում են ուղիղ խնդիր:

Ուղիղ խնդիրը ցույց է տալիս.

Ա. Այն առարկան (անձ, իր, յերևույթ), վորը գործողության անմիջական նյութն է կամ որչեկտր. որինակ՝

Յես տեսել եմ թիֆլիսը, Բագուն, Մոսկվան.

Սուրենը ծեծեց դուռը.

Ուսուցիչը դաս տվեց.

Նա կանչեց ինձ, քեզ յեւ Արամին:

Բ. Այն առարկան, վորը ներգործվում, ազդվում, փոփոխություն է կրում յենթակայից. որինակ՝

Յես կաղձել եմ իձ բոլոր գրքերը.

Սուրիկը փշրեց ապակին.

Բժիշկը նրան կատարելապես աուղջացրեց:

Գ. Այն առարկան, վոր ստեղծվում, արտադրվում և իջրեւ գործողության հետեւանք. որինակ՝

Նկարիչը մի սար նկարեց.

Մենք նամակը գրեցինք.

Լենինին պրոլետարիատն և ստեղծել.

Գործարանը արտադրում է լայն սպառման առարկաներ:

Ուղիղ խնդիրը պատասխանում է ո՞ւմ և ի՞նչ հարցերին և գրվում է միշտ հայցական հոլովով: Ուղիղ խնդիրը ում հարցին և պատասխանում այն ժամանակ, յերբ արտահայտում է վորեւ անձ (վորոշյալ և անորոշ առումով) յերբեմն նաև կենդանի կամ իր (վորոշյալ առումով): Այս դեպքում հայցական հոլովը ձևվում նման է լինում տրականին. որինակ՝

Յես տեսա Սուրենին.

Կանչի՞ր բժշկին, վորեւ բժշկի ճանաչում ես.

Նա իր շանը շատ է սիրում.

Մեր պառաված կովին մորթեցինք (վերջինս բարբառային ձև է):

Ուղիղ խնդիրը ինչ հարցին և պատասխանում այն ժամանակ, յերբ արտահայտում է իր, առարկա, յերևույթ (վորոշյալ և անորոշ), կենդանի (սովորաբար՝ անորոշ), յերբեմն նաև՝ անձ, վոր ունի իրալին առում: Այս դեպքում հայցական հոլովը ձևվում նման է լինում ուղղականին. որինակ՝

Մենք գիրք գնեցինք.

Դուք գրքերը լավ չեք պահում.

Յես դեռ ովկիանոս և փոթորիկ չեմ տեսել.

Պրոլետարիատն իր իմաստուն Ստալինն ունի.

Մենք լավ ուսուցիչներ ունենք.

Մարդկությունը մի Հոմերոս է ունեցիլ:

Ծանոթություն. վորոշ քերականներ հայցական հոլով չեն ընդունում և ուղղականի ձևով հայցականը համարում են ուղղական, իսկ տրականի ձևով հայցականը՝ տրական, վոր միանգամայն սխալ է:

### § 23. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Այն խնդիրները, վորոնք ցույց են տալիս գործողության հետ անուղղակի կապ ունեցող առարկաները, կոչվում են անուղղակի խնդիրներ:

Անուղղակի խնդիր կարող են ունենալ ինչպես ներգործական և պատճառական, այնպես էլ չհզոք և կրավորական բայերով արտահայտված ստորոգյալները:

Անուղղակի խնդիրները ցույց են տալիս

Ա. Այն առարկան, վորին ուղղվում կամ տրվում է մի բան: Այսպիսի անուղղակի խնդիրը գրվում է տրական հոլովով և կոչվում է մատուցման կամ հանգման անուղղակի խնդիր. որինակ՝

Սուրիկը մոտեցավ Լենինի կիսանդրուն.

Ջեռքս մեկնեցի քեզ.

Ուժեղներս ոգնում ենք թույլերին.

Յերեկոյան հասանք 507-րդ կիլոմետրին:

Ընդգծված բառերը մատուցման անուղղակի խնդիրներ են:

Բ. Այն առարկան, վորին քննում, ծագում կամ սկսվում է

գործողութիւնը: Այսպիսի անուղղակի խնդիրը դրվում է բացառական հոլովով (կամ կողմից բառի հետ) և կոչվում է անջատւան անուղղակի խնդիր՝ որինակ՝

Սուրիկից արտունջ չի լսվել:

Կոլտնտեսութիւնն սպասարկվում է ՄՏԿ-ի կողմից:

Մեր ուսուցիչները միշտ զոհ են մեզանից:

Նրա ձայնը խեղդվեց անուղղակի (կամ՝ արմուկի կողմից):

Ընդգծված բառերն անջատման անուղղակի խնդիրներ են:

Գ. Այն առարկան, վորի միջոցով կամ վորով կատարվում է, լինում է մի բան: Այսպիսի անուղղակի խնդիրը դրվում է գործիական հոլովով և կոչվում է միջոցի անուղղակի խնդիր՝ որինակ՝

Սեպը սեպով են հանում:

Ատամով չի կարելի ընկույզ կտրել:

Յես լավ եմ գրում մատիտով, իսկ դու՝ գրիչով:

Մենք պարծենում ենք մեր նվաճումներով:

Ընդգծված բառերը միջոցի անուղղակի խնդիրներ են:

#### § 24. ՊԱՐԱԳՐԱՆԵՐ

Այն լրացումները, վորոնք ցույց են տալիս գործողութայն հետ կապ ունեցող հանգամանքները, կոչվում են պարագաներ՝ որինակ՝ Սուրիկը վազելիս փողոցում ընկավ:

Առավոտյան գնում ելինք դպրոց:

Նա գնաց ընթերցարան գրքեր կարդալու:

Այս որինակների մեջ ընդգծված բառերը պարագաներ են, վորովհետև նրանք ցույց են տալիս գործողութայն հետ կապ ունեցող հանգամանքները: Փողոցում, դպրոց և ընթերցարան բառերը ցույց են տալիս գործողութայն տեղը, վազելիս և առավոտյան բառերը ցույց են տալիս գործողութայն ժամանակը, իսկ կարդալու բառը ցույց է տալիս գործողութայն նպատակը: Պարագաները խնդիրներից տարբերվում են նրանով, վոր ցույց են տալիս վոչ թե այն առարկաները, վոր կապված են գործողութայն հետ, այլ այն պայմանները, հանգամանքները, վորոնց մեջ կատարվում է գործողութայնը, այսինքն գործողութայն տեղը, ժամանակը, յեղանակը կամ ձևը, նպատակը, պատճառը:

չափը և հիմունքը: Այդ պատճառով էլ պարագաները կոչվում են՝ տեղի պարագա, ժամանակի պարագա, ձեւի պարագա, չափի պարագա, նպատակի պարագա, պատճառի պարագա և հիմունքի պարագա:

#### Տեղի պարագան ցույց է տալիս

Ա. Այն տեղը, վորտեղ կատարվում է գործողութայնը, տեղի պարագան այս դեպքում դրվում է ներդոյական կամ արական հոլովով:

Որինակներ.

1. Դպրոցում դիտութիւնն ենք ձեռք բերում (ներգ. հոլ.):

2. Արագածի կատարին կարմիր դրոշակ է ծածանվում

(ար. հոլ.):

3. Մերիկը տանը պարապում է (ար. հոլ.):

4. Մենք իՄՀՄ-ում ենք սպորում (ներգ. հոլ.):

Բ. Այն տեղը, վորտեղից սկսվում է գործողութայնը, տեղի պարագան այս դեպքում դրվում է բացառական հոլովով:

Որինակներ.

1. Եմման գյուղից է յեկել:

2. Ժամի յերկուսին դպրոցից դուրս յեկանք:

3. Ռադիոյով Մոսկվայից համերգներ ենք լսում:

Գ. Այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողութայնը, այս դեպքում տեղի պարագան դրվում է հայցական հոլովով:

Որինակներ.

1. Հայրիկն արդեն գնացել է գործարան, իսկ յես շատում եմ դպրոց:

2. Մանուկը ձեռքն ընկած բանը բերանն է տանում:

3. Ամառները գնում ենք ցամաք:

Դ. Այն տեղը, տարածութիւնը, վորի վրայով, միջով անցնում է մի բան. այս դեպքում տեղի պարագան դրվում է գործիական հոլովով:

Որինակներ.

1. Մեր փողոցով կոչուղի յե անցնում:

2. Մենք անցանք դաշտերով ու լեռներով:

3. Մեծ գետերով շոգենավեր են սուրում:

Փամանակի պարագան ցույց է տալիս

Ա. Այն ժամանակը, վորի ընթացքում կատարվում է գործողութունը, այս դեպքում ժամանակի պարագան դրվում է տրական, հայցական, գործիական կամ ներդոյական հոլովով:

Որինակներ.

1. Լուսաբացին նա բարձրացավ կախազան (տր. հոլ.):

2. Առավոտը ձյուն լեկավ (հայց. հոլ.):

3. Գիշերով հասանք գյուղ (գործ. հոլ.):

4. Մի ժամում կարում ենք վեց կիլոմետր (ներք. հոլ.):

Բ. Այն ժամանակը, վորից սկսվում է գործողութունը, ժամանակի պարագան այս դեպքում դրվում է բացառական հոլովով:

Որինակներ.

1. Գիշերվանից անձրև է մազում:

2. Անցյալ տարվանից յեզրայրս պիտներ են:

3. Յերբվանից ես հիշում այդ վոտանավորը:

Ձեզի պարագան ցույց է տալիս, թե ինչպե՛ս, ի՞նչ ձեվով է կատարվում գործողութունը, յեվ արտահայտվում է՝

Ա. Վորեվն մակըայով կամ իբրեվ մակըայ առնված ածականով, որինակ՝

Յես հագիվ լսեցի նրա ձայնը:

Ձերմորեն վաղջուռնում ենք ձեզ:

Սուրենը լավ է սահուն է կարգում:

Մենք միասին գնացինք, իսկ նա՝ մենակ:

Բ. Վորեվն գոյականով կամ այլ բառով, վոր դրվում է գործիական հոլովով, որինակ՝

Գիրեկտորը համբերությամբ լսեց նրան:

Յես վազելով հասա ընկերների:

Մենք խմբով ելինք դնում:

Ձափի պարագան ցույց է տալիս գործողության հետ կապված չափը, քանակը, որինակ՝

Յերկու անգամ գնացել էմ Բանգարան:

Նոր յերկաթուղին վեց կիլոմետր գցված է:

Նպասակի պարագան ցույց է տալիս գործողութունը կատարելու նպատակը յեվ արտահայտվում է կամ տրական հոլովով (նպատակի տրական), կամ համար կապով. որինակներ՝

Յես վազեցի հացի, իսկ Աբամը գնաց ջրի:

Բոլորիս ժողովի կանչեցին:

Մենք պայքարում ենք ավելի յերջանիկ կյանքի համար, Ինչի՞ համար է ողանավը:

Գործարանից պատգամավորութուն է յեկել մեր նիստին մասնակցելու և վողջունելու:

Ձահառի պարագան ցույց է տալիս գործողութունը կատարելու պատճառը, որինակներ՝

Գործալքության համար նրան սե տախտակի բարձրացրին:

Հիվանդության պատճառով յերեկ դպրոց չեկա:

Նա ուրախությունից իրեն կորցրեց:

Հիմունքի յեվ հակառակ հիմունքի պարագան ցույց է տալիս գործողութուն կատարելու հիմունքը, նախադրյալը յեվ այն հիմունքը, վորը խանգարիչ է հանդիսանում գործողության համար, որինակ՝

Աորաժնի կարգադրությամբ կատարվում է հակաքութեշային պատվաստում:

Գո խոստման համաձայն (կամ՝ ըստ քո խոստումի) այսօր պիտի վոտանավոր արտասանես:

Հակառակ նրա ջանքերին՝ գործը գլուխ չեկավ:

Ձնայած վատ յեղանակին մեծ բազմութուն էր հավաքվել հրապարակում:

§ 25. ԲԱԶՄԱԿԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Հաճախ միևնույն նախադասության մեջ նույն պաշտոնով հանդես են գալիս մեկից ավելի լրացումներ, վորոնք իրար նկատմամբ համազոր են և համարժեք: Այսպես, որինակ, մի բառի վրա կարող է դրվել մի քանի վորոշիչ կամ մի քանի հատուկ կացուցիչ կամ մի քանի բացահայտիչ, մի ստորոգյալը կարող է ունենալ մի քանի ուղիղ խնդիր, մի քանի տեղի պարագա և այլն:

Որինակներ.

1. Սուրիկը խանութում զննեց քուրք, մաշիս և ծայր (ընդհանրապես բառերը զննեց ստորագրալի ուղիղ խնդիրներն են. այս սրինակում մի ստորագրալն ունի 3 հատ ուղիղ խնդիր):

2. Պահպանեցի՛ք մաքրութուն սանքը, դպրոցում, փողոցում, քաղաքում և ամենուրեք (ընդհանրապես պահպանեցիք ստորագրալի տեղի պարագաներն են. այստեղ մի ստորագրալն ունի 5 հատ տեղի պարագա):

3. Թե՛ «Յնուտ», թե՛ «Մլմաս» և թե՛ «Քաջ Նազար» ուղերաները կործարակին Հայաստանի նվաճումներն են (այստեղ ուղերաները չենթական ունի 3 հատ վորոշիչ):

Նախադասության միեկնույն անդամի համագոր լացումները կոչվում են բազմակի լացումներ:

Նախադասության բազմակի լացումներն իրարից բաժանվում են ստորակետով կամ շաղկապով:

§ 26. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲՍՈՒՄ

Նախադասության մեջ կարող են լինել և այնպիսի բառեր, վորոնք ավյալ նախադասության անդամ չեն, թեև վերաբերում են այդ նախադասությանը և վորոշ յերանդ կամ զուսավորում են ապրիս նրան. որինակ՝

Սուրենը, իհարկե, արժանի չե հարվածախության.

Կոչեկալի տնտեսութունն, այո, անչափ առավելութուններ ունի անհատական տնտեսութունից.

Նա, անշուշտ, քո խոսքերից եր յեխում:

Այս նախադասությունների մեջ ընդգծված բառերը նախադասության անդամ չեն, բայց վորոշ յերանդ են ապրիս նախադասությանը, թեև նրա հետ վորեև ձևով կապված չեն:

Այն բառերը, վորոնք վորոշ յերանդ են ապրիս նախադասությանը, բայց չեն կապված նրա հետ իբրեվ նախադասության անդամ, կոչվում են միջանկյալ բառեր:

Միջանկյալ բառերը նախադասության մյուս անդամներից բաժանվում են ստորակետներով:

Վերևի նախադասությունների մեջ իհարկե, այո և անշուշտ բառերը միջանկյալ բառեր են:

§ 27. ՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն միջանկյալ բառերը, վորոնք խոսողի տամադրութունը չեվ գրացմունքն են արտահայտում, կոչվում են միջանկյալ բառեր կամ ձայնարկութուններ:

Որինակներ.

1. Վա՛հ, այդ դե՛ռ յես, Սուրեն (զարմանքի արտահայտություն):

2. Չա՛ն, շուտով դասերը կսկսվեն (ուրախության արտահայտություն):

3. Ա՛խ, մեր կյանքը ցավով անցավ (ախրության արտահայտություն):

Վերևի նախադասությունների մեջ ընդգծված բառերը միջանկյալ բառեր են:

Միջանկյալ բառերը նախադասության մյուս անդամներից բաժանվում են ստորակետներով և միշտ ունենում են բացականշան նշան:

§ 28. ԿՈՉԱԿԱՆՆԵՐ

Միջանկյալ բառերի նման՝ նախադասության անդամ չեն նաև այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե ում և ուղղված խոսքը, ում և ուղիղված խոսողը:

Որինակներ.

1. Հանգստացե՛ք, յերեխանն՛ր, հանգստացե՛ք:

2. Դու, Սուրեն՛ն, իզուր ես ինձ նախատում:

3. Ահա, ընկերներ, մեր քաղաքի պարժանքը:

Նախադասության կազմի մեջ չմտնող այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե ում և ուղղված խոսքը, կոչվում են կոչականներ:

Վերևի նախադասությունների մեջ ընդգծված բառերը կոչականներ են: Կոչականները նախադասության մյուս անդամներից բաժանվում են ստորակետներով և կրում են շեշտ:

Ծանոթություն 1. Յիրք վորեև նախադասության հետ արտահայտված կոչականը նույն նախադասության յենթակալի անունն է, չենթական հանախ գեղջվում է. որինակ՝

պրոլետարները բոլոր յերկրներն, միացե՞ք (գեղջված եւ միացե՞ք ստորոգյալի դուք չենթական, վորովհետեւ այդ դուք-ը պրոլետարներ կոչականն ե), Սուբեն, իզուր ես քնձ նախատում (գեղջված ե նախատում ես ստորոգյալի դու չենթական, վորովհետեւ այդ դու-ն Սուբեն կոչականն ե):

Ծանոթութիւն 2. Միջարկութիւնները ե կոչականները, իբրև նախադասութիւն մեջ պաշտոն չունեցող ե նախադասութիւն անդամների հետ չկապուող բառեր, չեն կարող ունենալ նաև վորևե հորով: Նրանք միշտ դրվում են իրենց անվանական ձևով, ե սխալ ե կոչականը ուղղական հորով (ուղղական-կոչական) համարելը, ինչպես անում են վորոշ քերականներ: Կոչականները չեն կարող նաև վորոշող ե դիմորոշ հոգեր ստանալ:

### Կ Ա Պ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### § 29. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախադասութիւն անդամներն իրար հետ կապակցվում են յերկու յեղանակով: Առաջին յեղանակն այն ե, յերբ նախադասութիւն մի անգամ դեմքով, թվով կամ հորովով համաձայնում ե մի ուրիշ անգամի:

Որինակներ.

1. Յես զնացի տուն (զնացի ստորոգյալը դեմքով ե թվով համաձայնել ե յես յենթակային, վորն ունի առաջին դեմք ե յեղակի թիվ):

2. Նրանք ուրախացան (ուրախացան ստորոգյալը դեմքով ե թվով համաձայնել ե նրանք յենթակային, վորն ունի յերրորդ դեմք ե հոգնակի թիվ):

3. Մենք՝ աշակերտներս սիրում ենք մեր ուսուցիչներին (աշակերտներս բացահայտիչը հորովով, թվով ե դեմքով համաձայնել ե մենք յենթակային, վորն առաջին դեմքի դերանունն ե հոգնակի թիվով ե ուղղական հորովով, բացահայտիչը դեմքով համաձայնել ե ս դիմորոշ հոգի շնորհիվ):

Նախադասութիւն անգամների համաձայնումը դեմքով, թվով յիվ հորովով կոչվում ե համաձայնութիւն:

Նախադասութիւն անգամների կապակցութիւն յերկրորդ յեղանակը նրանց դասավորութիւն հաստատուն կարգն ե նախադասութիւն մեջ:

Որինակ.

Մեր պիտներ Սուբենը զնաց տուն: Այս նախադասութիւն մեջ Սուբենը յենթական նախորդում ե զնաց ստորոգյալին, պիտներ վորոշիչը նախորդում ե Սուբենը վորոշչալին, մեր հատկացուցիչը նախորդում ե պիտներ վորոշիչին ե Սուբենը հատկացչալին, իսկ տուն տեղի պարագան հաջորդում ե զնաց ստորոգչալին: Ձի կարելի այս նախադասութիւն անգամների դասավորութիւնը փոփոխել հետեյալ ձևերով՝ Սուբենը պիտներ մեր զնաց տուն կամ պիտներ զնաց մեր տուն Սուբենը կամ մեր զնաց Սուբենը տուն պիտներ ե այլն:

Նախադասութիւն անգամների դասավորութիւնը ընդունւած կարգը կոչվում ե ցարգասութիւն:

#### § 30. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏ

Հայերենի շարադասութիւնը համեմատաբար ավելի ճկուն ե ե ազատ, քան այլ լեզուների շարադասութիւնը: Այսպես, որինակ, հայերենում միևնույն նախադասութիւնը կարելի յարտահայտել հետեյալ շարադասութիւններով՝ ա) մայրը սիրում ե աղջկան, բ) մայրը աղջկան սիրում ե, գ) մայրը աղջկան ե սիրում, դ) մայրն ե սիրում աղջկան, ե) աղջկան սիրում ե մայրը, զ) աղջկան մայրը սիրում ե, ի) աղջկան մայրն ե սիրում, ը) աղջկանն ե սիրում մայրը, թ) մայրն ե աղջկան սիրում, ժ) աղջկանն ե մայրը սիրում ե այլն:

Շարադասութիւն այսպիսի փոփոխութիւնից նախադասութիւն իմաստը կամ միտքը, ինչպես յերևում ե վերևի որինակներից, բնավ չի փոխվում, բոլոր տասն որինակների մեջ ել արտահայտված ե այն միտքը, վոր մայրը սիրում ե աղջկան: Սակայն այս տասն որինակներից յուրաքանչյուրի մեջ մտքի մի առանձին շեշտ ե արտահայտված: Այս շարադասութիւններից յուրաքանչյուրը կարող ե գործածվել միայն վորոշ տեղում, վորոշ նպատակով: Այսպես, որինակ, գ ե ը շարադասութիւնները կգործածվեն իբրև պատասխան հետեյալ հարցի՝ մայրը աղջ-

կան և սիրում, թե աղային. դ, թ և ժ շարադասությունները կգործածվեն իբրև պատասխան հետևյալ հարցի՝ մեյրն և աղջկան սիրում, թե աղջիկը մորը և այլն:

Շարադասության այս ձևունությունն ունեն նաև հարցա-կան նախադասությունները. որինակ՝ ա) դու տուն գնացել ես, բ) դու չես գնացել տուն, գ) տուն ես գնացել դու, դ) դու գնացել ես տուն, ե) դու տուն ես գնացել և այլն: Սրանց պատասխանները կլինի՝ ա) չես տուն գնացել եմ, բ) յես եմ գնացել տուն, գ) տուն եմ գնացել: Հարցական նախադասությունների մեջ մտքի շեշտը հարցական նշան ունեցող բառերի վրա չե ընկած, իսկ նրանց պատասխաններին մեջ՝ շեշտ ունեցող բառերի վրա:

Յուրաքանչյուր նախադասություն ունի յուր մտքի շեշտը, վորն ընկնում է նրա վորեւ անդամի վրա:

Նախադասության մեջ ցեօք կոչվում է քամաբանական ցեօք:

Նախադասության այնպիսի քամադասությունը, յերբ վորեւ անդամ իր սովորական ցեղից առաջ կամ յես ընկնելով՝ քամաբանական ցեօք է սսանում, կոչվում է քոչուն քամադասություն:

§ 31. ՅԵՆԹԱԿԱՅԻ ՅԵՎ ՍՏՈՐՈՒՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենում յենթական և ստորոգյալը դեմքով և թվով համաձայնում են, այսինքն ստորոգյալի դեմքը և թիվը համաձայնեցվում է յենթակալի դեմքին և թվին:

Ա. Յեզակի յենթակալի հետ դրվում է յեզակի ստորոգյալ, իսկ հոգնակի յենթակալի հետ՝ հոգնակի ստորոգյալ:

Ծանոթ թու թյուն. Մեկից ավելի յենթականեր (բազմակի յենթակա) ունեցող ընդհանուր ստորոգյալը նույնպես դրվում է հոգնակի:

Որինակներ.

1. Խավարը ցրվեց. արեզակը ծագեց. լույսը բացվեց: (Այս որինակներին մեջ յեզակի յենթականներն ունեն յեզակի ստորոգյալներ):

2. Ծաղիկները դեպի արևը դարձան. թուղուններն իրենց

ձուլողունն սկսեցին. մարդիկ շտապեցին աշխատանքի: (Այս որինակներին մեջ հոգնակի յենթականներն ունեն հոգնակի ստորոգյալներ):

3. Սուրենն ու Աշիկը գնացին դպրոց. Կիմիկը, Հրանտը և Վազգենը արածվայ նստեցին: (Այս որինակներին մեջ մեկից ավելի յենթականեր ունեցող ստորոգյալները դրված են հոգնակի):

Բ. Յերը յենթական անձնական դերանուն է, ստորոգյալը դեմքով համաձայնում է նրան:

Որինակներ.

1. Յես կարդում եմ, մենք կարդում ենք (1-ին դեմք):

2. Դու կարդում ես, դուք կարդում եք (2-րդ դեմք):

3. Նա գնաց, նրանք գնացին (3-րդ դեմք):

Գ. Յերը յենթական առաջին կամ յերկրորդ դեմքի դիմորոշ հոդ ունի, ստորոգյալը դեմքով համաձայնում է յենթակալին:

Որինակներ.

1. Գերազանցիկներս չենք մեծամտամ ում (1-ին դեմք):

2. Տեխնիկումյիներդ քերականությունն ավարտել եք (2-րդ դեմք):

Դ. Բոլոր գոյական յեվ իբրեւ գոյական առնված յենթականների ստորոգյալը, լինեն նրանք վորոշյալ, թե անորոշ, դրվում է յերրորդ դեմքով:

Որինակներ. գիրքը աշակերտի լավագույն ընկերն է, սատանա չկա, Վոդոպյանովը հալլենիքի հերոս դարձավ, չեւ Լյուսիկինցիները փրկվեցին:

Ե. Տարբեր դեմքի բազմակի յենթակա ունեցող ստորոգյալը դեմքով համաձայնում է միայն մեկին: Յեթե բազմակի յենթականներից մեկն ու մեկը առաջին դեմքի յե, յենթական անալաձան առաջին դեմքի պետք է լինի, իսկ յեթե յենթակաները միայն յերկրորդ և յերրորդ դեմքի յեն, ստորոգյալը պետք է դրվի յերկրորդ դեմքով:

**Որինակներ.**

1. Դու, Սուրբիկը և յես յերգում եյինք (ստորոգյալը դեմքով համաձայնում է միայն յես առաջին դեմքի յենթակային):

2. Դու և Սուրբիկը հոգնեցիք (ստորոգյալը դեմքով համաձայնում է միայն դու յերկրորդ դեմքի յենթակային):

Ձ. Հոգնակի յեվ բազմակի յենթակաների ստորոգելիական վերադիրը (յեթե ստորոգյալը բազադրյալ է), սովորաբար յեզակի չե դրվում: Յերբ հարկավոր է լինում առանձնապես շեշտել, վոր ստորոգելիական վերադիրը վերաբերում է յենթականերից յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին, այդ դեպքում վերադիրը դրվում է հոգնակի:

**Որինակներ.**

1. Մենք ծաղիկն ենք ծաղկունքի (հոգնակի յենթակայի հետ յեզակի վերադիր):

2. Նրանք դեռ յերեխա յեն (նույնպես).

3. Այս բոլոր ծաղիկները շուշան են (նույնպես).

4. Գալստյանը և Արծրունին մեր ուսուցիչներն են (բազմակի յենթակայի հետ հոգնակի վերադիր):

5. Նրանք հեղափոխության մարտիկներն են (հոգնակի յենթակայի հետ հոգնակի վերադիր):

Է. Բազմակի յենթակայի հետ դրվում է յեզակի ստորոգյալ նաև այն ժամանակ, յերբ յենթակաները համանիշ են կամ մի ընդհանուր միտք են պարունակում. որինակ՝ նրա ջանասիրությանը չափ ու սահման չկա, մեր յերկրից վողք ու կակախը վերացավ, դպրոցը կարգ ու կանոն մտավ, այնտեղ միշտ անձրեվ ու փոթորիկ է լինում:

Ը. Յեզակի յենթակայի հետ յերբեմն դրվում է հոգնակի ստորոգյալ. այդ լինում է այն դեպքերում, յերբ յենթական հավաքական անուն է, հավաքականի կամ հոգնակու մի մասը և կամ ունի մեկից բարձր թվական կամ սաստկական վորոշիչ:

**Որինակներ.**

1. Ժողովուրդն իրար անցան կամ ժողովի բազմութունն իրար անցան.

2. Խնդիրների մեծ մասը հեշտությամբ լուծվեցին.

3. Աշակերտների կեսը ճամբար գնացին.

4. Հինգ աշակերտ պարգեվատրվեցին:

Ստորոգյալի այսպիսի համաձայնութունը, վորը հաշվի չե անում յենթակայի վոչ թե ձևականորեն արտահայտված թիվը, այլ բովանդակության հոգնակիութունը, կոչվում է բակառութուն:

Ծանոթութուն. Բակառութունը մեր գրական լեզվին շատ հարագաստ չե, և նրանից պետք է խուսափել: Անհարագատ են նույնպես՝ յես քեզ հետ յեկանք, դու նրա հետ գնացիք ձևերը: Սրանց գրական ձևերն են՝ յես և դու յեկանք կամ յես քեզ հետ յեկա և դու և նա գնացիք կամ դու նրա հետ գնացիր:

**§ 32. ՅԵՆԹԱԿԱՅԻ ՅԵՎ ՍՏՈՐՈԳԵՍԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ**

Հայերենում յենթական, վորպես կանոն, դրվում է ստորոգյալից առաջ: Յերբ անհրաժեշտ է տրամաբանական շեշտը դնել յենթակայի վրա, այդ դեպքում յենթական ընկնում է ստորոգյալից հետո:

**Որինակներ.**

1. Մեր պարապմունքներն սկսվեցին սեպտեմբերի 1-ից (կանոնավոր շարադասութուն), սեպտեմբերի մեկից սկսվեցին մեր պարապմունքները (զրջուն շարադասութուն):

2. Գյուղի ջոջերը յեկան (սովորական շարադասութուն), յեկան գյուղի ջոջերը (զրջուն շարադասութուն):

3. Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ ... բազմել եյին մեր պապերն ու մեր հայրերը (զրջուն շարադասութուն):

Բազադրյալ ստորոգյալի, ինչպես և բազադրյալ ժամանակով արտահայտված պարզ ստորոգյալի հանդույցը (ոժանդակ կամ վերացական բայը) սովորաբար դրվում է ստորոգելիական վերադիրից կամ դերբայից հետո, իսկ զրջուն շարադասության մեջ նա առաջ է ընկնում. որինակ՝ նա աշակերտ է, նա գալու յե (սովորական շարադասութուն), նա յե աշակերտ, նա յե գալու (զրջուն շարադասութուն):

§ 33. ՎՈՐՈՇՉԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՅԱԼԻ ԿԱՊԱՅՑՈՒԹՅՈՒՆԸ

Վորոշիչը յեզվ վորոշայլը հայեհեցում չեմ համաձայնում վո՛չ քվով, վո՛չ դեմքով յեզվ վո՛չ էլ հոլովով: Մեկախ վորոշայլի դեմքից, քվից յեզվ հոլովից, վորոշիչը գրվում է իր անփոփոխ ձեզվով:

Որ ի ն ա կ ն եր .

1. Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ ... քեֆ էյին անում մեր պապերը (այստեղ ընկուզենու սեռական հոլովով վորոշայլի կանաչ և վիթխարի վորոշիչները չփոփոխված ածականներ են):

2. Քնած յերեխա, քնած յերեխայի, քնած յերեխային .. քնած յերեխաներ, քնած յերեխաների և այլն (այստեղ յերեխա վորոշայլի յեզակի և հոգնակի տարբեր հոլովների հետ գրվում է նույն քնած վորոշիչը՝ առանց վորեւե համաձայնության):

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն . Գրաբարում վորոշիչը հաճախ համաձայնում է վորոշայլին: Այդ կարելի չի դիտել գրաբարից աշխարհարարին անցած մի քանի դարձվածների մեջ. որինակ՝ մեծավ ուրախությամբ (գործիական հոլովով գրված ուրախություն վորոշայլի մեծ վորոշիչը նույնպես գործիական է), այսուամենայնիվ, այնուամենայնիվ, վորոնք բառացիորեն նշանակում են այսով ամենով, այնով ամենով:

Հայերենում վորոշիչը սովորաբար գրվում է իր վորոշայլից առաջ, թեպետ յերեւմ, մանավանդ բանաստեղծութունների մեջ, կարող է գրվել նաև վորոշայլից հետո:

Որ ի ն ա կ ն եր .

1. Մի նոր առավոտ, առավոտի պես և թարմ ուրի պես յերեացիր դու (ընդգծված մի, նոր և թարմ վորոշիչները իրենց առավոտ և ող վորոշայլներից առաջ են գրված):

2. Այն հին դաշտում կովում էյին ամբոխները խելագարված (հին վորոշիչը դաշտում վորոշայլից առաջ և գրված, իսկ խելագարված վորոշիչը ամբոխները վորոշայլից հետո):

Վորոշայլից հետո գրված վորոշիչը կոչվում է յեռագաս վորոշիչ:

Յեթե նախադասության մեջ վորոշիչները ընկնում են գոյականների արանքում, մաքի շփոթություն է առաջանում շնորհիվ այն հանգամանքի, վոր նույն վորոշիչները կարող են վերագրվել թե նախորդ գոյականին, թե հաջորդ գոյականին: Այսպես, որինակ՝ «պարզեցի կյանքս պարզ ու խնդագին հավիտենության» նախադասության մեջ պարզ ու խնդագին վորոշիչները կարելի չէ վերագրել և՛ կյանքս գոյականին համարելով այն վորոշայլ, և՛ հավիտենություն գոյականին՝ համարելով այն վորոշայլ: Առաջին դեպքում կստացվի «պարզ ու խնդագին կյանքս պարզեցի հավիտենության», իսկ յերկրորդ դեպքում՝ «կյանքս պարզեցի պարզ ու խնդագին հավիտենության»: Այսպիսի շփոթումից խուսափելու համար անհրաժեշտ է նախադասության մեջ վորոշիչն հաջորդող կամ նախորդող այն գոյականը (կամ գոյականի առում ունեցող մի այլ բառ), վորը սվյալ վորոշի վորոշայլը չէ, նրանից բաժանել բութով: Այս դեպքում մեր որինակը կարտահայտվի հետևյալ ձևով. ա) պարզեցի կյանքս՝ պարզ ու խնդագին հավիտենության, բ) պարզեցի կյանքս պարզ ու խնդագին՝ հավիտենության:

§ 34. ՀԱՏԿԱՅՑՈՒՅՉԻ ՅԵՎ ՀԱՏԿԱՅՑԱԼԻ ԿԱՊԱՅՑՈՒԹՅՈՒՆԸ

Հասկացուցիչը գրվում է միշտ սեռական հոլովով յեզվ իր հասկացայլից յերբեք չի կամաձայնում դեմքով, քվով կամ հոլովով:

Որինակ՝ Սուրենի և Արամի ընկերը, Սուրենի և Արամի ընկերները, Մ-ի և Ա-ի ընկերներից և այլն:

Հայերենում հատկացյալը հաճախ իր մեջ է առնում նաև հատկացուցչի արտահայտած իմաստը: Այդ լինում է այն դեպքերում, յերբ հատկացուցիչը յեզակի առաջին կամ յերկրորդ դեմքի անձնական դերանուն է: Նման դեպքերում հատկացուցչին փոխարինում են ս և դ ստացական հոգեբը:

Որ ի ն ա կ ն եր .

- 1. Իմ ընկերը Սուրենն է, ընկերս Սուրենն է.
  - 2. Քո առաջադիմությունն ինձ ուրախացնում է, առաջադիմությունդ ինձ ուրախացնում է:
- Ընկերս և առաջադիմությունդ բառերի մեջ հատկացու-

ցիչն ու հատկացյալը միասին են արտահայտված, մի բառում են միավորված: Այսպիսի հատկացյալը կոչվում է ստացական հատկացյալ:

Ստացական հատկացյալի հետ հատկացուցիչ գործածելն ավելորդ է և, ուրեմն, իմ ընկերս, քո առաջադիմությունդ ձեռքերը խոտելի յեն:

Ծանոթութուն. Հոգնակի առաջին, յերկրորդ և յերրորդ դեմքի դերանուններով արտահայտված հատկացուցիչները շատ սակավ անգամ են փոխարինվում հատկացյալի ստացական հոդով: Այսպիսի դեպքերում հատկացուցիչ հոգնակիութունն արտահայտվում է հատկացյալի վրա կրկնակի հոգնակի վերջավորութուն գնելով:

Որինակներ.

1. Շորերս = իմ շորերը, շորներս = մեր շորերը.
2. Տեղերդ = քո տեղերը, տեղներդ = ձեր տեղերը.
3. Տններք, սրտներք, շորներք = նրանց տները, նրանց սրտերը, նրանց շորերը:

Հոգնակի հատկացուցիչը ստացական հոդով փոխարինելը գրական լեզվի ձև չէ և տարածված է միայն բարբառներում:

Հայերենում հատկացուցիչը սովորաբար նախադաս և, այսինքն գրվում է հատկացյալից առաջ, իսկ չեթե նույն հատկացյալը միաժամանակ նախադաս վորոշիչներ ել ունի, ապա վորոշիչներն ընկնում են հատկացուցչի և հատկացյալի միջև. որինակ՝ Վե՛ր ավագ ընկեր Սուրենին ժամացույց նվիրեցինք, երա պարտիզան յեղբայրը սպանվել է կռվում:

Գեղարվեստական չերկերի մեջ, մանավանդ բանաստեղծությունների, հատկացուցիչը, ինչպես և վորոշիչը, հաճախ յետադաս է լինում, սակայն այս դեպքում ել վորոշիչներն ընկնում են հատկացուցչից հետո. որինակ՝ անի՛վ իմ, դարձի՛ր. մայր իմ անուշ ու անզին...

§ 35. ԲԱՅԱՀԱՅՏՁԻ ՅԵՎ ԲԱՅԱՀԱՅՏՅԱԼԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Բացահայտիչը դեմքով, թվով և հոլովով միշտ համաձայնում է իր բացահայտյալին, ըստ վորում, դեմքով համաձայնումը կատարվում է ս, դ և ն կամ ը գլխորդ հոգերի միջոցով: Առա-

ջին դեմքի բացահայտիչն առնում է ս, յերկրորդ դեմքինը՝ դ, իսկ յերրորդ դեմքի և վորոշյալ գոյականների բացահայտիչը՝ ը կամ ն դիմորդ հոգերը: Անորոշ գոյականների բացահայտիչը դիմորդ հոգ չի առնում:

Որինակներ.

1. Յես՝ պիոներս միշտ կարգապահ եմ. Մենք՝ աշակերտներս սոցմբցման մեջ ենք մտել (յես և մենք առաջին դեմքի բացահայտյալների պիոներս և աշակերտներս բացահայտիչները համաձայնած են դեմքով, թվով և հոլովով):

2. Բեզանից՝ ճուտիկիցդ, չեմ վախենում. ձեզ՝ առաջավորներիդ մեր վողջճւյնը (քեզից և ձեզ յերկրորդ դեմքի չեղակի և հոգնակի բացահայտյալների ճուտիկիցդ և առաջավորներիդ բացահայտիչները համաձայնած են դեմքով, թվով և հոլովով):

3. Տեսա նրան՝ նեզը պիոներին. նրանք՝ նեզը և սևամորթ պիոներները մեր հարազատներն են (յերրորդ դեմքի բացահայտիչները դեմքով, ինչպես և թվով ու հոլովով, համաձայնած են նրան և նրանք բացահայտյալներին):

4. Պատանի լենինյանների՝ պիոներների յերթն սկսվեց վերջապես գտնվեց մի մեխանիկ՝ գործից հասկացող մասնագետ (անորոշ գոյականների բացահայտիչները նույնպես անորոշ են):

Մասնական բացահայտիչը (տես § 20) դիմորդ հոգ սովորաբար չի ընդունում:

Սովորական բացահայտիչը միշտ գրվում է իր բացահայտյալից հետո, մինչդեռ մասնական բացահայտիչը կարող է գրվել կ' նախադաս, կ' վերջադաս, ըստ վորում, բացահայտյալի և մասնական բացահայտիչի միջև կարող են ընկնել նախադասության ուրիշ անդամներ:

Որինակներ՝ նրան վորպես ուսուցչի յես շատ եմ հարգում. նրան յես շատ եմ հարգում վորպես ուսուցչի. վորպես ուսուցչի յես շատ հարգում եմ նրան և այլն:

Սովորական բացահայտիչը իր բացահայտյալից զատվում և բուժով, վոր գրվում է բացահայտյալի վրա, իսկ մասնական բացահայտիչը յերբեմն բաժանվում է ստորակետով կամ նույնպես բուժով:

§ 36. ՀԱՌՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գոյականները, դերանունները և իբրև գոյական առնված այլ բառերը նախադասութեան մեջ իրենց ունեցած պաշտոնի համեմատ գրվում են այս կամ այն հոլովով: Գոյականների և գոյական առում ունեցող բառերի պաշտոնը նախադասութեան մեջ արտահայտվում է հոլովով: Մական հոլովների թիվը շատ սահմանափակ է, ունենք ընդամենը յոթ հոլով, մինչդեռ միևնույն բառը նախադասութեան մեջ կարող է հանդես գալ բազմաթիվ պաշտոններով: Դրա համար ել յուրաքանչյուր հոլով, իբր հիմնական կիրառութեանից բացի, ունի նաև յերկրորդական կիրառութեաններ: Հայերենի յոթ հոլովներից յերեքը (բացառական, գործիական և ներգոյական) ունեն իրենց մշտապես կայուն ձևերը և առանձին վերցրած ել ճանաչվում են իրենց վերջավորութեաններով (քարից — բացառական, քարով — գործիական, քարում — ներգոյական): Այդպես չեն սակայն մյուս չորս հոլովները, նրանք իրենց ձևով (վերջավորութեաններով) հաստատորեն չեն վորոշվում: Նրանցից սեռականը համարյա միշտ նման է տրականին, ուղղականն ու հայցականը և տրականն ու հայցականը հաճախ նման են լինում իրար: Այդ իսկ պատճառով անկարելի է վորոշել, թե ինչ հոլով են քար և քարի բառերը՝ ուղղակին, թե հայցական, սեռակին, թե տրական:

Քանի վոր հոլովը վոչ թե սոսկ ձև է, այլ վորոշ իմաստ և պաշտոն արտահայտող ձև, ուստի բառի հոլովը պետք է վորոշել նաեւ նրան, թե ինչ պաշտոն է արտահայտվում բառի տվյալ ձևով: Միանգամայն սխալ է, յերբ նախադասութեանից դուրս հարցնում են՝ ինչ հոլով է քարը, ինչ հոլով է ջրի բառը և այլն: Բառի հոլովը ճիշտ վորոշելու համար պետք է իմանալ նրա պաշտոնը նախադասութեան մեջ, ինչպես և այն, թե ինչ կիրառական նշանակութեաններ ունեն տարբեր հոլովները, այսինքն՝ ինչ պաշտոններ կարող են արտահայտվել այս կամ այն հոլովով:

Նախադասութեան մեջ յուրաքանչյուր հոլովի միջոցով արտահայտող պատճենները կոչվում են հոլովի կիրառական Գեանակութիւն կամ կիրառութիւն:

Յուրաքանչյուր հոլով ունի յուր տարբեր կիրառութեանները:

Ա. Ուղղական հոլովի կիրառութեանը.

Ուղղականը յենթակալի հոլովն է. հայերենում յենթական միշտ գրվում է ուղղական հոլովով, որինակ՝ քարը կտարվեց. ջրերը վաղում են կայտառ. մարդիկ մեծ գործ են կատարել. Լեւինը պրոլետարիատի մեծագուշն ուսուցիչն է:

Ուղղական հոլովով է գրվում նաև բաղադրյալ ստորոգյալի գոյական վերադիրը. որինակ՝ մարդը հասարակական կենդանի է, սա ծառի տերն է, սա վոչ թե տուն է, այլ խրճիթ, տանձենին և խնձորենին պողատու ծառեր են:

Բ. Սեռական հոլովի կիրառութեանը.

Սեռականը հատկացուցչի հոլովն է. հայերենում հատկացուցիչը միշտ սեռական հոլովով է գրվում. որինակ՝ Սուրիկի գիրքը միշտ մաքուր է. մեր դպրոցը որինակելի է. պրոլետարիատը համախմբված է Լեւինի և Ստալինի կուսակցութեան շուրջը:

Սեռական հոլովով յերբեմն գրվում է նաև գոյական վորոշիչը, վորն իսկապես հատկացուցիչ է, բայց վորոշիչ իմաստով գործածված. որինակ՝ քարի դար, բրոնզի դար (փոխանակ ասելու քարե, բրոնզե), նա աղջկա ձայն ունի, սա տանիքի թիթեղ է, դաշտի շուշանը սարի շուշանից տարբերվում է:

Ծանոթութիւն. Սեռականով վորոշի որինակները ազատ կերպով կարող են համարվել հատկացուցիչ (տես § 19):

Գ. Տրական հոլովի կիրառութեանը.

Տրականը մատուցման անուղղակի խնդրի հոլովն է. նրա հիմնական պաշտոնն է՝ ցույց տալ մատուցման՝ հանգման անուղղակի խնդիրը (տես § 23, Ա). որինակ՝ պիտեք Վանյա Մյատան մեծ ոգնութիւն ցույց տվեց մի ողանավի. յես մտացա Սուրիկին և նրան հանձնեցի իր գրեշը:

Տրական հոլովով կարող են արտահայտվել նաև տեղի, ժամանակի, նպատակի և չափի պարագաները. որինակներ՝ 1. Շեմքին պառկած էր մի շուն. 2. Գլխիս կոմունարկա յեմ դրել. 3. Յերեկոյան ժամի հինգին շարժվելու աղանջան տվեցին. 4. Մենք գնացինք ջրի. 5. Յեկել են զեկուցելու. 6. Հացի կլուն վաճառվում է ութսուն կոպեկի:

**Գ. Հայցական հոլովի կիրառութիւնը.**

Հայցականը ուղիղ խնդրի հոլովն է. հայերենում ուղիղ խնդիրը միշտ դրվում է հայցական հոլովով (տես § 22). որին նաև՝ յես հրատարակում տեսա յերթաւորներին. այս ժամին վոչ մի բժիշկ չես գտնի. մենք մեր դասերը վերջացրինք և այժմ շահմաթ ենք խաղում:

Հայցական հոլովով կարող են արտահայտուել նաև տեղի, ժամանակի և չափի պարագաները. որին նաև՝ կոլտնտեսականները դաշտ դուրս լեկան, յես տան առաջն եմ, իսկ դու՝ յետովը, այս տարի լավ բերք յեղավ, մի ժամում 200 կիլոմետր թռանք, գիրքն արժե մի ռուբլի:

**Ե. Բացառական հոլովի կիրառութիւնը.**

Բացառականը անջատման անուղղակի խնդրի հոլովն է. անջատման անուղղակի խնդիրը միշտ դրվում է բացառական հոլովով (տես § 23). որին նաև՝ մենք ֆրասիայի պիոններնից նամակ ստացանք, դու ինձնից իզուր ես դժգոհում, հացից թարմ հոտ և բուրում:

Բացառական հոլովով արտահայտուում են նաև հետևյալ պարագաները՝ տեղի, ժամանակի, պատճառի. որին նաև՝ դպրոցից ուղղակի գնում եմ տուն. Յրանսիայից նամակ ստացանք. նա առավոտովանից սպասում է. մեր ժողովրդի բարգավաճումն սկսվեց 1920 թվից, ուրախութիւնից լաց յեղավ. այդ բոլորը նրա անհամբերութիւնից եր:

**Զ. Գործիական հոլովի կիրառութիւնը.**

Գործիականը միջոցի անուղղակի խնդրի հոլովն է. միջոցի անուղղակի խնդիրը միշտ դրվում է գործիական հոլովով (տես § 23). որին նաև՝ գնացքով, ավտոմոբիլով և սավառնակով յերթեկեկում են, իսկ մատիտով, գրիչով և կավիճով դրում են. անձրեկով ինձ չես վախեցնի. քարը փայտով չի կոտրվի:

Գործիական հոլովով արտահայտուում են նաև հետևյալ պարագաները՝ տեղի, ժամանակի, ձևի և չափի. որին նաև՝ անցանք դաշտերով և լեռներով. յեղբայրս յերեք ամսով գործուղվեց Մոսկվա. ով տարով է մեծանում, նա որով էր մեծանում. նա ինձ քրքիչների ներկայութիւնը նախատեց, յես նրա հանդիմանու-

թյունը սիրով ընդունեցի. յՅրբ եր մեր գյուղացին փթերով յուղ և պարկերով ցորեն ունեցել իրեն համար, գիրքը վաճառվում է մի ռուբլով:

**Է. Ներգոյական հոլովի կիրառութիւնը.**

Ներգոյականը տեղի պարագայի հոլովն է. տեղի պարագան ներգոյական հոլովով է դրվում այն ժամանակ, յերբ ցույց է աւելիս այն տեղը, վորտեղ կա, լինում է մի բան. որին նաև՝ սիրտը կրծքի խոռոչումն է. նա իր որն անց է կացում դպրոցում և ընթերցարանում. ինչու յես դասարանում մնացել: Ներգոյական հոլովով արտահայտուում է նաև ժամանակի պարագան. որին նաև՝ մի որում նա մի գիրք կարդաց, վեցորդակում հայերենին հատկացված է 5 դաս, տաս րոպեյում տուն հասանք:

**§ 37. ԿԱՊԵՐ ՅԵՎ ԿԱՊԱԿԱՆ ԲՍԱՌԵՐ**

Նախադասութիւն անդամների պաշտոնները միայն հոլովներով չեն արտահայտուում: Ընդամենը յոթ հոլով, վորքան էլ նրանք բազմաթիւ կիրառութիւններ ունենան, բազմական չեն անհրաժեշտ բոլոր պաշտոններն արտահայտելու համար: Ահա այս թերին լրացնում են այնպիսի բառեր, վորոնք իրենք նախադասութիւն մեջ պաշտոն չունեն, նախադասութիւն անդամ չեն հանդիսանում, բայց դրվելով մի այլ բառի վրա՝ ցույց են տալիս նրա պաշտոնը:

**Որինակ.**

Մենք նայում ենք միշտ դեպի առաջ.

Ըստ Դարվինի տեսութիւնի մարդիկ առաջացել են մարդաման կապիկներից.

Սուրենը սուժեց Արամի յերեսից:

Այս նախադասութիւնների մեջ դեպի, ըստ և յերեսից բառերը նախադասութիւն անդամ չեն, նրանք միայն ցույց են տալիս առաջ, Դարվինի տեսութիւնի և Արամի բառերի պաշտոնները, մի բան, վոր կարելի յեր կատարել նաև հոլովական ձևերով: Այսպես որին նաև՝ դեպի առաջ ասելու փոխարեն կարելի յէ ասել՝ առաջ (հայցական հոլով), ըստ տեսութիւնի ասելու փոխարեն կարելի յէ ասել՝ տեսութիւնը (գործիական հոլով),

Արամի յերեսից տսելու փոխարեն կարելի չէ ստել Արամից (բացառական հոլով):

Այն բառերը, վարոնքն ցախազատութեան այս կամ այն անգամի վրա դրվելով ցույց են տալիս նրա պատճառը ցախազատութեան մեջ, կոչվում են կապեր:

Վերևի նախադասութեաններին մեջ դեպի, ըստ և յերեսից բառերը կապեր են: Կապերը դուրի են ինքնուրույն նյութական բովանդակութեանից (վորեւ իր, անձ, հատկանիշ չեն ցույց տալիս) և կատարում են համարյա նույն դերը, ինչ վոր հոլովական վերջավորութեանները, այն տարբերութեամբ միայն, վոր կապերը վոչ թե վերջավորութեաններ են, այլ ինքնուրույն բառեր:

Կապերը առանձին վերցրած ևս ինքնուրույն նյութական բովանդակութեան չունեն, որինակ՝ ըստ, ընդ, դեպի, ի և այլն, սակայն վորոչ դեպքերում ինքնուրույն նյութական բովանդակութեան ունեցող այս կամ այն բանն էլ (որ՝ գոյական) կարող է դառնալ կապ: Այդպես որինակ՝ Սուրենը տուժեց Արամի յերեսից նախադասութեան մեջ յերեսից բառը գոյական է, վորը, սակայն, այս նախադասութեան մեջ այլևս յերես՝ դեմք չի նշանակում. նա կորցրել է իր նյութական բովանդակութեանը և այստեղ հանդես է գալիս վորպես կապ՝ ցույց տալով Արամ բառի պաշտոնը:

Սուրենը Արամի յերեսից արցունքը մաքրեց նախադասութեան մեջ յերեսից բառը նախադասութեան անդամ է (տեղի պարագա), պահպանում է իր նյութական բովանդակութեանը (յերես, դեմք), մինչդեռ Սուրենը տուժեց Արամի յերեսից նախադասութեան մեջ յերեսից բառը նախադասութեան անդամ չի և այլևս չի նշանակում յերես, դեմք:

Այն բառը, վորի պատճառը ցախազատութեան մեջ կապով է արտահայտվում, կոչվում է կապի խնդիր:

Վերևի որինակների մեջ առաջ բառը դեպի կապի խնդիրն է, տեսութեան բառը ըստ կապի խնդիրն է, Արամի բառը յերեսից կապի խնդիրն է: Կապը կամ կապի խնդիրը առանձին առանձին չեն կարող հանդես գալ վորպես նախադասութեան անդամներ: Կապը և իր խնդիրը միասին հանդիսանում են նախադասութեան մի անդամ:

Կապերը լինում են յերես տեսակի՝ ա) խկական կապեր, բ) անխկական կապեր և գ) կապական բառեր:

Ա. Խկական կապերը չեն կարող նյութական բովանդակութեան ունենալ և ինքնուրույն գործածվել: Խկական կապերը նախադասութեաններն ու յետադասութեաններն են (նախդիրներ և յետադիրներ):

Որինակներ.

Հայտնվում է ի վերտութեան աշակերտութեան.

Ըստ նրա տեսլու դուք ձամբարից եք գալիս.

Մինչև յերեսի գյուղ կհասնենք.

Այս գիրքն ինձ համար դանձ է.

Մենք գնում էյինք սարն իվեր:

Հայերենի խկական կապերն են՝ ի, ց, առ, ըստ, ընդ, դեպի, մինչև, բացի, առանց, համար, հանդերձ, իվեր:

Ծանոթութեան. ի կապը ձայնավորով սկսվող բառերից առաջ հաճախ միանում է նրանց և գրվում հ. որինակ՝ ի անպատրաստից—հանպատրաստից, ի ոգուտ—հոգուտ, ի առաջ—հառաջ, ի անձինս—հանձինս, ի ամոթ—համոթ և այլն: Այս ձևերը գրաբարից են անցել աշխարհաբարին և առաջ գրվում էյին յով (յոգուտ, յառաջ, յանպատրաստից, յանձինս) և գրաբարի գործուն շրջանում արտասանվում էյին՝ յոգուտ, յառաջ, յանպատրաստից, յանձինս: Հետագայում նրանք արտասանվեցին հոգուտ, հառաջ, հանպատրաստից, հանձինս:

Բ. Անխկական կապերն են դեմ, մոտ, վրա, հետ, պես, չափ գոյականներն այն կապակցութեաններում, յերես նրանք գրվում են արական հոլովով կապի խնդրի վրա և զրկվելով իրենց նյութական բովանդակութեանից՝ չեն կարող հոլովվել և հոգ ստանալ: Վերցնենք, որինակ՝ չափ բառը հետևյալ կապակցութեաններին մեջ՝ մեր չափը ձեր չափին չի համապատասխանում. դու ամեն բան քո չափով ես չափում կամ դատում: Այս որինակների մեջ չափ բառը գոյական է, դրված է մեր, ձեր, քո սեռական հոլովով հատկացուցիչներին վրա, հոգ է ընդունում (չափը, չափին) և հոլովվում է (չափը, չափին, չափով): Այս բոլոր դեպքերում չափ բառը նախադասութեան անդամ է և

պահպանում ե յուր նյութական բովանդակութեանը: Վերցնենք նույն չափ բառը հետևյալ կապակցութեաների մեջ՝ նա մեզ չափ աշխատասեր չե, ինձ չափ գրքեր ո՞վ ունի: Այս որինակների մեջ չափ բառը այլևս գոյական չե, դրված ե մեզ, ինձ կապի խնդիրների վրա և նրանց հետ միասին ե հանդես գալիս, իբրև նախադասութեան անդամ (մեզ չափ, ինձ չափ), հոգ չի կարող ընդունել (մեզ չափը, ինձ չափս և այլն), և չի կարող հոլովվել (մեզ չափով, մեզ չափից, ինձ չափում և այլն):

Անիսկական բառերը, յերբ դրվում են սեռական հոլովով գոյականների վրա, դիտվում են իբրև ինքնուրույն գոյական և հոլովվում ու հոգ են ստանում: Այսպիսի դեպքերում սեռական հոլովով բառը նրանց համար հատկացուցիչ ե հանդիսանում և վոչ թե կապի խնդիր, իսկ անիսկական կապերը դառնում են հատկացյալ:

Անիսկական կապերի կապային առման որինակներ.

Ինձ մոտ գերմաներեն գիրք կարդացին.

Նա ճիշտ քեզ պես ե խոսում.

Նրանք մեզ չափ չեն սովորել.

Մեզ վրա վոչ վոք չի կարող խոսել:

Անիսկական կապերի հատկացյալի առման որինակներ.

Իմ մոտից, իմ մոտով, մի գերմանացի անցավ. Մեր չափը մեարական ե, մեր վրայի շորը մաքուր ե:

Գ. Կապական բառեր կոչվում են այն բառերը, (գոյական, ածական և այլն), վորոնք միայնակ չեն հանդես գալիս իբրև նախադասութեան անդամ, այլ դրվելով հոլովված վորեք գոյականի վրա՝ նրա հետ միասին կազմում են նախադասութեան մի անդամ: Իբրև կապական բառ գործածվում են հետևյալները՝ պատճառով, առթիվ (առիթով), շնորհիվ, նկատմամբ, վերաբերմամբ (սրանք գրաբարում գործիական հոլովներ են), ձեռքից, ձեռքով, յերեսից, փոխանակ, փոխարեն, տեղը (տեղակ), համաձայն, համեմատ, հետո, առաջ և այլն:

Որինակներ.

Անձրեվների պատճառով անից դուրս չեմ գալիս:

Թանգագին ընկերների ավարտման առթիվ հալաքույթ ունեցանք:

Նրա նկատմամբ (նրա վերաբերմամբ) խոսք չեղավ:

Դարդի ձեռքից սարերն ընկավ:

Լրաբերի ձեռքով նրան ասացի, վոր դա.

Փոխանակ լալու (լալու փոխարեն) այժմ խնդում ենք.

Սուրենի տեղը (Սուրենի տեղակ) Արամս ե պատասխանում.

Նրա խոսքերի համաձայն, դու միջնակարգավարտ ես.

Ուժերի համեմատ պեսք ե աշխատել:

Սուրենից հետո և Սուրենից առաջ ուրիշները խոսեցին:

Իբրև կապական բառեր գործածվում են նաև տեղի անունները, յերբ դրվելով սեռական հոլովով գոյականի կամ դերանվան վրա՝ հոգ չեն ընդունում:

Իմ առաջ բացվեց մի գեղեցիկ տեսարան.

Մարի տակ մի քիչ հանգստացանք.

Տան մեզ մանկական սենյակ կահավորեցինք:

Մեր դեմ ե ամբողջ հին աշխարհը:

## ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### § 38. ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասութեան կազմի մեջ մտնող պարզ նախադասութեանները (տես § 4) իրար նկատմամբ կարող են ունենալ յերկու տեսակի հարաբերութեան՝ ա) համադասական և բ) ստորադասական:

Այն բարդ նախադասութեանը, վորի կազմի մեջ մտնող պարզ նախադասութեանները իրար համադր են յեվ իրար միտք չեն լրացնում, կոչվում է բարդ համադասական նախադասութեան:

Որինակներ.

1. Պարզ գիշեր ե, յերկինքը ջինջ ե ու կայուտակ.

2. Քամին հետզհետե սաստկացավ, յերկինքը ծածկվեց թուխ ամպերով յեվ փոթորիկը պայթեց:

Այս որինակները բարդ համադասական նախադասութեաններ են, վորովհետե նրանց կազմի մեջ մտնող նախադասութեաններն իրարից կախում չունեն, իրար միտք չեն լրացնում և համադր են իրար:

Այն բարդ նախադասութեանը, վորի կազմի մեջ մտնող նախադասութեաններից մեկը կախված է նույն կազմի մեջ մտնող մի ուրիշ նախադասութեանից յեվ լրացնում է նրա միտքը, կոչվում է բարդ ստորադասական նախադասութեան:

Որինակներ.

1. Փոթորիկը, վոր մի ժամ առաջ աշխարհի եր կործանում, դադարեց:

2. Յես չեմ կարող թատրոն գնալ, վորովհետեվ դաս պիտի պատրաստեմ:

Այս բարդ նախադասութեաններից յուրաքանչյուրն իր կազմում ունի յերկու պարզ նախադասութեան:

Փոթորիկը դադարեց և վոր մի ժամ առաջ աշխարհի եր կործանում կազմում են առաջին բարդ նախադասութեանը, իսկ յես չեմ կարող թատրոն գնալ և վորովհետեվ դաս պիտի սովորեմ նախադասութեանները կազմում են յերկրորդ բարդ նախադասութեանը: Սրանցից փոթորիկը դադարեց և յես չեմ կարող թատրոն գնալ նախադասութեանները անկախ են, կարող են գործածվել նաև միայնակ, առանց վոր մի ժամ առաջ աշխարհի եր կործանում և վորովհետեվ դաս պիտի սովորեմ նախադասութեանների, մինչդեռ վերջին յերկու նախադասութեանները անկախ չեն և չեն կարող գործածվել միայնակ: Իսկ նրանք անկախ չեն և չեն կարող միայնակ գործածվել այն պատճառով, վոր կախված են մյուս յերկու նախադասութեաններից և լրացնում են նրանց միտքը: Վոր մի ժամ առաջ աշխարհի եր կործանում նախադասութեանը լրացնում է փոթորիկը դադարեց նախադասութեանի միտքը, ցույց է տալիս, թե ինչպիսի՝ փոթորիկ դադարեց և փոթորիկը յենթակաջի վորոշչի դեր է կատարում: Յերկրորդ որինակի մեջ վորովհետեվ դաս պիտի սովորեմ նախադասութեանը ցույց է տալիս, թե ինչո՞ւ չեմ կարող թատրոն գնալ և պատճառի պարագայի դեր է կատարում:

Բարդ ստորադասական նախադասութեան կազմի մեջ մտնող այն նախադասութեանը, վորի վորեվիցե անդամն արտահայտված է առանձին նախադասութեամբ, կոչվում է գլխավոր նախադասութեան:

Փոթորիկը ... դադարեց և յես չեմ կարող թատրոն գնալ... նախադասութեանները գլխավոր նախադասութեաններն են, վորովհետե առաջինի փոթորիկը յենթակաջի վորոշչի արտահայտված է վոր մի ժամ առաջ աշխարհի եր կործանում առանձին նախադասութեամբ, իսկ յերկրորդի չեմ կարող գնալ ստորոգյալի պատճառի պարագայն արտահայտված և վորովհետեվ դաս պիտի պատրաստեմ առանձին նախադասութեամբ:

Բարդ ստորադասական նախադասութեան կազմի մեջ մտնող գլխավոր նախադասութեան վորեվն անդամին փոխարինող

ճախագասուքյուճճները կոչվում են յերկրորդական ճախագասուքյուճճներ:

Վար մի ժամ առաջ աշխարհ եր կործանում և վորովհետեւ դաս պիտի պատրաստում նախադասությունները յերկրորդական են, վորովհետեւ փոթորիկը դադարեց և յես չեմ կարող թատրոն գնալ գլխավոր նախադասությունները վորոշչին և պատնառի պարագային են փոխարինում:

§ 39. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարդ համադասական նախադասության կազմի մեջ կարող են լինել յերկու և ավելի համադոր նախադասություններ:

Որինակ.

(1) Սուրենը յերեկ քննվեց, (2) իսկ յես այսոր եմ քնընվում.

(1) Մթնեց, (2) ծերունին վեր կացավ, (3) մենք հետեւվեցինք նրան:

Բարդ համադասական ճախագասուքյան կազմի մեջ մըցուցող համագոր ճախագասուքյուճճները կոչվում են համադաս ճախագասուքյուճճներ:

Վերևի որինակներում թվանշաններով իրարից զատված նախադասությունները համադաս նախադասություններ են:

Համադաս նախադասությունները իրարից զատվում են ստորակետներով կամ շաղկապներով:

Առանց շաղկապի կապակցված համադաս նախադասությունները շատ գործածական են բանաստեղծական նկարագրությունները մեջ: Ահա այդպիսի մի որինակ՝

- (1) Ծագում ե մանուկ արեւիլը զարնան կովկաս լեռների ճյուղի պաանեշից,
- (2) Զարթնում են մեկ-մեկ սարերն անման Ձմռան անվրդով քնի մշուշեց.
- (3) Ահա կալվարի վիթխարի ուսին Բազմում ե արիին թարմացած ուժով,
- (4) Մարեր ու ձորեր իրար յերեսին Նայում են, ժպտում ամպի մշուշով...

§ 40. ՄԻՍՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յերը համադաս նախադասություններն ունեն միևնույն յենթական, բայց տարբեր ստորոգյալներ, կամ տարբեր յենթականներ, բայց միևնույն ստորոգյալը, նրանք հաճախ միանում են և արտահայտվում մի նախադասությամբ: Այսպիսով ստացվում են բազմակի յենթականերով կամ բազմակի ստորոգյալներով նախադասություններ: Այսպես, որինակ՝ Սուրենը դաս ե պատրաստում և Աշիկը դաս ե պատրաստում համադաս յերկու նախադասությունները, վոր ունեն մի ընդհանուր ստորոգյալ, կարող են արտահայտվել Սուրենը յեւ Աշիկը դաս են պատրաստում մի նախադասությամբ, վորն ունի բազմակի յենթակա (Սուրենը և Աշիկը): Նույն ձևով՝ Սուրենը վեր կացավ և Սուրենը դաս պատասխանեց նույն յենթական, բայց տարբեր ստորոգյալներ ունեցող համադաս նախադասությունները կարող են արտահայտվել Սուրենը վեր կացավ յեւ դաս պատասխանեց մի նախադասությամբ, վորն ունի բազմակի ստորոգյալ: Այս որինակները մեջ համադաս նախադասությունները ընդհանուր ստորոգյալներով կամ ընդհանուր յենթականերով միավորվում են և արտահայտվում իբրև մի նախադասություն:

Բազմակի յեմբականերով կամ բազմակի ստորոգյալներով միավորված ճախագասուքյուճճները կոչվում են միավորյալ ճախագասուքյուճճ:

Որինակ.

Մարեր ու ձորեր իրար յերեսին Նայում են, ժպտում ամպի մշուշով...

Այս նախադասությունը միավորյալ ե, ունի բազմակի յենթակա (սարեր ու ձորեր) և բազմակի ստորոգյալ (նայում են, ժպտում): Յերկրորդ ստորոգյալի են սժանդակ բայը զեղչված ե:

§ 41. ՀԱՄԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՉԵՂՉՈՒՄԸ

Համադաս նախադասություններից մեկի կամ մի քանիսի մեջ հաճախ զեղչվում ե այս կամ այն անդամը, ըստ վորում զեղչվել կարող են վոչ միայն յերկրորդական անդամները, այլև՝

ձեռնարկն ու ստորագրելը Սյուպիսի դեպքերում ամենից հա-  
յախ դեղչվում և ոժանդակ բայը կամ հանգույցը:

Ծանոթութիւն. Յեթե զեղչվող ստորագրալը բազի  
ժխտական ձևն է, զեղչված ստորագրալով համադաս նախա-  
դասութեան մեջ հաճախ նրան փոխարինում և վոչ բառը:

Որինակներ.

1. Յես այդ բանաստեղծութիւնը մի բանի անգամ եմ  
կարդացել, նույնիսկ անգիր արել յեվ դպրոցում արտասանել  
(զեղչված և եմ հանգույցը).

2. Յես գիրք զնեցի, իսկ դու՝ տետր (զեղչված և գնեցիր  
ստորագրալը).

3. Կիմիկն ինձ նանայում և, իսկ քեզ՝ վոչ (զեղչված և  
Կիմիկը յնձեական և չի նանայում ստորագրալը, ժխտական  
ստորագրալի փոխարեն դրած և վոչ բառը).

4. Նա՛ ինձ, յես՛ քեզ, դու ուրիշին ես սիրում (առաջին  
նախադասութեան մեջ զեղչված և ես սիրում ստորագրալը, իսկ  
չերկրորդի մեջ՝ եմ սիրում ստորագրալը):

Զեղչված ստորագրալով համադաս նախադասութեան մեջ  
բութ և դրվում:

§ 42. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Բարդ ստորադասական նախադասութիւնը պարզ նախա-  
դասութիւնից տարբերվում և նրանով, վոր բարդի մեջ գլխա-  
վոր նախադասութեան վերևն անգամը արտահայտված և վոչ թե  
մի բառով, այլ մի առանձին նախադասութեամբ: Սյուպես, որի-  
նաչ՝ այս մարդուն յես հանդիպեցի դպրոց գալու ժամանակ  
պարզ նախադասութիւնը կարելի յե արտահայտել այս մար-  
դուն յես հանդիպեցի, յերբ դպրոց եյի գալիս բարդ ստորա-  
դասական նախադասութեամբ, վորի մեջ յերբ դպրոց եյի գա-  
լիս նախադասութիւնը յես հանդիպեցի նախադասութեան ժա-  
մանակի պարագայի դերն և կատարում:

Բարդ ստորադասական նախադասութիւնն, ուրեմն, պարզ  
նախադասութեան բարդված ձևն է, յերբ նրա վորևե անգամն  
արտահայտված և առանձին նախադասութեամբ:

Պարզ նախադասութիւնները կարելի յե վերածել բարդի՝

Նրանց վորևե անգամը յերկրորդական նախադասութեամբ ար-  
տահայտելու միջոցով:

Որինակներ.

Պարզ նախադասութիւններ

Նույն նախադասութիւնները  
բարդացած

1. Զանգը տալուն պես ներս  
մտանք.
2. Նա չգիտեր Սուրենի պիո-  
ներ լինելը.
3. Սպասվածը կատարվեց:

1. Հինց վոր զանգը տվեցին,  
ներս մտանք.
2. Նա չգիտեր, վոր Սուրենը  
պիոներ և.
3. Կատարվեց այն, ինչ վոր  
սպասվում եր:

§ 43. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՇԱՐԿԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ ստորադասական նախադասութիւնը կազմված և լի-  
նում առնվազն յերկու պարզ նախադասութիւններից, վորոն-  
ցից մեկը գլխավոր և լինում, մյուսը՝ յերկրորդական: Շա-  
տանգամ, սակայն, գլխավոր նախադասութեան վոչ թե մի ան-  
գամն և արտահայտվում յերկրորդական նախադասութեամբ,  
այլ՝ մի քանիսը: Սյուպիսի դեպքերում ստացվում են մի քանի  
յերկրորդական նախադասութիւններ միևնույն բարդ ստորադա-  
սական կապակցութեան մեջ:

Որինակներ.

1. Յերբ հասանք բերդի ավերակներին, մենք վայր  
իջանք ձիերից, վորպեսզի ի մոտոս դիտենք այդ արժեքավեր  
հուշարձանը:

2. Յերբ եմման վեր կացավ, առաջին միտքը, վոր ծա-  
գեց նրա գլխում, այն եր, վոր այդ որը Զազունյանը պետք և  
այցելի իրենց:

3. Հինց վոր սկսեց նվագել, ժյուրիի անդամները, վո-  
րոնք յերաժշտութեան հմուտ վարպետներ եյին, զգացին, վոր  
գործ ունեն ընատուր տաղանդի հետ.

Առաջին որինակի մեջ գլխավոր նախադասութիւնն և  
մենք վայր իջանք ձիերից, վորն ունի յերկու հաս յերկրորդա-

կան նախադասութիւնն՝ ա) յերբ հասանք բերդի ավերակներին և բ) վորպեսզի ի մոտո զիտենք այդ արժեքավոր հուշարձանը: Այս յերկրորդական նախադասութիւններէց մեկը գրված է գլխավորից առաջ, մյուսը՝ նրանից հետո:

Յերկրորդ որինաչում գլխավոր նախադասութիւնն է առաջին միտքը այն եր, վորն ունի յերեք հատ յերկրորդական նախադասութիւնն՝ ա) յերբ եմման վեր կացավ, բ) վոր ծագեց նրա գլխում և գ) վոր այդ որը Ջազունյանը պետք է այցելի իրենց: Այս յերկրորդական նախադասութիւններէց մեկը (ա) գրված է գլխավորից առաջ, մեկը (գ)՝ գլխավորից հետո, մեկը (բ) բնկել է գլխավոր նախադասութիւնն մեջ, յենթակայի և ստորագլխի միջև: Յերկրորդ որինակի նման է նաև յերրորդը, վորի մեջ գլխավոր նախադասութիւնն ունի յերեք հատ յերկրորդական նախադասութիւն, վորոնցից մեկը գրված է գլխավորից առաջ, մեկը՝ գլխավորից հետո, մեկը՝ գլխավորի մեջ:

Գլխավոր ցախադասութիւնից առաջ գրված յերրորդական ցախադասութիւնը կոչվում է առաջագաս յերրորդական ցախադասութիւն. յերբ ցա գրված է գլխավորից հետո, կոչվում է վերջագաս, իսկ յերբ ցա ընկնում է գլխավոր ցախադասութիւնն մեջ, կոչվում է միջագաս յերրորդական ցախադասութիւն:

Վերէի որինակներում առաջագաս յերկրորդական նախադասութիւններ են՝ յերբ հասանք բերդի ավերակներին, յերբ եմման վեր կացավ և հենց վոր սկսեց նվագել: Նույն որինակներէ մեջ վերջագաս յերկրորդական նախադասութիւններն են՝ վորպեսզի ի մոտո զիտենք այդ արժեքավոր հուշարձանը, վոր այդ որը Ջազունյանը պետք է այցելի իրենց և վոր գործ ունենն բնատուր տաղանդի հետ: Վերջին յերկու որինակներէ մեջ միջագաս յերկրորդական նախադասութիւններ են՝ վոր ծագեց նրա գլխում և վորոնք յերաժշտութիւնն հմուտ վարպետներ եյին:

Բարդ ստորագասական նախադասութիւնը վերլուծելու ժամանակ պետք է նախ գտնել գլխավոր նախադասութիւնը, ապա յերկրորդականները՝ կապելով այդպիսիք գլխավորի հետ:

Բարդ ստորագասական նախադասութիւնն մեջ գլխավոր նախադասութիւնը յերկրորդականներէց բաժանվում է ստորակետներով:

#### § 44. ՀԱՄԱՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒՅՈՒՆՆԵՐ

Հաճախ գլխավոր նախադասութիւնն անդամները փոխարինւ վում են վոչ թե մի, այլ մի քանի յերկրորդական նախադասութիւններով, վորոնք իրար նկատմամբ համագաս են, բայց գլխավորի նկատմամբ՝ ստորագաս:

Որինակներ.

1. Յես գիտեմ, վոր դու աշխատասեր ես, իսկ նա ծույլ ե:
2. Ստեղծվեց մի այնպիսի դրութիւն, յերբ արդեն բոլոր միջոցներն սպառված եյին, յեվ վոչինչ չէր կարելի անել հիվանդին փրկելու համար:

Առաջին որինակի մեջ յես գիտեմ գլխավոր նախադասութիւնն ունի յերկու յերկրորդական նախադասութիւններ, վորոնք իրար նկատմամբ համագաս են՝ ա) վոր դու աշխատասեր ես, բ) իսկ նա ծույլ:

Յերկրորդ որինակի մեջ ստեղծվեց մի այնպիսի դրութիւն գլխավոր նախադասութիւնն ունի նույնպես յերկու յերկրորդական նախադասութիւններ, վորոնք իրար նկատմամբ համագաս են՝ ա) յերբ արդեն բոլոր միջոցներն սպառված եյին, բ) յեվ վոչինչ չէր կարելի անել հիվանդին փրկելու համար:

Միեմնույն գլխավոր ցախադասութիւնը ստորագասված համագաս ցախադասութիւնները կոչվում են համաստորագաս ցախադասութիւններ:

Վերէի յերկու որինակներում էլ ա և բ նախադասութիւնները համաստորագաս են:

#### § 45. ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆԱԽԱԴԱՍՈՒՅՈՒՆՆԵՐ

Բարդ ստորագասական նախադասութիւնն մեջ հաճախ յերկրորդական նախադասութիւնն անդամներն ել արտահայտվում են առանձին նախադասութիւններով, վորոնք ստորագաս են լի նում արդեն վոչ թե գլխավոր նախադասութիւնը, այլ՝ յերկրորդականին:

Յերկրորդական ցախադասութիւնն ստորագաս ցախադասութիւնները կոչվում են յերկրորդական կարգի յերկրորդական ցախադասութիւն կամ յերկրորդական կարգի ցախադասութիւն:

Որինակ.

(1) Մուրննը Արամից իմացավ, (2) թե ով եր այն մարդը, (3) վոր յեկել եր դպրոցական հանդեսին:

(1) Յես գիտեմ, (2) վոր դու կարդացել ես այն գրքերը, (3) վորոնք հանձնարարված են քեզ:

Այս չերկու բարդ ստորագասական նախադասություններէց յարաքանչյուրը կազմված ե չերեք նախադասություններէց, վորոնցից առաջինները գլխավոր են, չերկրորդները՝ գլխավորին ստորագաս, այսինքն՝ չերկրորդական, իսկ չերրորդները՝ չերկրորդականներին ստորագաս, այսինքն՝ չերկրորդական կարգի:

Յերկրորդական կարգի նախադասությունն իր հերթին կարող ե նույնպէս ունենալ ստորագաս նախադասություն, վորը կկոչվի չերրորդական կարգի նախադասություն. սա նույնպէս կարող ե ունենալ ստորագաս նախադասություն, վորը կկոչվի չորրորդական կարգի նախադասություն և այլն: Այս ձևով մի բարդ ստորագասական նախադասության կազմի մեջ կարող են լինել գլխավոր, չերկրորդական և ապա չերկրորդական կարգի, չերրորդական կարգի, չորրորդական կարգի, հինգերորդական կարգի և այլն նախադասություններ: Սովորաբար այսպիսի բարդ ստորագասական նախադասություններ քիչ են դործածվում, վորովհետե նրանք տգեղ են լինում: Ահա այդպիսի մի որինակ.

1. Ես են տունն ե, վոր շինել ե վարպետ Ռհանը: (Մի գլխավոր, մի չերկրորդական):
2. Ես են ցորենն ե, վոր պահված եր են տանը, վոր շինել ե վարպետ Ռհանը: (Մի գլխավոր, մի չերկրորդական և մի չերկրորդական կարգի նախադասություն):
3. Ես են մուկն ե, վոր կերել ե են ցորենը, վոր պահված եր են տանը, վոր շինել ե վարպետ Ռհանը: (Մի գլխավոր, մի չերկրորդական, մի չերկրորդական կարգի և մի չերրորդական կարգի նախադասություն):

4. Ես են կատուն ե, վոր բռնել ե են մկանը, վոր կերել ե են ցորենը, վոր պահված եր են տանը, վոր շինել ե վարպետ Ռհանը: (Գլխավոր, չերկրորդական, չերկրորդական կարգի, չերրորդական կարգի և չորրորդական կարգի նախադասություններ):

5. Ես են շունն ե, վոր զգել ե են կատվին, վոր բռնել ե են մկանը, վոր կերել ե են ցորենը, վոր պահված եր են տանը, վոր շինել ե վարպետ Ռհանը: (Գլխավոր, չերկրորդական, չերկրորդական կարգի, չերրորդական կարգի, չորրորդական կարգի և հինգերորդական կարգի նախադասություններ):

Կարելի չե այսպէս աստիճանաբար ավելացնել նոր ստորագաս նախադասություններ, բայց, ինչպէս տեսնում ենք այս որինակից, չերկրորդական և չերրորդական կարգի նախադասություններից սկսած՝ վոճը տգեղանում ե:

§ 46. ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Յերկրորդական նախադասությունների բնույթը վորոշվում ե նրանով, թե գլխավոր նախադասության վր անդամին են նրանք փոխարինում: Նրանք կարող են փոխարինել գլխավոր նախադասության յենթակային, ստորոգելիական վերագրին, խնդիրներին, պարպաններին, վորոշիչներին և այլն: Յերկրորդական նախադասությունները կրում են գլխավոր նախադասության այն անդամի անունը, վորին փոխարինում են: Այսպէս, որինակ, գլխավոր նախադասության յենթակայի փոխարին գործածված չերկրորդական նախադասությունը կոչվում ե յենթակա չորոշիչ փոխարինող նախադասությունը կոչվում ե վորոշիչ չերկրորդական նախադասություն և այլն: Նույն ձևով լինում են պարագա, խնդիր, ստորոգելիական չերկրորդական նախադասություններ:

Յերկրորդական նախադասութեան բնույթը մի անգամից վորոշելը հաճախ դժուար է լինում: Ամեն անգամ հեշտ չի առաջին հայացքից վորոշել, թե գլխավոր նախադասութեան վեր անդամին է փոխարինում յերկրորդականը: Այսպես, որինակ՝ ստեղծվեց այնպիսի դրութիւն, յերբ վոչինչ չեր կարելի անել հիվանդին փրկելու համար բարդ ստորադասական նախադասութեան մեջ յերբ վոչինչ չեր կարելի անել հիվանդին փրկելու համար յերկրորդական նախադասութեանը կարծես ժամանակ է ցուցց տալիս և գլխավոր նախադասութեան ժամանակի սլարագային է փոխարինում, սակայն իսկապես այդպես չէ: Այս յերկրորդականը գլխավոր նախադասութեան դրութիւն յենթակայցի վորոշին է և ցուցց է տալիս, թե ինչպիսի՛ դրութիւն ստեղծվեց (այնպիսի՛ դրութիւն, յերբ վոչինչ չեր կարելի անել):

Այս նուէն բարդ նախադասութեանը կարելի յէ արտահայտել հետեւյալ պարզ նախադասութեամբ, վորի մեջ յերկրորդական նախադասութեան իմաստը կարվի վորոշնով.

Ստեղծվեց հիվանդին փրկելու համար վոչ մի բան (կամ վոչինչ) չընծեռնող դրութիւն (ստեղծվեց ինչպիսի՛ դրութիւն, — հիվանդին փրկելու վոչ մի միջոց չընծեռնող դրութիւն):

Նուէն ձևով՝ իմացվեց, վոր դու զբոսանքից ես գալիս բարդ ստորադասական նախադասութեան մեջ առաջին հայացքից թվում է, թե վոր դու զբոսանքից ես գալիս յերկրորդական նախադասութեանը տեղի պարագային է փոխարինում, ցուցց է տալիս, թե վորտեղից է գալիս, մինչդեռ այդպես չէ: Վոր դու զբոսանքից ես գալիս յերկրորդականը իմացվեց գլխավոր նախադասութեան յենթակային է փոխարինում, ցուցց է տալիս, թե ինչը իմացվեց (իմացվեց, վոր դու զբոսանքից ես գալիս): Յեթե նուէնը պարզ նախադասութեամբ արտահայտենք, էշ. րացվի՛ իմացվեց զբոսանքից գալը, վորտեղ իմացվեց ստորոգյալն է, գալը՝ յենթական, իսկ զբոսանքից՝ յենթակայի կողմնակի լրացումը (տես § 49):

Յերկրորդական նախադասութեանները լինում են հետեւյալ բնույթի.

Ա. Յենթակա — յերկրորդական նախադասութիւն, վորը փոխարինում է գլխավոր նախադասութեան յենթակային և ցուցց է տալիս այն առարկան, վորի մի բան անելը կամ լինե-

լը արտահայտված է գլխավոր նախադասութեան ստորոգյալի միջոցով:

Որ ի ն ա կ ն ե ր.

1. Եճ կոբել եր, այն գտնվեց կամ գտնվեց այն, Իճ կոբել եր.
2. Ով իր լավը հասկացավ, կոյտնտեսութիւն մտավ.
3. Առողանութիւնիցը իմացվում է, վոր քիճիսեցի յես.
4. Ինձ նա յէ դուր գալիս, ով ախասաւեր է.
5. Պարզ յերևում է, վոր պիճեք ես.
6. Հայտնի դարձավ, թէ յերբ է գալիս գնացը:

Վերևի բոլոր որինակների մեջ ընդգծված յերկրորդական նախադասութեաններն իրենց բնույթով յենթակա յերկրորդական նախադասութեաններ են և, յեթե բարդ նախադասութեանը պարզի վերածենք, նրանք կդառնան յենթականեր: Ահա, թե ինչպես. 1. Կորածը գտնվեց: 2. Իր լավը հասկացողը կոյտնտեսութիւն մտավ: 3. Առողանութեանիցը յերևում է թիճիսեցի լինելը: 4. Ինձ դուր է գալիս աշխատասերը: 5. Պարզ յերևում է պիճեք լինելը: 6. Հայտնի դարձավ գնացքի գալու ժամանակը: Յենթակա յերկրորդական նախադասութեան ունեցող գլխավոր նախադասութեան մեջ յենթական սովորաբար չի արտահայտվում (2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ որինակներ), կամ արտահայտվում է միայն գերանվամբ, սովորաբար այն կամ նա գերանուններով (1-ին և 4-րդ որինակներ): Այսպիսի դեպքերում դերանունները միայն ձևականորեն են դրվում՝ գլխավոր նախադասութեանը յերկրորդականի հետ կապելու համար, թեև իրապես նրանք յենթակա չեն, քանի վոր բովանդակութիւն չեն արտահայտում: Այդպիսի յենթականների բովանդակութեանը արված է լինում յերկրորդական նախադասութեան մեջ:

Բ. Վորոշից յերկրորդական նախադասութիւն, վորը փոխարինում է գլխավոր նախադասութեան վորեւ անգամի վորոշին:

Որ ի ն ա կ ն ե ր.

1. Այն գիրքը, վոր կոբել եր, գտնվեց.
2. Գնացեք այն պարտեզը, վորտեղ աղմուկ չկա.
3. Յեկավ այն ընկերը, վորը Բեգ եր փնտում:

Այս յերեք որինակների մեջ ընդգծվածները վորոշիչ յերկրորդական նախադասություններ են, ըստ վորում նրանցից յերկրորդը փոխարինում է գլխավոր նախադասության պարտն- զը տեղի պարագայի վորոշիչն, իսկ առաջինը և յերրորդը՝ զիրքը և ընկերը յենթականների վորոշիչներին:

Յեթե վորոշիչ յերկրորդական նախադասությունները դարձ- նենք սովորական վորոշիչ և տաննք իրենց վորոշյալներին մոտ կստանանք հետևյալ պարզ նախադասությունները՝ 1. Կորած գիրքը դանդից. 2. Գնացեք անաղմուկ պարտեղը. 3. Յեկավ քեզ փնտռող ընկերը:

Վորոշիչ յերկրորդական նախադասություն ունեցող գլխա- վոր նախադասության մեջ համապատասխան վորոշյալի վրա սովորաբար դրվում է այն կամ այնպիսի ցուցական դերանունը:

Ծանոթություն. Բացահայտիչ յերկրորդական նախա- դասությունը միանգամայն նման է լինում վորոշիչ յերկ- րորդական նախադասությանը, և այդ յերկուսն իրարից տարբերելը այնքան դժվար է, վոր քերականները սովո- րաբար բացահայտիչ յերկրորդական նախադասություն չեն ընդունում:

Գ. Հատկացուցիչ յերկրորդական նախադասություն, վորը փոխարինում է գլխավոր նախադասության վորեւ անդամի հատկացուցչին:

Որինակներ.

1. Յուցադրության համար կվերցնենք նրա տետրակը, ով լավ է գրում.
2. Այս դարձյալ նրա ծայնն է, ով յերեկ յերգում էր.
3. Այժմ նրա հերթն է, ում կանչեցին:

Այս որինակների մեջ ընդգծվածները յերկրորդական հատ- կացուցիչ նախադասություններ են, ըստ վորում առաջինը փո- խարինում է գլխավոր նախադասության տետրակը ուղիղ խնդրի հատկացուցչին, յերկրորդը ծայնն ստորոգելիական վե- րագրի հատկացուցչին, իսկ յերրորդը՝ հերթն ստորոգելիական վերագրի հատկացուցչին:

Յեթե հատկացուցիչ յերկրորդական նախադասությունները վերածենք սովորական հատկացուցչի և տաննք իրենց հատ-

կացյալներին մոտ, կստանանք հետևյալ պարզ նախադասու- թյունները՝ 1. Յուցադրության համար կվերցնենք լավ գրողի տետրակը. 2. Այս դարձյալ յերեկ յերգողի ծայնն է. 3. Այժմ՝ կանչվածի հերթն է:

Հատկացուցիչ յերկրորդական նախադասություն ունեցող գլխավոր նախադասության մեջ հատկացյալի վրա սովորաբար դրվում է նրա դերանունը, վորն ավելի շատ կապակցության համար է, քան թե բովանդակության, քանի վոր հատկացուցչի բովանդակությունը արված է լինում յերկրորդական նախադա- սությամբ:

Գ. Բացահայտիչ յերկրորդական նախադասություն, վորը փոխարինում է գլխավոր նախադասության վորեւ անդամի բա- ցահայտիչն և սովորաբար ունենում է զուգական վերագրով ստորոգյալ Այլ դեպքերում նա շատ նման է լինում վորոշիչ յերկրորդական նախադասություններին:

Որինակներ.

1. Մեզ առաջնորդում էյին ուսուցչները, վորո՞՞մ մեք ավագ քնկերներն են.
2. Նրանք դիմեցին ընկեր Կոստիկին, վորը նրանց ամե՞՞ Եսմե՞՞ հեղինակությունն էր.
3. Մենք, վոր պատանի մուրակներն ենք, ոգնում ենք Փաշիգմի զոհերին, վորո՞՞մ մեք գասակարգալի՞ն յեղբայրներն են:

Այս որինակների մեջ ընդգծվածները բացահայտիչ յերկ- րորդական նախադասություններ են, վորովհետև փոխարինում են գլխավոր նախադասության բացահայտիչներին:

Յեթե բացահայտիչ յերկրորդական նախադասությունները վերածենք սովորական բացահայտիչների և դնենք գլխավոր նախադասության բացահայտյալներին վրա, կստանանք հետևյալ պարզ նախադասությունները՝ 1. Մեզ առաջնորդում էյին ուսու- ցիչները՝ մեր ավագ ընկերները. 2. Նրանք դիմեցին ընկեր Կոստիկին՝ իրենց ամենամեծ հեղինակությունը. 3. Մենք՝ պա- տանի պիոներներս ոգնում ենք Փաշիգմի զոհերին՝ մեր դասա- կարգային յեղբայրներին, կամ՝ Մենք վորպես պատանի պիո- ներներ, ոգնում ենք Փաշիգմի զոհերին, վորպե՞՞ս մեր դասակար- գային յեղբայրներին:

Ե. Ստորագելիական յերկրորդական նախադասութիւն, զորը փոխարինում է գլխավոր նախադասութեան ստորագելիական վերագրին, վորը թեև հաճախ արտահայտված է լինում այն, այնպիսի, այնքան զերանուններով, բայց իր բովանդակութեան ստանում է յերկրորդական նախադասութիւնից:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Յեա այն չեմ, ինչ յեեկ էյի.
2. Քո ասածն ել այն ե, ինչ վոր յես եմ ասում.
3. Սա այնպիսին ե, վոր խրատ յի լում.
4. Մեր ունեցածն այնքան ե, վորքան յեզ ձերը:

Այս որինակների մեջ ընդգծվածները ստորագելիական յերկրորդական նախադասութիւններ են, վորովհետև փոխարինում են գլխավոր նախադասութեան ստորագելիական վերագրիններին, վորոնք, թեև ձևականորեն արտահայտված են այն, այնպիսի և այնքան զերանուններով, բայց բովանդակութեան չեն ցույց տալիս:

Յեթե ստորագելիական յերկրորդական նախադասութիւնները վերածենք սովորական վերագրիների և դնենք գլխավոր նախադասութեան հանդուցի կամ ոժտնդակ բայի վրա, կտանանք հետևյալ պարզ նախադասութիւնները՝ 1. Յես յերեկվանը չեմ. 2. Քո ասածն ել իմ ասածն ե. 3. Սա խրատ չլսող ե. 4. Մեր ունեցածը ձերի չափ ե:

2. Խնդիր յերկրորդական նախադասութիւններ, վորոնք դրվում են գլխավոր նախադասութեան ուղիղ կամ անուղղակի խնդիրների փոխարին:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Յես զիտեմ, վոր իխտոգավոր բաժն կենդանի յե.
2. Բոլորը իմացան, վոր Սուրենը պարտիզան ե.
3. Գիրքը հանձնեցի նրան, ով նրա տեղ եր.
4. Նվագիր, ինչ վոր գիտես.
5. Հասիր նրան, ով առաջավոր ե.
6. Խուսափիր նրանից, ով ծուլ ե յեզ ցաղակրատ.
7. Մենք պարծենում ենք նրանցով, ովքեր աշխատանքի փանդավառներ են:

Փանդավառներ են:

Այս որինակների մեջ կրկնակի ընդգծվածները խնդիր յերկրորդական նախադասութիւններ են. 1-ին, 2-րդ և 4-րդ որինակներում՝ ուղիղ խնդիր, իսկ 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ որինակներում՝ անուղղակի խնդիր:

Յեթե խնդիր յերկրորդական նախադասութիւնները վերածենք սովորական խնդրի և փոխարենը գլխավոր նախադասութիւն, կտանանք հետևյալ պարզ նախադասութիւնները՝ 1. Յես գիտեմ իխտոգավոր բաժն կենդանի լինելը. 2. Բոլորը իմացան Սուրենի պարտիզան լինելը. 3. Գիրքը հանձնեցի տիրոջը. 4. Նվագիր զիտցածդ. 5. Հասիր առաջավորին. 6. Խուսափիր ծուլ ու շաղակրատից. 7. Մենք պարծենում ենք աշխատանքի փանդավառներով:

Է. Պարագա յերկրորդական նախադասութիւն, վորը դրվում է գլխավոր նախադասութեան վորեն պարագայի փոխարին:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Նա ներս մտավ, յերբ դեռ դասը չեր վերջացել.
2. Դու խնդիր ես վորոնում այնտեղ, վորտեղ բացահայտ էի կա.
3. Յես ամեն ինչ կանեմ, վորպեսզի ողջու գառնամ.
4. Գրեցի այնպես, ինչպես ուսուցիչը պահաջել եր:

Այս բոլոր որինակների մեջ ընդգծվածները պարագա յերկրորդական նախադասութիւններ են և փոխարինում են գլխավոր նախադասութեան 1. ժամանակի, 2. տեղի, 3. նպատակի և 4. ձևի պարագաներին:

Յեթե պարագա յերկրորդական նախադասութիւնները վերածենք սովորական պարագաների և տանենք գլխավոր նախադասութիւն, կտանանք հետևյալ պարզ նախադասութիւնները՝ 1. Նա ներս մտավ մինչևիվ դասի վերջանալը. 2. Դու խնդիր ես վորոնում բացահայտից յեղած տեղը. 3. Յես ամեն ինչ կանեմ ողջու գառնալու համար. 4. Գրեցի ուսուցչի պահանջածի պես:

#### § 47. ՇԱՂԿԱՊՆԵՐ ՅԵՎ ՀԱՐԱՒԵՐԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Բարդ նախադասութեան կազմի մեջ մտնող նախադասութիւններն իրար հետ սովորաբար կապակցվում են: Բարդ նա-

խաղաղությունները հերոսում կապակցութեամբ կատարվում է շաղկապներով կամ հարաբերական բառերով:

Շաղկապները լինում են յերկու տեսակի՝

Ա. Համադասական շաղկապներ, վորոնք կապակցում են ինչպես նախադասութեան համադաս անդամները, այնպես էլ համադաս նախադասութեանները, որինակ՝ 1) Վո՛չ Սուրենը չեկավ, վո՛չ Արամը գնաց. 2) Թե՛ Արամին եմ ստում, թե՛ Սուրենին. 3) Նա թողեց յե՛վ տուն, յե՛վ տեղ, յե՛վ ծանոթ, յե՛վ բարեկամ:

Համադասական շաղկապներն են՝ այլ, այսինքն, անգամ (նույնիսկ), բայց, գոնե, գեթ, յեվ (կամ և), յե՛վ ... յե՛վ, յե՛վս, և, թե՛ ... թե՛, թե՞, իսկ, կամ, կա՛մ ... կա՛մ, մանավանդ, վո՛չ ... վո՛չ:

Բ. Ստորադասական շաղկապներ, վորոնք կապակցում են յերկրորդական նախադասութեանները գլխավորի հետ և սովորաբար դրվում են յերկրորդական նախադասութեան սկզբում:

Ստորադասական շաղկապներն են՝ թե, յեթե, վոր, վորպէսզի, վորովհետեւ, քան, մինչ, մինչդեռ:

Յերկրորդական նախադասութեանները հաճախ գլխավորի հետ կապակցվում են վոչ թե շաղկապներով, այլ հարաբերական բառերով, կամ հարաբերական դերանուններով՝ վորը, ինչ, վորքան, ինչպես, ինչպիսի, յերբ, ուր, վորտեղ և այլն:

Հարաբերականներին կամ շաղկապներին հաճախ միանում է վոր թարմաբար շաղկապը՝ ուր վոր, ինչ վոր, ինչպես վոր և այլն:

Հարաբերականներ ունեցող յերկրորդական նախադասութեան գլխավոր նախադասութեանը նույնպիսի կարող է կապակցվել իր ստորադաս նախադասութեանը վորոչ բառերով, վորոնք սովորաբար ցուցական դերանուն են լինում և կոչվում են հարաբերյալ. Գլխավոր նախադասութեան հարաբերյալը (ձեռով կամ հստով) յերկրորդական նախադասութեան հարաբերական բառին այնպես է համապատասխանում, ինչպես ցուցական դերանունը հարցական դերանման. Եթե յերկրորդականն սկսվում է ինչ, վորը, ինչպիսի, վորպիս, վորտեղ, ուր հարաբերականներով, գլխավորն ունենում է այն, այնպես, այստեղ հարաբերյալները:

Որ ինչ ա կ ն ե ր.

1. Յես այն եմ կարդում, ինչ ուսուցիչը հանձնարարել է.
2. Սա այն ուսուցիչն է, վորը յերեկ պարզեցաւ:
3. Յես այնպես եմ սովորում, ինչպես դու:

Յերկրորդական նախադասութեանները գլխավոր նախադասութեաններին միշտ դասվում են ստորադասներով:

#### § 48. ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՉԱՏՈՒՄ

Յերկրորդական նախադասութեանները, ինչպես այդ տեսանք § 46-ում, վոխարինում են գլխավոր նախադասութեան այն կամ այն անդամին և կարող են նորից տարվել իրենց տեղը գլխավոր նախադասութեան մեջ՝ զրկվելով (յերկրորդական) նախադասութեան հատկութեաներից (յենթակայից և ստորագյալից): Նման բազմաթիվ որինակներ տրված են § 46-ում:

Այս ձևով բարդ նախադասութեանը վերածվում է պարզի, իսկ յերկրորդական նախադասութեանը վերանում է՝ վերածվելով պարզ նախադասութեան այն անդամին, վորին նա վոխարինում էր:

Գլխավոր նախադասութեան մեջ այն անգամի վերականգնումը, վորն արտահայտված է յերկրորդական նախադասութեամբ, կոչվում է յերկրորդական նախադասութեան կրճատում կամ բարդ նախադասութեան պարզում:

Յերկրորդական նախադասութեանը կրճատելու կամ բարդ նախադասութեանը պարզելու ժամանակ տեղի յեն ունենում են տեյալ վոխարինութեանները:

Ա. Վերացվում են գլխավոր նախադասութեան հարաբերյալը և յերկրորդական նախադասութեան հարաբերական բառերն ու շաղկապները, որինակ՝ 1. Յես այն եմ կարդում, ինչ ուսուցիչը հանձնարարել է բարդ ստորադասական նախադասութեանը պարզվելով դառնում է՝ յես կարդում եմ ուսուցչի հանձնարարածը (վերացվում են այն հարաբերյալը և ինչ հարաբերականը). 2. Սա այն ուսուցիչն է, վորը յերեկ պարզեցաւ: Բարդ ստորադասականը պարզվելով դառնում է՝ սա յերեկ պարզեցաւ: 3. Սա այն ուսուցիչն է (վերացվում են այն հարաբերյալը և վորը հարաբերական դերանունը):

Բ. Յերկրորդական նախագասուեթյան սլարդ ստորոգյալը վերածվում է վորեք դերբայի:

Ծանոթութուն. Ներկա ժամանակի ստորոգյալը վերածվում է յենթակայական դերբայի, կատարյալ, վաղակատար և հարակատար ժամանակների ստորոգյալը՝ հարակատար դերբայի, անցյալ անկատար ժամանակի ստորոգյալը՝ յենթակայական դերբայի և աղառնի ժամանակի ստորոգյալը՝ յերբեմն աղառնի դերբայի, յերբեմն՝ յենթակայական դերբայի:

Որինակներ.

1. Յեկավ նա, ով գնում է (կամ՝ ով գնում եր) կգառնա՝ յեկավ գնագորդը.

2. Յեկավ նա, ով գնացել եր (կամ գնաց, գնացած եր և այլն) կգառնա՝ յեկավ գնացածը.

3. Յեկավ այն, ինչ գալու յեր կգառնա՝ յեկավ գալուն կամ գալիքը.

4. Յեկավ նա, ով գայու յեր կգառնա՝ յեկավ յեկողը:

Գ. Յերկրորդական նախագասուեթյան բաղադրյալ ստորոգյալի հանդուսը վերանում է կամ յերբեմն փոխարինվում վերացական բայի վորեք դերբայով, իսկ ստորոգելիական վերադիրը մնում է:

Որինակներ.

1. Թող առաջ գա, ով քաջ է կգառնա՝ թող առաջ գա քաջը կամ՝ թող առաջ գա քաջ յեղողը:

2. Յերեկ հանդիպեցի Թորոսին, վորը մի ժամանակ իմ դասընկերն եր կգառնա՝ յերեկ հանդիպեցի Թորոսին՝ մի ժամանակվա (կամ յերբեմնի) դասընկերոջս կամ յերեկ հանդիպեցի մի ժամանակ ինձ դասընկեր յեղած Թորոսին:

Դ. Յերկրորդական նախագասուեթյան՝ դերանվամբ և հարարերական բառով արտահայտված յենթական վերանում է, իսկ քոչականով արտահայտված յենթական մնում է:

Որինակներ.

1. Աշակերտից միշտ գոհ ե լինում այն ուսուցիչը, վորը նրանից լավ պատասխան է ստանում կգառնա՝ աշակերտից

միշտ գոհ ե լինում նրանից լավ պատասխան ստացող ուսուցիչը.

2. Մենք դահլիճ մտանք, յերբ վարագույրը բարձրանում եր կգառնա՝ մենք դահլիճ մտանք վարագույրը բարձրանալու ժամանակ.

3. Շատ լավ եր, վոր Սուրենը արտասանեց կգառնա՝ շատ լավ եր Սուրենի արտասանելը կամ՝ Սուրենի հանդես գալը արտասանությամբ:

Ծանոթութուն. Բարդ ստորագասական նախագասուեթյունը պարզելու ժամանակ յերկրորդական նախագասուեթյան յենթական գլխավոր նախագասուեթյան մեջ հանդես է գալիս վոչ թե իբրև յենթակա, այլ իբրև կողմնակի յենթակա կամ կողմնակի խնդիր:

#### § 49. ԴԵՐԲԱՅԱՆ ԼՐԱՅՈՒՄ

Յերկրորդական նախագասուեթյունների կրճատման հետևվանքով, ինչպես տեսանք վերևում (§ 48 բ. և դ.), նրա ստորոգյալը վերածվում է դերբայի և մտնում պարզած նախագասուեթյան մեջ՝ ստանալով յենթակայի, վորոշի, խնդրի կամ այլ անդամի պաշտոն և կրում է նախագասուեթյան համապատասխան անդամի անունը՝ յենթակա, վորոշիչ, խնդիր, պարագա և այլն: Սակայն նախագասուեթյան յենթակայի, վորոշիչ, խնդրի, պարագայի պաշտոն կատարելով հանդերձ՝ նա զգալի կերպով տարբերվում է սովորական յենթակայից, վորոշից, խնդրից և այլն: Այդ տարբերութունն այն է, վոր դերբայով արտահայտված յենթական, խնդիրը և այլն բացի սովորական յենթակայի, խնդրի, պարագայի լրացումներից (վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ) կարող են ունենալ նաև այնպիսի լրացումներ, վոր միայն ստորոգյալն և ունենում: Այսպես, որինակ՝ բարդ ստորագասական նախագասուեթյան պարզման հետևանքով դերբայով արտահայտված յենթական կարող է ունենալ ինչպես վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, այնպես ել յենթակա, խնդիր և պարագա լրացումներ: Այս բացատրվում է նրանով, վոր դերբայն, իբրև բայի մի ձև, անկախ իր վարած պաշտոնից, կարող է ունենալ ստորոգյալի լրացումներ:

Նախագատուքյան այն անդամը, վորն արտահայտված է վորնից դերբայով, կոչվում է դերբայական լրացում:

Յանոթություն. վորոշ ջերականներ դերբայական լրացումը կոչում են նաև ստորագասական լրացում: Յերկու անուններն էլ հավասարապես սխալ են, քանի վոր դերբայական լրացումը կարող է լինել նաև յենթական, մինչդեռ յենթական լրացում չէ:

Որինակներ՝ յեկողը յեկավ (յենթական). Բնած յերևան արթնացավ (վորոշիչ). փոխադրվածների ազգանունները կարդացին (հատկացուցիչ). կանչիցի՛ք զնացածներին (ուղիղ իրնդիբ). Դավիթը նայն ավելց Բնածնեից (անուղղակի խնդիր), նա կարգալով մարդ դարձավ. պատգամավորները յեկել են վողջուհեյու (պարագաներ):

§ 50. ՆԱԽԱԳԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Բարդ ստորագասականը պարզելու հետևանքով ստացված նախագատուքյան մեջ նրա այս կամ այն անդամը, վոր արտահայտված է դերբայական լրացումով, կարող է ունենալ ստորոգյալին հատուկ լրացումներ՝ խնդիրներ և պարագաներ, ինչպես և յենթական, վորը սակայն ավյալ նախագատուքյան մեջ յենթական չի:

Դերբայական լրացման յենթական, խնդիրները յեվ պարագաները նախագատուքյան կողմնախանգում են յեվ կոչվում են կողմնակի յենթական, կողմնակի խնդիր, կողմնակի պարագա:

Կողմնակի յենթականի որինակներ.

1. Սայր շուռ գալուն պես յես ցատկեցի (սայր շուռ գալ դերբայական լրացման կողմնակի յենթական է. այս նախագատուքյան իսկական յենթական է յես):

2. Նրանք նանապարհ ընկան յույսք բացվելուց առաջ (յույսք բացվել դերբայական լրացման կողմնակի յենթական է. այս նախագատուքյան մեջ իսկական յենթական է՝ նրանք):

3. Նա ինձ հանդիպեց անձրեվ գալու ժամանակ (անձրեվ գալ դերբայական լրացման կողմնակի յենթական է. այս նախագատուքյան իսկական յենթական է՝ նա):

Կողմնակի յենթական ավելի հաճախ դրվում է վոչ թե ուղղական, այլ սեռական հորովով, որինակ՝ սայր շուռ գալուն պես (կամ սայր շրջվելուն պես) յես ցատկեցի, կամ՝ իմ զնամ մատիոր սեվ չեր (այն մատիոր, վոր յես էջի զնել սեվ չեր), Սուրենի կարդացած գիրքը յես վաղուց եմ կարդացել (այն գիրքը, վոր Սուրենը կարդացել է, յես վաղուց եմ կարդացել):

Այս որինակներն մեջ սայրի, իմ, Սուրենի բառերը հատկացուցիչ չեն, քանի վոր նրանք պատկանելիություն կամ սեռում, զերբերում չեն ցույց տալիս. նրանք շուռ գալ, զնամ և կարդացած դերբայական լրացումների կողմնակի յենթականներ են՝ զբված սեռական հորովով: Սուրենի կարդացած գիրքը չի նշանակում Սուրենի գիրքը, այլ այն գիրքը (ուրիշի կամ գրադարանի), վոր կարդացել է Սուրենը:

Մեռական կողմով արտահայտված կողմնակի յենթական կոչվում է յենթակալական հասկացուցիչ կամ յենթակալական սեռական:

Կողմնակի խնդիրների որինակներ.

1. Անձրեվ փախչողը կարկուտի տակ ընկավ (անձրեվից բառ փախչողը դերբայական լրացման կողմնակի խնդիրն է):

2. Միջակ ստացողը պետք է լավի ձգտի (միջակ բառը ստացողը դերբայական լրացման կողմնակի խնդիրն է):

3. Հեղափոխականների արշուևով սրբազորված վայրերը մեզ համար նվիրական են (արյունով բառը սրբազորված դերբայական լրացման կողմնակի խնդիրն է):

Կողմնակի պարագաների որինակներ.

1. Գուրգ մեկնողները նանապարհ ընկան (գուրգ բառը մեկնողները դերբայական լրացման կողմնակի պարագան է):

2. Վաղուհեյու յեկածները ընմ բարձրագան (վողջուհեյու բառը յեկածները դերբայական լրացման կողմնակի պարագան է):

2. Առավուտան կորցրած գիրքս յիրեկոյան գտա (առավուտան բառը կորցրած գիրքս յիրեկոյան գտա (առավուտան է):

Կողմնակի ստորոգելիական վերադրի որինակննր.

1. Նա նոր իմացավ իմ ուսանող դառնալը (ուսանող բառը դառնալ զերբայական լրացման կողմնակի ստորոգելիական վերադրին է).

2. Նրա ով լինելը յես չգիտեմ (ով բառը լինել զերբայական լրացման կողմնակի ստորոգելիական վերադրին է).

3. Նա յերկար տարիներ կուսակցութունից թագցրել ե ծագումով ինչ լինելը (ինչ բառը լինել զերբայական լրացման կողմնակի ստորոգելիական վերադրին է):

§ 51. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճախ պարզ կամ բարդ նախադասութեան մեջ ընկնում ե մի այնպիսի նախադասութուն, վորը նրան վոչ հաճադաս ե, վոչ ել ստորադաս: Այսպիսի նախադասութունը քերականորեն ել չի կապակցվում այն նախադասութեան հետ, վորի մեջ ընկնում ե: Այսպիսի նախադասութունները շատ նման են միջանկյալ բաւերին (§ 26), այն տարբերութեամբ, սակայն, վոր սրանք վոչ թե բաւեր են, այլ՝ անկախ, ինքնուրույն նախադասութուններ:

Վորեմբե ցախադասութեան մեջ բնկած, բայց ցրա հետ քերականորեն չկապված ցախադասութունը կոչվում ե միջանկյալ ցախադասութուն:

Որինակն եր.

1. Ուզում ես ասել Սառան,—այդպես ասացիր, չե՞, նրա անունը,—նրանց վորդեգրուհին ե (այդպես ասացիր, չե՞, նրա անունը նախադասութունը ընկել ե ուզում ես ասել Սառան նրանց վորդեգրուհին ե նախադասութեան մեջ):

2. Առավոտը, ի՞նչ ես կարծում, անծրեմ կզա՞ (ի՞նչ ես կարծում նախադասութունը ընկել ե առավոտը անծրեմ կզա՞ նախադասութեան մեջ):

3. Պետրոս Մինասյանը (այս եր ուղեկցիս անունը) հայոց դպրոցի սան եր (այս եր ուղեկցիս անունը նախադասութունը ընկել ե Պետրոս Մինասյանը հայոց դպրոցի սան եր նախադասութեան մեջ):

Միջանկյալ նախադասութունները միշտ անջատվում են

այն նախադասութեան անդամներից, վորի նկատմամբ իրենք միջանկյալ են: Այդ անջատումը կատարվում ե ա) վրակազմերով (3-րդ որինակ), բ) ստորակետներով (2-րդ որինակ) ե կամ գ) ստորակետով ե գծիկներով (1-ին որինակ):

§ 52. ՈՒՐԻՇԻ ՈՒՂՂԱԿԻ ՅԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍԹ

Գրավոր ե բանավոր խոսքի ընթացքում հաճախ անհրաժեշտ ե լինում մեջ բերել ուրիշի մտքերը, կամ այն, ինչ վոր մի ուրիշն ասել ե այս կամ այն կապակցութեամբ:

Հեղինակի կամ մի ուրիշի ասած վորեմբե միտք, վոր մեջ ե բերվում գրավոր կամ բանավոր խոսքի մեջ, կոչվում ե ուրիշի խոսք:

Ուրիշի խոսքը կարելի յե մեջ բերել կամ ճիշտ նույնութեամբ, այսինքն՝ բառացիորեն, այնպես, ինչպես վոր ասվել ե, կամ պատմողաբար, այսինքն՝ տալով նրա բովանդակութունը: Որինակ՝ նա ինձ ասաց. «Դու մի անհանգստանա, յես ամեն ինչ կարգադրել եմ», չակերանների մեջ առնված ուրիշի խոսքը մեջ ե բերված նույնութեամբ, այնպես, ինչպես վոր ասվել ե: Նա ինձ ասաց, վոր յես չանհանգստանամ, ինքը ամեն ինչ կարգադրել ե. այստեղ նույն ուրիշի խոսքը մեջ ե բերված պատմողաբար:

Յերբ ուրիշի խոսք մեջ ե բերվում բառացիորեն, ցույցուցամբ, կոչվում ե ուրիշի ուղղակի խոսք, իսկ յերբ ցա մեջ ե բերվում պատմողաբար՝ կոչվում ե ուրիշի անուղղակի խոսք:

Յեմ ուղղակի, ե՛ անուղղակի խոսքերը հանդես են գալիս իրրե յերկրորդական նախադասութուն, յերբ նրանք հանդիսանում են ասել, գրել, պատասխանել, հրամայել, մտածել, վորոշել ե նման մի շարք բայերով ստորոգյալ ունեցող գլխավոր նախադասութեան լրացում: Ուղղակի խոսքը գլխավոր նախադասութեան հետ չի կապակցվում, մինչդեռ անուղղակի խոսքը վոր կամ թե շարկապով կապակցվում ե:

Ծանոթութուն. Ուղղակի խոսքը գլխավոր նախադասութեան հետ կարող ե կապակցվել վոր կամ թե շարկապով, յերբ գլխավոր նախադասութեան ե ուղղակի խոսքը

յննթական նույնն են և արտահայտված անաջին դեմքով  
այսինքն՝ չեք խոսողը մեջ և բերում էր խոսքը:

Որ ի ն ա կ ն ե ր .

1. Անս ասացի՝ «այսոր տանը կլինեմ» կամ՝ յնս ասացի,  
վոր այսոր տանը կլինեմ.

2. Յնս վորոշում եմ «այսոր տանը կմնամ» կամ՝ յնս  
վորոշում եմ, վոր այսոր տանը կմնամ.

Գրավոր և բանավոր խոսքի մեջ շատ հաճախ անհրաժեշտ  
և վնում ուղղակի խոսքը անուղղակի դարձնելը

Ուղղակի խոսքն անուղղակի դարձնելու ժամանակ տեղի  
յնն ունենում հետևյալ փոփոխությունները. ա) անաջին և  
չերկրորդ դեմքի յննթականները վերածվում են չերկրորդ դեմքի  
(բացի վերևի ծանոթության մեջ ցույց տրված դեպքից, չերք  
անուղղակի և ուղղակի խոսքերը դեմքով չեն տարբերվում),  
բ) հրամայական լեզանակով արտահայտված ստորոգյալը փոխ-  
վում և ըզձական լեզանակի:

Ծանոթություն. Յիթե ուղղակի խոսքի մեջ կոչական  
կա, անուղղակի խոսքի մեջ նա դառնում և յննթակա կամ  
փոխադրվելով գլխավոր նախադասության մեջ՝ այնտեղ  
դառնում և խնդիր:

Որ ի ն ա կ ն ե ր .

(Ուղղակի խոսք)

1. Նա ինձ ասաց. «Յնս քեզ գիրք եմ տալու».
2. Նա ասաց. «Սուրեն, դու լավ աշակերտ ես».
3. Յնս կրկնեցի. «Ինչո՞վ եմ արժանացել այդ պատվին».
4. Հրամանատարը կարգադրեց. «Թամբեցն՝ ք ծիները»:

Նույն որինակները անուղղակի խոսքի վերածված.

1. Նա ինձ ասաց, վոր ինքը ինձ գիրք և տալու.
2. Նա Սուրենին ասաց, վոր նա լավ աշակերտ և, կամ՝  
նա ասաց, վոր Սուրենը լավ աշակերտ և.
3. Յնս կրկնեցի. թե ինչով եմ արժանացել այդ պատվին.
4. Հրամանատարը կարգադրեց, վոր ծիները թամբեն:

Հաճախ անուղղակի խոսքի մեջ սխալ ձևով պահպանում են  
ուղղակի խոսքի դեմքը և անդիք տալիս թյուրիմացության

Այսպես որինակ՝ նա ինձ ասաց, վոր ինքը ինձ գիրք և տալու  
սխալ անուղղակի խոսքն արտահայտում են՝ նա ինձ ասաց,  
վոր յնս քեզ գիրք եմ տալու սխալ ձևով, վորը միանգամայն  
այլ իմաստ և արտահայտում, քան նախորդը:

Ուղղակի խոսքը կարող և դրվել գլխավոր նախադասու-  
թյունից առաջ և հետո. չերկու դեպքում էլ նա առնվում և  
չակերաների մեջ և գլխավոր նախադասությունից բաժան-  
վում և ստորակետով կամ գծիկով, չերք նրանցից առաջ և  
դրված, և միջակետով կամ բութով, չերք նրանցից հետո յե  
դրված: Յիթեթն գլխավոր նախադասությունն ինքն և ընկնում  
ուղղակի խոսքի մեջ, այս դեպքում գլխավոր նախադասությու-  
նը չերկու կողմերից դատվում և ստորակետով, կամ ստորակե-  
տով և գծիկով:

Ծանոթություն. Յեթե ուղղակի խոսքը շատ կարճ և,  
սովորաբար չակերաների մեջ չի առնվում և գլխավոր նա-  
խադասությունից բաժանվում և վոչ թե միջակետով, այլ  
բութով:

Որ ի ն ա կ .

1. Յերեկ նա ասում եր՝ վոչ, իսկ այսոր ասում ե՝ այն.
2. Յնս ասացի՝ չեկ.
3. Ո՞վ ասաց՝ բավական և:

### § 53. ԿԵՏՈՒՐՈՒԹՅՈՒՆ

Կետադրությունը, թեև վոչ լրիվ կերպով, բայց և այնպես  
լրացնում և այն խոշոր թերությունը, վոր ունի շրավոր խոսքը  
բանավոր խոսքի համեմատությամբ: Բանավոր խոսքի միջոցով  
մենք լսում ենք խոսողի ձայնը, ձայնի յեկեղծները, գազարնե-  
րը, լեզանակը կամ տոնը (հարցական, հեգնական, ժխտական և  
այլն): Այդ պատճառով էլ բանավոր խոսքը հաճախ կոչվում և  
նաև կենդանի խոսք կամ խոսվածք: Գրավոր խոսքը կենդանի  
խոսք չե, և կարգացողին և մնում այս կամ այն չափով կենդա-  
նացնել այն: Կենդանի կամ բանավոր խոսքի դադարները, ձայ-  
նի յեկեղծները և լեզանակը գրավոր խոսքի մեջ վորոշ չափով  
նշելու համար չուրաքանչյուր լեզու գործածում և համապա-  
տասխան նշաններ, վորոնք կոչվում են կետադրության նշաններ:

Կետադրութեան նշանները բաժանվում են չերեք խմբի՝ ա) տրոհութեան նշաններ, բ) առողջանութեան նշաններ և գ) բացահայտութեան նշաններ:

1. Տրոհութեան նշաններն են՝ վերջակետը (.), միջակետը (-), ստորակետը (,) և բութը ('), վորոնք ցույց են տալիս, թե խոսքի կամ նախադասութեան մեջ վորտեղ ինչպիսի դադար պետք է տալ կամ հանգիստ առնել: Տրոհել նշանակում է բաժանել, կտրատել, տրոհութեան նշանները ցույց են տալիս խոսքի կամ նախադասութեան բաժանումները:

### Վերջակետը դրվում է

Յուրաքանչյուր պարզ և բարդ նախադասութեան վերջում և այսպիսով խոսքը բաժանում է կամ արտհում նախադասութունների: Վերջակետն արտահայտում է համեմատաբար յերկար դադար կամ հանգիստ:

### Միջակետը դրվում է

ա) Իբրդ համադասական նախադասութեան մեջ համադաս նախադասութուններից հետո, չերք նրանք թվով բավական շատ են և բոլորը միասին մի պատկեր կամ ամբողջական նկարագրութուն են տալիս. որինակ՝ բոլոր գործարանների շջակները սուլեցին. կանգ առան գնացքները. կանգ առան նավերը. գլխահակ անշարժացան հետիոտները. խոնարհվեցին բոլոր դրոշակները. քարացավ ամեն ինչ մեծ Լենինի դին գերեզման իրեցնելու պահին:

բ) Ուրիշի ուղղակի խոսքից առաջ, որինակ՝ ընկեր Ստալինը հայերեն ասաց. «Հայաստանը լավ է. կեցցե՛ Հայաստանը»:

### Ստորակետը դրվում է

ա) Յերկրորդական նախադասութունից առաջ և հետո՝ գլխավոր նախադասութունից զատելու համար, որինակ՝ իմացա, վոր դու գալիս ես. վոր դու գալիս ես, այդ յես գիտնմ:

բ) Համադաս նախադասութունների և նախադասութեան բազմակի անդամների միջև, չերք համադասական շաղկապներ չեն դրված կամ դրված են ըսյց, իսկ, սակայն համադասական

շաղկապներ, որինակ՝ Սուրենը, Արամը յեվ Կապուշը գնեցին գիրք, թուղթ յեվ այբոմ, իսկ Լիլիկը, Գուրգենը, Վրամը յեվ Լուսիկը՝ շահմաթ, նոտաներ, ջութակի լար:

գ) Միջանկյալ բառերի և միջանկյալ նախադասութունների վրա՝ առաջից և վերջից, որինակ՝ Սուրենը, այո՛, իմ ընկերն ե. նորերդային դպրոցը, ծիծաղելի՛ յե նոյնիսկ համեմատութունը, վորչնուլ նման չի հին դպրոցին:

դ) Իբար հաջորդող այնպիսի նախադասութունների միջև, վորոնք թեև կապված են յեվ շաղկապով, բայց ունեն ասբբեր յենթականեր, որինակ՝ յես ծայն տվի, յեվ Սուրենը չչսեց: Նա գիտի, վոր յես գնալու յեմ, յեվ ինձ սպասում ե:

ե) Կոչականների վրա՝ նախադասութեան մյուս անդամներից զատելու համար, որինակ՝ Պրոկտորներ՛ը բոլոր յերկրների, միացե՛ք: Լսի՛ր, Սուրեն՛ս Դուք, ընկե՛ր Վրամ, իզուր եք նախատում ինձ:

զ) Շեշտված կրկնակ յե՛վ ... յե՛վ, թե՛ ... թե՛ շաղկապներով սկսվող համադաս նախադասութունների և բազմակի անդամների միջև, որինակ՝ իմ հայրը յե՛վ աշխատում ե, յե՛վ սովորում, յե՛վ սովորեցնում: Տեսա թե՛ Սուրենին, թե՛ Արամին, թե՛ մյուս աշակերտներին:

է) Վորոշյալին յետադաս վորոշիչներից առաջ և հետո, որինակ՝ մի ինչ վոր ցուրտ բան, կլորիկ ու պատիկ, հրացանի կոտորակի պես թրիկաց Սաքուլի յերեսին: Վանիչկան ծխնելույզի անցքից հանեց հոր պարիկը, թղթի մեջ խնամքով փաթաթած, յեվ տվավ հորը:

### Բութը դրվում է

ա) Բացահայտյալի վրա, որինակ՝ բեմում յերեվաց ընկեր խանջյանը՝ Հայաստանի կոմկուսի քարտուղարը:

բ) Ուրիշի ուղղակի խոսքից առաջ, չերք այն շատ կարճ ե, որինակ՝ յես ասացի՛ կգամ. նա՛ հա, յես՛ չե, վերջը համածայնութեան յեկանք:

գ) Նախադասութեան վորեև գեղջված անդամի փոխարեն, որինակ՝ յեղբայրս կոմյերիտական ե, իսկ յես՛ պիտներ:

դ) Պարագալի վրա, չերք այն արտահայտված է դերբայական լրացումով և ինքն ունի կողմնակի լրացումներ, որինակ՝

իմանալով, վոր Սուրենը տանն է՝ մենք շտապեցինք նրա մոտ: Վարչության այդ վորոշումը լսելով՝ նա վեր ցատկեց ուրախութիւնով:

Ե) Նախադասութեան մեջ իրար նկատմամբ լրացում և լրացում չհանդիսացող, բայց իրար հաջորդող բառերը զատելու համար, որինակ՝ կենտրոնի՝ տարբերական չեմ միջնակարգ զբաղ-րոցներէ մասին հանած վորոշումները կենսագործվում են:

զ) Թվարկութեաններէց առաջ, որինակ՝ իմ սիրած բա-նաստեղծները սրանք են՝ Թուամնչան, Իսահակյան և Չարենց:

Ձ. Առողանութեան նշաններն են՝ շեշտ ('), հարցական նշան (?), և բացառանշական նշան (-): Առողանութեան նշան-ները գրվում են արտասանութեան, ձայնի յեկեղծները և ուժը ցույց առնու համար:

Շեշտը գրվում է կոչականի, հրամայականի, ինչպես և նախադասութեան աչլ անդամների վրա, յերբ նրանք արամաբա-նական շեշտ են կրում, որինակ՝ գիրքը Սուրենին հանձնիր, գիրքը Սուրենին հանձնիր, գիրքը Սուրենին հանձնիր: Անի՛վ իմ, դարձի՛ր:

Հարցական նշանը գրվում է այն բառերի վրա, վորոնք հարցում են արտահայտում, որինակ՝ Սուրեն՞ը Արամին կան-չեց, Սուրենը Արամի՞ն կանչեց, Սուրենը Արամին կանչե՞ց:

Բացառանշական նշանը գրվում է այն բառերի վրա, վո-րոնք պետք է յերկարացվեն և զգացմունքով արտասանվեն, որինակ՝ անա՛թ թե ինչ: Փա՛ռք հեղափոխութեան նահատակնե-րին: Խե՛ղճ յերեսխա... գիրքը ծայրից ծայր մի լա՛վ կարգացի:

Ծանոթութեան. Հայերենի առողանութեան նշանները, այլ լեզուների համապատասխան նշանների հետ համեմա-տած, շատ մեծ առավելութուններ ունեն: Մինչդեռ Այդ նշանները մենք դնում ենք ճիշտ այն բառի վրա, վորը պետք է յերկարացվի և զգացմունքով արտասանվի, ուրիշ լեզուներում նրանք գրվում են նախադասութեան վեր-ջում, յերբեմն համապատասխան բառից շատ հեռու:

Յ. Բացահայտութեան նշաններն են՝ չափերտները («»), փա-կազները ( ), կախման կետերը (...), բազմակետը (.....), գիծը կամ անջատման գիծը (—), գծիկը կամ միութեան գծիկը (-), յենթանման (-) և սպախարցը (°), վորոնք գործ է անվում

իրեն նախադասութեան միտքն այս կամ այն կերպ բացահայ-տող, պարզող պայմանական նշանները: Բացահայտութեան նշանները սովորաբար արտասանորեն չեն արտահայտվում, չեն ազդում խոսքի բանավոր վերարտադրութեան վրա և հասնում են միայն կարդացողին, բայց վո՞չ լսողին:

Չափերտները գործածվում են ուրիշի ուղղակի խոսքի հա-մար, վորը յերկու կողմերից առնվում է նրանց մեջ, որինակ՝ սասց. «լավ, թող այդպես լինի»:

Չափերտների մեջ են գրվում նաև հիմնարկութուններին, ընկերութունների և այլն պայմանական անունները, ինչպես և գրական յերկերի անունները, յերբ մեջ են բերվում գրավոր խոսքի մեջ, որինակ՝ յես «Կորչի անգրագիտութեանը» ընկե-րութեան անդամ ելի: Եղմիածնի «Անաստված» կոտնտեսու-թեանը առաջավոր է: Յեղիշե Չարենցի «Խմբապետ Շավարշը» չքնաղ գործ է:

Չափերտները գործածվում են նաև հեղինական կամ ժխտական իմաստ առնու նպատակով, որինակ՝ նա դեռ «մաքուր գիտու-թեան» ջատագով է յեմ չի ընդունում գիտութեան դասկարգայ-նութեանը: Պրոլետարիատի ազգային կուլտուրան նման չի բուրժուական «ազգային» կուլտուրային, վորը վո՞չ այլ էնչ է, քան ազգայնական կուլտուրա:

Փակագծերի մեջ առնվում են սովորաբար այնպիսի միջան-կյալ նախադասութեաններ, վորոնք շատ ազատ կերպով կարող են և հանվել, գեղչվել, որինակ՝ Կարմենը (ուպերայի հերոսու-հին է) դավանում է զգացմունքների ազատութեան: Սուրենի ծայնից (նա բարձրածայն կարդում էր) արթնացավ քնած յե-րեսխան:

Կախման կետերը գործածվում է առկախ, կիսատ արտա-հայտված նախադասութեան վերջում, մասնավոր յերբ հեղինա-կը ցանկանում է արտահայտել չուր ուժեղ հույզը, որինակ՝

Ո՛ր, հերոսական տասնեկինգ տարի՛  
Տասնեկինգ խավար դարերից հետո...  
Անդուլ տքնութեան, գործի, պայքարի,  
Հաղթանակների անձայր պատմութեան...

(Յն. Չարենց)

Բազմակերպը (չորս կեսից վոչ պակաս) դրվում է մեջ բերող հատվածի աջն տեղերում, վորտեղ մեջ բերողը կըճատումներ և կատարել, որինակ՝ «Այս հին աշխարհը կփոքնը մենք մինչև հիճքերը... ինտերնացիոնալը աշխարհքը կփրկեն»: «Բնորձը սարենը, այ սարեր... դուք ել ինձ հետ ձեն տվեք...»:

Գիծը կամ անջատման գիծը դրվում է խոսակցութունը պարունակող հատվածների մեջ, յուրաքանչյուր տողի սկզբում, չերբ նոր տողից և սկսվում յուրաքանչյուր խոսողի ասածը. գծով կամ գծով և ստորակետով և բաժանվում գլխավոր նախադասութունը իր չերկրորդական նախադասութունից, չերբ վերջինս ուրիշի ուղղակի խոսք և և դրված է գլխավոր նախադասութունից առաջ, կամ՝ չերբ գլխավոր նախադասութունն ընկած է ուրիշի ուղղակի խոսքի մեջ, որինակ՝

Սուրենը և Արամը դանդաղ քայլում էին:

— Արամ, ինչո՞ւ յես այսոր լուսկաց դարձել—հարցրեց Սուրենը:

— Հ՞ը, ինչ ասացիր:

— Ինչո՞ւ յես այսոր սակավխոս դարձել,—կրկնեց Սուրենը:

— Սուրեն,—վերջապես խոսել սկսեց Արամը,—չե՞ վոր յես խոսք էլ յի տվել «բավից» ցածր թվանշան չունենալ, բայց ավր... Ծանոթ թու թյուն. ա) Գիծը կամ անջատման գիծը հայերենում ուրիշ գործածութուն չունի, և սխալ է, չերբ վորոշ հեղինակներ բութի փոխարեն գիծ են դնում (մանավանդ գեղջված անդամի տեղը), որինակ՝ նա սոսկ հարվածային է, իսկ յես—ստախանովական: Արամը—ծույլ, իսկ Աշխենը—անկարգ:

Սխալ է նաև, չերբ բանաստեղծութունների մեջ տողերի վերջում, նույնիսկ վերջակետից հետո գիծ են դնում, որինակներ՝

— Մեր որակարգում մի հարց կա այսոր,—

Ու Սողոն ձեռքը խփեց սեղանին:—

Մի հարց, ընկերներ, բայց խիստ կարեվոր...»:

... Յե՞վ թափորի յելած բոլոր զնդերի,

Բոլոր ըմբոստ քանակների առաջում—

Արդեն ննջած առաջնորդի պանծալի

Անձնուագործ դիակառքն է շառաջում...»

Ծանոթ թու թյուն. բ) Գիծը կարող է դրվել նաև չերբ կարաչունչ նախադասութունների մեջ, չերբ բազմաթիվ և չերբեմն բարդ չերկրորդական նախադասութունների մեջ, կամ նրանցից հետո, դրված գլխավոր նախադասութունը հարկավոր և լինում տեսանելիորեն, վորոշ նշանով անջատել նրանցից, որինակ՝ չերբ նոր գաղափարը տարածվում է չերկրի մեջ՝ մի ծայրից մինչև մյուս ծայրը, անծայրածիր դաշտերի ու բարձրաբերձ լեռների վրայով՝ վորդեգրվելով ամբողջ աշխատավորության կողմից, վերածվելով մի ինքնաբուխ կանչի, վորին խանդավառորեն արծազանգում է վողջ ժողովուրդը,—այդ գաղափարն, անշուշտ, կկենսագործվի յե՞վ այդ կանչն անպայման միս ու արյուն կդառնա:

Գծիկը կամ միության գծիկը (-) դրվում է իբրև մի բառ ստեղծած չերկու բառերի միջև, որինակ՝ խրճիթ-րնթերցարան, խոհանոց-գործարան, բանվորա-գյուղացիական, աման-չաման, ստեպ-ստեպ, խունջիկ-մունջիկ և այլն:

Յենթանման դրվում է տողի վերջում, չերբ բառը տողադարձի յե չենթարկվում:

Ապաթարցն այժմ համարյա հանվել է գործածութունից. նա դրվում էր բազի յենթադրական յեղանակի կը յեղանակի յի վրա, չերբ ընչեր դրվում, և մի շարք այլ դեպքերում, չերբ սղվում էր վորեք ձայնավոր, և հարկավոր էր բացահայտել այդ անստվոր սղումը, որինակ՝ կրգամ-կ'գամ-կգամ:

... Լճակ, դու յես թագուհիս,

Ձի, թ'հովե մ'ալ խորշոմիս,

Դարձյալ խորքիդ մեջ խոռով

Ձիս կը պահես գողդղալով...»

Այս քառյակի մեջ չերկրորդ տողում Գ. Դուրյանը սղել է թե շաղկապի և ձայնավորը և մը հողի ը ձայնավորը, վորոնց փոխարեն դրված է ապաթարց:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ  
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՈՍՔ ՅԵՎ ԵԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 1. Խ Ո Ս Ք

1. Յույց սալ, քե քանի՛ միտք է արտահայտված հեռավայր չափաքան  
ծախսերից յեվ արձակ հասվածներից յուրաքանչյուրի մեջ:

1 Յերգ, գրված խաղողի սերեվի վրա

Թող խինդն այս անսպի՛ սիրաս վողողի,  
Վողջի՛ն Արևին, Հողին, Սաղողին:

Ալազան

Չ Ո Ր Ս Տ Ո Ղ

Հողն է, հողն է յեխում, յեռում  
Մեր բազկի տակ յերկաթեղեն,  
Յեվ արևն է յերգեր գրում,  
Յեվ ջերմությունն է հեղեղել:

Ալազան

Ք Ս Ա Ն Վ Ե Գ Ի Ն

Արևը ծագեց բորբ, լուսավարար՝  
Այն դժնի ու մութ գիշերից հետո,  
Այնքան հենարար է այնքան առաջ  
Արևը ծագեց բորբ, լուսավարար:  
Մենք գրավեցինք դերքերը հերթով,  
Բերդերը բոլոր ձեր արնով ներկած:

Արևն ե հորդել բորբ, լուսավարար՝  
Այն դժնի ու մութ գիշերից հետո:

Ալազան

II Տեղատարափ անձրևին նա բաղխեց տան դուռը: Ներսը քնել էյին վորդին, հարսը և թոռը: Ապա անձրևախառն քամին ծեծեց դուռը, ներսում ճրագ վառեցին: Դուռը բացվեց և անձրևի տարափի հետ տուն մտավ Սիդերո Սավվան:

Բակունց

Առաջին գրահապատները գրոհեցին Սենատի հրապարակից: Նույն ժամին տաճարի դաշտային հրետանին հրաման ստացավ կարճ ճանապարհով միանալ Պոլախլովցիների գործամասերին: Ապստամբ զինվորների գործայուններն արշավում էին Մանեփի և Ինժեներական դղչակի կողմից: Կարմիր գլխարկականները Ալեքսանդրյան այգուց գնդակոծում էին Չմեռային սրախտի գարպասները:

Բակունց

§ 2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Յույց ցալ, քե ամփոփ միսֆ արսահայտոդ բանի՝ Գախագասուրյունց կա բերված հասվածի մեջ:

Այնտեղ, Սև ջրի չքնաղ յեղերքներին եր, վոր ապրում եր Հասոն:

Յերկրի սիրուն ու քաջ պատանին եր նա: Վոչ մի մարդ նրան չեր կարող զինաթափ անել: Ավազակը սիրա չուներ նրա հոտի շուրջը ման գալու և վոչ իսկ գալլը՝ վոչխարի կողքին քարը գալու: Հասոն վորքան բարի յեր դեպի լավը, այնքան ել անդուլթ եր դեպի չարը:

Վ. Փափազյան

2. Արսագրեղ հեճեվայ հասվածները, ամփոփ միսֆ արսահայտոդ յուրաքանչյուր Գախագասուրյան վերջում վերջակեճ դնել յեվ Գախագասուրյունցը մեծաստուով սկսել:

Հենց առաջին որը յես ծանոթացա հարևաններին հետ այդ ինձ համար նոր և բավական հետաքրքրական շրջան եր նա

բաղկացած եր մեծ մասամբ իտալացիներից կար և մի ուսուսանող և մի հրեուհի ասամնաբույժ:

Զվարճության տաք միջոցին դուների մեջ նկատվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք վոչվոր ասաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, վոր նստած էյի դուների մոտ անծանոթը հենց առաջին վայրկյանից գրավեց ուշադրությունս յես դիմեցի նրան մոտ 16-17 տարեկան մի պատանի յեր՝ նիհար, դունատ դեմքով, կուրծքը փոքր ինչ ներս ընկած:

Շիրվանզադե

§ 3. ՊԱՐԶ ՅԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Յույց ցալ, քե մսֆի ի՛նչ, կապ գոյուրյունց ունի Գախագասուրյունցների միջեվ:

I Յերկրի սիրուն ու քաջ պատանին եր Հասոն: Վոչ մի մարդ նրան չեր կարող զինաթափ անել: Ավազակը սիրա չուներ նրա հոտի շուրջը ման գալու և վոչ իսկ գալլը՝ վոչխարի կողքին քարը գալու: Հասոն վորքան բարի յեր դեպի լավը, այնքան ել անդուլթ եր դեպի չարը:

Հեռատես եր աղան ու խիստ խորամանկ: Շուտով նկատեց Հասոյի սերը: Բարկացավ, կատաղեց, ուղեց սպանել հանդուգն հովվին, բայց խոհեմ եր, չուղեց իր անունը կտարել և մի հովվի արյունը մտնել ընդունայն:

Վ. Փափազյան

II Թեկուզ և մեծակ լինի փարախում,  
Սժգանա Սաքոն ի՛նչից ե վախում:  
Հապտ մի նայիր նրա հասակին,  
Վո՛նց ե մեկնվել: Ասեա ահազին  
Կաղընքի լինի անտատում ընկած:

Հ. Թում.

2. Արսագրեղ Գախ պարզ Գախագասուրյունցները, հետո՛ բարդ:

I Առաջին տարին Վարդանն ուսման մեջ ցույց տվեց բավական շնորհք: Սովորեց կարգալ ուսերեն և հայերեն, նաև մի փոքր գրել: Նա ամեն յերեկո գասերը կրկնում եր հոր մոտ և արժանանում նրա գովասանքներին: Սակայն հանկարծ նրա

բանականությունը կանգ առավ վորպես կամակոր եջ գետի մեջ-  
տեղում և կարծես ալլևս չեր ուզում առաջ յերթալ: Բայց և  
աչնպես մանուկն ի ընե աշխատասեր եր. առնելով ձեռն ամե-  
նակարող համբերության մտրակը, սկսեց առաջ քշել բանակա-  
նությունը, անխնա հարվածելով նրան: Յեղ այն, ինչ վոր ըն-  
դունակ աշակերտները յուրացնում ելին առանց դժվարության,  
Վարդանը ձեռք եր բերում քրտինքով՝ բառիս բուն մտքով:  
Միայն մի առարկայում նա ընդունակութուն ցույց տվեց՝  
թվաբանության մեջ:

Շիրվ.

II Ուշ գիշերին գնացքը «Թիֆլիս» կայարան հասավ: Մա-  
րությանները վերցրին իրենց ձեռքի իրեղենները և շապակեցին  
դուրս գնալ վագոնից: Շահյանն ել առավ իր բարձն ու ճամպ-  
րուկը և հետեց նրանց:

Դուրսը՝ կայարանի հրապարակի վրա մարդիկ և կառքեր  
իրար ելին անցել: Ամեն կողմից կառք ելին կանչում: Կառա-  
պանները հայհոյում ելին իրար: Վերեից բարակ անձրև եր մա-  
ղում: Յեղանակը խոնավ եր և ցուրտ: Մարությանն իր բոլոր  
ընտանիքով ներս թափվեց առաջին պատահած կառքը: Շահյանն  
նլ իր համար մի կառք ճարեց և ճամպրուկն ու բարձը դնելով  
այնտեղ՝ շտապով մոտեցավ Մարությաններին կառքին, վորի  
մեջ նրանք տեղավորվելու վրա ելին:

Ն.—Դ.

§ 4. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՅԵՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Հետեվյալ ցախագասուրյուններն մեջ ցախագասուրյան  
անգամների գասավորութունն այնպես փոխել, վոր միտքը  
չաղբասվի:

Փոքր, աննշան գյուղ և կաղնուտը (1): Բայց լավ պար-  
տեղներ ունի կաղնուտը և ավելի շատ բարդիներ, անթիվ շեկ  
բարդիներ (2): Բայց գյուղի հանգստութունը վրդովվեց ավելի  
այն ժամանակ, յերբ տանուտեր Արտնը հայտնեց, թե Վելիվ և  
բացվել և թուղթ և յեկել զապաս տղերանց հավաքելու (3):  
Կաղնուտցիներն այդ որը լավ են հիշում (4):

Ստ. 2.

2. Նախագասուրյան անգամներ թախսված գասավորութունը  
այնպես կանոնավորել, վոր միտք սազվի:

Նրա թուլացել ծնկները ելին, հարբածի կարողանում նման  
չեր գալ ման ուղիղ (1): Այդպես կես շարունակվեց ժամ մոտ (2):  
Հետո գալով նա շուռ ու մուռ, դարձյալ սեղանին մոտեցավ և  
հանկարծակի պես խելագարի հարձակվեց վրա հիշատակարանի,  
վերցրեց և ճմուռել այն ձեռներով սկսեց և կրճոտել առամե-  
րով... (3): Վառարանը վրա հանգելու չեր, արդեն յերեսն ծածկ-  
ված կրակի եր մոխրով (4):

Շիրվ.

3. Բառերի վերջավորութուններն այնպես փոփոխել, վոր  
ցրտն իրար հետ կապակցվեն իբրև ցախագասուրյան  
անգամներ յեվ միտք արտահայտեն:

Լենին հրապարակ կարմիր բանակալիները զորահանդես  
եր (1): Նորակոչիկներ հանդիսավոր յերդում սալ կառավարու-  
թյան անդամներ և հրամանատար՝ հովատարիմ մնալ իրենց կո-  
չում, զգաստ պահպանել և պաշտպանել մեր յերկիր սահմաններ  
թշնամի վտանգութուններ (2): Բոլոր գեմքեր ուրախություն  
արտահայտել (3): Թարմ և կենսախիչնդ լինել մեր բանակ (4):  
Նա ունենալ պայծառ և վեհ կոչում (5): Նա հպարտութուն կրել  
բանվորապետացիական կարմիր բանակ անուն (6):

§ 5. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲՆՈՒԹՅՈՒՆ

1. Գտնել պասմոզական, հարցական, բացականչական յեվ  
հրամայական ցախագասուրյունները:

I Կինը ներս մտավ և տեսավ, վոր Հաջի աղան մտադրու-  
թյուն չունի քնելու (1): Հարցրեց (2):

— Բա, ինչո՞ւ լաթերդ չես հաներ (3): Լաթերդ հանե,

պառկիր (4):

— Ինչոր կընիմ, թեք կըյնա, կնիկ, — ասաց սարսափած (5):

— Վո՞ւյ, աչքս քոռանա (6)...

— Աշխարհք չի գալի բարով (7), — ասում եր Լիլոն ու

չաց լինում (8)...

Թոթ.

- II Յես նայում եմ յեղնեբին, մթին սարին:  
 Մենք միասին չենք լողանում, ել այգիներ չենք գնում:  
 — Ո՞վ քեզ սասց, Անդո...  
 — Իմացել եմ:  
 — Անդո, ուղձեմ ես սո՛վորես...  
 — Իմ սո՛վորելը վերջացավ... Ապերը հրեն հիվանդ...  
 — Ամառները յես քեզ գնա տամ, — ուրախացած բացա-  
 կանչեցի յես:

Սունացած թուղթն արնազույն եր դառնում, և սև աա-  
 սերը պողպատի սառնությամբ ասում էյին.

→ Սաղազություն խրճիթներին, պատերմզմ պալատ-  
 ներին...

Լույսերը չեյին թարթում, նրանք չքացել էյին:

— Իբրոշակը շարժիր, — գոտաց սպիտակ ձիավորը և նայեց  
 ձորի կողմը: Այդ վայրկյանին պատշգամբից բացվեց գնդա-  
 ցի՛րը: Կինը ճչաց.

— Վա՛յ, բնյաս...

Բակունց

2. Արսագրել առաճնի՞ն-առաճնի՞ն հաստակաց յե՛վ ժխտական  
 նախագասուրջաններ:

- I Ընձի մի մորթեր, Արան հւր թողունք երթանք (1)....  
 «Չեմ տար, մի տանիք», գոռում եր Ակորը քնի մեջ (2)....  
 Ներքեից դիտողները չիմացան, թե ինչ եր կատար-  
 վում (3)....

Թոթ.

II Իմ յերևալը նրան դարձացրեց (4): Նա չընդհատեց նվա-  
 ցելը (5), բայց չափազանց շփոթվեց, կարմրեց (6)....

— Դե, լավ, հին դարձանը քսմուն չաանք (7): Գեղ ել  
 Գյուլում, Վարդանի հետ կաանեմ Բագու (8)....

Շիրվ.

III Սեպտեմբերին ծնում է Վատիլի յերկրորդ կովը (9):  
 Այդ սրը ուրիշ բան չի արձանագրել (10): Սեպտեմբեր ամսը-  
 վա նշանավոր դեպքերից և խոտի հաշիվը (11).... Որագրում

Տիգրանուհու մահվան առթիվ ուրիշ մանրամասնություն  
 չկար (12):

Բակունց

## ՊԱՐԶ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

§§ 6, 7. ԳԼԵԱՎՈՐ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ.  
 ՀԱՄԱՌՈՏ ՅԵՎ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Հանել նախագասուրջան գլխավոր անգամները յե՛վ գրել  
 իբար կողքի:

Սև Բաղաքի ուայոնական կոմիտեն բաց է թողնում թուռ-  
 ցիկներ պաշքարի անհրաժեշտության մասին (1): Փողոցները  
 լցվում են սպիտակ թղթերով (2): Մարսելյոզը դուրս է քաշում  
 բոլոր մանր-մունը գործարանների բանվորներին (3): Շարքերը  
 խառնում են (4): Գործադուլային ալիքը սկսում է աննախըն-  
 թաց թափով մեծանալ (5):

Թոթ.

2. Առաճնի՞ն-առաճնի՞ն արսագրել համառոտ յե՛վ ընդարձակ  
 նախագասուրջանները՝ վերջիններիս մեջ ընդգծելով  
 յերկրորդական անգամները:

Տները, աները,  
 Կոնդի կույր աները,  
 Անլույս, հին աները  
 Նայում են դեմի դարեց:

Նավթը հատել է,  
 Լամպը ճաթել է,  
 Մութը պատել և սարից:

Իր հին յերգով  
 Նույն յեղեբքով  
 Ջրի, ժայռի

Զվարթ գանգով  
Վերջովում և  
Հողնած Զանգուն:

Ալազան

§ 8. ԼՐԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. Գտնել լրացման լրացումները յեվ առանձին արտագրել՝ յուրաքանչյուրի կողմին գնելով համապատասխան լրացյալները:

1 Գնացքն ուղևորվում էր առավոտյան ժամը տասին (1): Ի՞նչը կարող էր խանգարել Լեւին վերջին անգամ Լուրիդային տեսնելու (2): Մի յերկու տարուց հետո Լուրիդան կվերագառնա մշակված, կատարելագործված ձայնով (3)... Ճեղքելով կայարանի ամբարձր՝ Լեոնը մոտեցավ մեզ մի գեղեցիկ փունջ ձեռքին (4): Յերկրորդ գանգակի միջոցին Լուրիդան սկսեց վերջին հրաժեշտը տալ (5): Յես դիտում եյի Լեոնին (6): Պանդուկը լի յեր հաճախորդներով (7): Դժգոյս էր ընդհանուր ազմկի, գոտում-գոչումների ու հայհոյանքների մեջ մի բան հասկանալ (8): Ողի մեջ յերևացին մի քանի սպասունալի բուռնցքներ (9): Ոգնության հասավ Լեոնը (10):

Շիրվանզաղե

Ֆիրդուսի

II Հողմերի պես անցան անդարձ  
Շահնաշները քո դարի (1):  
Դու արշավում ես սրընթաց՝  
Դարերի հետ՝ քո հանճարի  
Արևաբաշ ուշխին նստած (2):  
Յեվ արծվական քո թևերին  
Մահմուդ շահի փիզն էր նստած  
Դարի պես խուլ և համբուխաց (3):  
Յեվ գու նայում եյիք անթարթ  
Կյանքի կապույտ հեռաստանին  
Մահմուդ շահի ծանրաքանդակ  
Իղլակի նեղ պատուհանից (4):

Յ. Զարյան

2. Կազմել հեռեվյալ ցախագասուրյուցներ սխեմաները:

Մտախոհությամբ նայեցի հորս յիակից (1): Ինչպես շուտ և հեշտությամբ կարողացավ ազատվել բացատրությունից (2): Անցյալ կերակի որն յեկավ մեր տուն Թոմաս Գասպարիչը (3): Վերջին լուրը լսելով՝ հայրս հանկարծ անսպասելի ուժով դուրս խլեց լրագիրը Թոմաս Գասպարիչի ձեռքից (4): Հորս գրության մեջ վոչ մի նկատելի փոփոխություն չի կատարվել դեպի լավ (5):

Նար—Դոս

ՅԵՆԹԱԿԱ

§ 9. ՅԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Գտնել յեվ ընգզծել հեռեվյալ ցախագասուրյուցներ յեճրակները:

1 Հաց աշխատելու համար յես ինձ ձգեցի Բագու (1): Հույսս մի ծանոթի վրա յեր (2), վոր նա պաշտոն կգտնի ինձ համար (3): Վոչ մի լուսամուտից բարեկամական մի հուշս չեր շողում ինձ համար (4): Յես չկայի (5), յես վոչինչ եյի այդ շեն ու հաստատուն տների մեջ ապրողների համար (6):

Վերջապես մի քիչ թափառելուց հետո յես գտա մի բաց դարպաս (7): Փողոցի լապտերի դժգուշն լույսն ազոտ կերպով լուսավորում էր այդ վայրը (8): Մի անկյունում խոտերի վրա պառկած էր մի մեծ շուն (9): Այդ միջոցին խոտի վրա աչքիս ընկան հացի կտորներ (10): Իմ հարևանն այդ բոպեջին աչքերը մեղմով պցեց վրաս (11). յես մի փոքր վախեցա (12). ով գիտի (13), մեկ էլ չհարձակվի: Բայց նա իմ սպասածից շատ ավելի բարի յեր (14):

Ավ. Իսահակյան

II Յես և ընկերս նստել եյինք քարին՝ հիացմունքով դաշտին եյինք նայում ու փորձում գտնել ծանոթ գյուղերը (1): Արևը կախ էր ընկել մայրամուտի կողմը (2): Սարից վով քամի լեր փչում (3), դաշտը վողողված էր արևի լույսով (4), և

արծաթի հարցի նման պարզում էյին վոչ միայն Արարսի ոճա-  
նման հոսանքը, այլև մի քանի փոքրիկ ընկեր ու գյուղական  
առուներ (5):

Յերկու կին կառուները վրա ցորեն էյին մաղում (6):  
Ողբ ջինջ էր և թախանցիկ (7): արևի տակ փայլելում էյին  
ցորենի քիսաերն ու թեփը (8), յերբ վոսկեզույն փոշու հեռ  
խառնված ցորենը կանայք մաղում էյին որորվելով (9):

### Բակունց

2. Արարել հեհեվյալ Գախազատուրյուններ յեհրականերն ու  
ստորոգյալներ յեվ Գախակել, քե ի՛նչ խոսքի մասով (գոյական,  
ածական, դերանուն, բայ յեվ այլն) են արահայցված  
յեհրակաները

I Ծանոթութեան խառնուրդի յեր՝ գեր, առողջ, ամբակազմ մի  
այրի, մտա հիսուն տարեկան (1): Նրա ամուսինը յեղել էր  
խոտլական ստորայի հուշարար, շատ վաղուց հայրենիքից տե-  
ղափոխված Ռուսաստան (2): Այրին՝ ապրելու ուրիշ միջոց չու-  
նենալով, պարագում էր սենյակները վարձու տալով (3): Հենց  
առաջին արը յեա ծանոթացա հարեաններե հեռ (4): Այդ ինձ  
համար նոր և բավական հեռաքրքրական շրջան էր (5): Նա  
բարկացած էր մեծ մասամբ խոտլացիներից (6):

— Խեղճ, — կրկնեց ուս ուսանողը կծու հեղեթյամբ  
(7), — բայց նա չի ուզում (8), վոր գուք նրան խղճաք սինյորի-  
նա Լուիզա (9): Նոտել անկարելի յեր (10): Բայց այս անգամ  
ինձ շիտթեցրեց նրա աշխատված կերպարանը (11): Ի՞նչ էր  
կեռնի նվազածը (12): Ի՞ժևար էր ընդհանուր արմիլի, գոտում-գո-  
չումների ու հայտարանների մեջ մի բան հասկանալ (13):

### Շիրվանզաղե

II Ամեն յերեկո, յերբ խավարը սև ջուրաներով սփռվում է  
ձորում (1), հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ  
ու գլխաթ շարվում են լույսերը (2): Շենքերում մինչև քնելը  
լավում են բանվորների խոսք ու զբույցը, ծիծաղն ու յերածը-  
տուրյունը (3): Ահա կանցնի մի յերկու տարի (4), հիդրոկայա-  
նը կայանք կտա նոր գործարաններին (5), ժայռի վրա կբարձրա-  
նա Լենինի հսկա արձանը և լույսերով վոզողված աչքերը

կբարձնի դեպի հեռուները (6)... Կարծես մեկը կածանի մի  
կողմից մյուսն. անցավ, յեակից շարժելով մանր քարերը (7):  
Սկոբը նորից դիմեց դեպի առաջին հարձակվողը (8), բայց սա  
արդեն անհետացել էր (9):

### Արագի

## § 10. ՁԵՂԶՎՍԾ ՅԵՆԹՍԿԱՅՈՎ ՆԱԽԱԴՍՍՈՒԹՅՈՒՆ

1. Արարել ընդգծված Գախազատուրյուններ յեվ յուրաճ-  
յուրի մոտ վակագծում Գախակել գեղված յեհրական (վոչ քե  
դերանվամբ այ հասուկ կամ հասարակ գոյականում):

I Մի ուս գեներալ կովկաս յեաներից  
Մի անգամ դեպի Թիֆլիս էր գալիս:  
Իր հետ նա գերի մի մանուկ ուներ,  
Սա տկարացավ, չկարաց տանել  
Նեղությունները հեռավոր ճամբի (1):  
Հազիվ թե լիներ հինգ-վեց տարեկան (2):...

### Լերմոստով

## II Միրելի Հոփլախիմե.

Նամակ էս պահանջում (1). Ի՞նչ գրեմ (2). Ի՞նչ ունեմ  
գրելու (3), Ի՞նչ կարող եմ գրել, յերբ շուրջս և ներսս կատա-  
րյալ դատարկութուն և տիրում: Ների՛ր, սիրելիս (4), սաստիկ  
հոգնեցի (5), ել վոչինչ չեմ կարող գրել (6):

Ընդունի՛ր կարոտալի համբույրներս (7):

. Ին Աննա Սարոյան (Նար—Դոս)

III Պետրոս Մինարյանը (այս էր ուղեկցիս անունը) հայոց  
հողերը գալոցի սան էր. ընավորութամբ բավական անհամ-  
բեր յեվ դյուրագրգիտ էր (1): Ուներ տարորինակ հայացք-  
ներ (2), վորոնք յուր խոսակցիներին մերթ զայրույթ և հաճախ  
զվարձութուն էյին պատճառում: Միրում էր վիճաբանել,  
ազատ մտքեր հայտնել, բայց յերբեմն ավելի հակառակելու,  
քան մի նշմարտութուն ասելու համար (3): Այտուամենա յնիվ  
այս բոլոր տարորինակությունների հետ միասին նանապարհի  
լավ ընկեր էր (4), վորովհետև սրտոտ էր յեվ սակավապետ (5):

### Մուրացան

**2. Արագրեյ հեճեվյալ հասվածները՝ գեղյելով ընդգծված  
ճախագասուլուրների յեճրակները:**

I Լողի յետեվում պահված՝ յես տեսնում եյի (1), վոր նրանցից մի քանիք իջան մեր կտուրի քիվի վրա: Յես միայն տասը քայլ հեռու յեմ նրանցից (2): Յես յերազում տեսնում եյի Ակորի աղալնիները (3): Իջել են նրանք գլխիս, ուսերիս, թեվերիս: Լսում եմ նրանց մրմունջը:

Թոթովենց

II Անդոն չկար, յերեք որ առաջ նա չբացել եր (1): Լռել եր մեքենան, ձորում մութն եր լինում գիշերները, յեվ այդ մութը տարածվում եր յեվ քաղաքի տափարակի վրա (2): Լույսերը չեյին թարթում, նրանք չբացել եյին (3):

Բակունց

**§ 11. ԱՆԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ**

**I. ԳՏՆԵՂ ԿԵՏԵՎԵՂ ԿԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԵՉ ԱՆԵՆՔԱԿԱ  
ՃԱԽԱԳԱՍՈՒՔՅՈՒՆՆԵՐԸ:**

I — Դիվան կըգա, պատասխան տուր,  
Յովի միջում կըմընամ,  
Հընար չըկա, բեր, այ կընիկ,  
Շորերս տնւր մի գնամ:

Ա. Պուշկին

II Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով  
Մի քանի կոճղեր դրեց կրակին,  
Նորից բարեց իր յերկրի կարգով  
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին:  
Գողն ել մի կոնից, գելն ել մյուս կոնից,  
Աչքդ թեքեցիր՝ բանիդ տերը չես:  
Քաշում են տանից, քաշում են դոնից,  
Ու չես իմանում, վոր կողմը թռչես:

Հ. Թումանյան

**2. Արագրեյ յեվ ցույց ցալ, թե ինչպե՛ս են արահայտված,  
իճչպիսի՛ ստորոգյալ ունեն անեճրակա ճախագասուլուրները:**

Բարիկենդան եր (1): Ձինն եկել՝ գիղվել, սար ու ձոր բռնել եր: Եսրը չիքը լցնես (2), եքուց պետք ե մատդ լպստես (3): Փորացավ ընկածի պես մարդ չի իմանում (4), թե թիքեն վոր կողմո՞ղն ա կուլ գնում: Թուհ, մարդ իբան հողին պետք ե ծալի (5), վոր փողի թամահ անի (6): Ով գիտի, մարդ սաղ կննա, թե չե (7):

Գնն, իմ խեղճ գիրք, գնն մարդամեջ,  
Գլուխդ քաշ քցի՛ր, մի նեղանար հեջ:  
Ականջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,  
Ինչ ասեն (8), խոսեն (9), տնւր ու համբերի՛ր:

Խ. Աբովյան

**ՍՏՈՐՈԳՅԱԼ**

**§§ 12, 13, 14. ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ. ԲՍՂԱԴԻՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼ  
ՅԵՎ ՎԵՐԱՅԱԿԱՆ ԲԱՅՈՎ ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ**

**I. Արագրեյ հեճեվյալ հասվածները յեվ ընդգծել ստորոգյալները՝  
պարզ ստորոգյալները մի գծով, բաղադրյալները՝ յերկու:**

I Բաղաքից շոսեն դուրս ե գալիս, սլաքի նման ձգվում, կամուրջի մոտ կեռ տալիս, ապա վոլոր-մոլոր բարձրանում բարձր սարը: Ու գնում ե, դնում ե շոսեն, ինչպես գետը, բազմաթիվ լեռնային արահետներ խառնվում են նրան, և ինչքան գնում ե, այնքան շատ ե ձեծված, այնքան հին ե ճանապարհը:

Ա. Բակունց

II Նոյեմբերն եմ վառվուռն,  
Նոյեմբերն եմ կարմրավուն,  
Բանվորի կռան մուրճն եմ,  
Գյուղացու մանգաղն եմ:  
Հոկտեմբերի դավակն եմ,  
Բանվորների պաշապանն եմ,  
Հիմք եմ գրել Հայաստանի  
Նորհրդային կարգերի:

Վ. Գրիգորյան

Զ. Յուշց ցալ, քե հեսեվյալ հասձածների մեջ ստորագելիական վերագիրները ի՛նչ խոսքի մաս են:

I Մանավանդ Սաքոյի հարգանքն ավելացալ, յերբ վոր ամենքն իմացան, թե Սաքոն մովրովի աչքի լույսն է (1): Այնուհետև գյուղացոյ պաշտպանը և թանգազին հյուերն եր Սաքոն, տանուտերների թե՛վ ու թիկունքը, գավառական ջրպետի սերտ բարեկամը, յասավուլների մտերիմը և նույնիսկ ողնա-կանների սիրելին (2): Սաքոյի անուըը ամբողջ գավառի մեջ հարգելի յեր (3): Մեր Կարոյի գուշնը պատի ծնի գարձավ (4): Նա կարծում եր, թե իր հաշիվը յերկու արասի հազիվ կլինի (5): մանթները անուըն լսեց: Ո՞վ կա մեր մհալումը, վոր բան հասկացող ըլի (6): դու չես մեր տերը, մեր դատավորը, մեր կյանքի ու մահի վճիռ ավողը (7):

Պ. Գուշյան

II Ա՛յլ են հիմա կովի, մահվան  
Մեքենաներն, ու անավոր:  
Ա՛յլ են հիմա հերոսության  
Ձեն ու իմաստը խորախոր:  
Հիմա ուրիշ են մեր գարի  
Չափանիշներն հերոսության:

Ն. Զարյան

III «Ձե, շատ տարրինակ մարդ ես» (1), մտածում եր նա: «Մեկ շատ խորհրդավոր և յերևում (2), մեկ՝ շատ պարզ (3)... Ձես իմանում, ինչպիսի մարդ և իսկապես (4): Այնինչ Զաքարն ասում եր՝ աղնիվ, խելոք և սուրբ մարդ և (5), սուրբը վորն է (6)... ցիլինդրով ել սուրբ կլինի՞» ծիծաղում եր նա:

Տղաքարդու յերկար շինելը ցուշց եր տալիս, վոր նա զինվորական եր (7): Զաղուշյանը նրա զեմքը կարողացավ տեսնել միտն հարեանցիորին: Նրան հանկարծ թվաց, թե այս զինվորականի զեմքը՝ ծանոթ եր իրեն (8):

Նար— Դոս

§ 15. Չեղջված ՍՏՈՐՈՂՅԱԼՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Յուշց ցալ, քե հեսեվյալ հասձածների մեջ զեղյված ստորագյալներով նախագասուրյունները վորո՞նք են (յուրաբանյուր հասձածի վերջում փակագծում նշանակված է, քե բանի այդպիսի նախագասուրյուն կա զվյալ հասձածում):

I Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան,—  
մեռան՝ չկորան...

Կրակն եր ցայտում նրանց աչք-ուռնքից,  
շանթը՝ շրթուքից...

Բաժակն են ըմպում վերածնության  
սյուներին գամված,

Ու հիմնը յերգում հեղափոխության՝  
հպարտ, չհաղթված...

Նույն վայրում այսօր ջահել-ջիվաններ  
Ըմբոստ շարքերով

Ձեր գովքն են անում ... ձեր թափված արյամբ  
սնվում, ամբանում...

Յե՛վ անմահներիդ յերգվում են անվամբ  
ու հպարտանում...

Հ. Հակոբյան

(Մի նախագասության մեջ ստորագյալը լրիվ է զեղջված, հինգ նախագասության մեջ ոճանդակ բայն է զեղջված):

II Այն, ինչ վոր ատալ հոգով չափ սիրում եյի, այժմ ասատիկ ատում եմ. կլուր բոլորովին չեմ գնում, պարահանդեսներ՝ համարչա յերբեք, իսկ թատրոն՝ շատ քիչ անգամ: Ամեն անգ և ամեն բանից շատ շուտ եմ ձանձրանում:

Նար— Դոս

(Յերկու նախագասության մեջ ստորագյալները լրիվ զեղջված են):

2. Հեսեվյալ հասձածների մեջ վերականգնել լրիվ կամ մասամբ զեղյված ստորագյալները:

I Յես չգիտեմ, Սաքոյի նախորդներն ել սուշն և մի

անունն ու խելքը ունեւիրն, թե՛ վոչ (1): Հաւանական է, վոր  
վոչ (2):

Գ. Պռոշյան

II Մրտարուխ մի անձրև գուրս հորդեց վերջապէս, վոր  
գեմ էր առել նրանց կոկորդում: Պաշարի ընթացքում ժամա-  
նակ չէր յեղել, իսկ հետո՝ առիթ (3):

Մ. Արմեն

III Պառավը տեսավ, վոր ասածն աղդեց. յերիտասարգ աղան  
ցնցվեց ահավոր հայտնութունից և գլուխը կախեց:

— Աչքովդ տեսար, — հարցրեց ի վերջո Արան:

— Աս աչքերովս (4), — ստեց պառավը:

Վ. Թոթովենց

IV Բարդ է նա իր զենքերի պէս,  
Խորն՝ իր փորում հանքի նման (5),

Բարձր է նա իր շենքերի պէս,

Իր մշակած արտերից՝ լայն (6):

Ն. Զարյան

V Միքայելի սիրտը ճնշվում էր, ներվերը թուլացել էին,  
յերեսը յերկայնացել (7), աչքերի սակերի խորշերը լայնացել  
(8) և կապտել (9): Ամբողջ գիշերը չէր քնել:

Շիրվանզադե

VI Ռխան աղբուրից ջուր է առել  
կույս սափորով լուռ ու մունջ,  
Ոխտը ծաղկից ծաղիկ քաղել (10),  
Կապել սիրո ծաղկեփունջ (11):

Հ. Թումանյան

§ 16. ԱՆԴԵՄ ՆԱՆԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Գեներալ անգեմ Գախազասուրթունները հետեվյալ հասվածների մեջ՝

- 1. Դեպի վեր, դեպի վեր ... անվերջ է ուղիս,  
Հողնեցան բազուկներս այս կովումն անդուր:

Սպառվեցավ և վերջին շունչն էլ ծկներիս,  
Դեպի վեր, սարն ի վեր, քաջասիրտ զինվոր:  
Դեռ հեռու չե կատարն անամուլ ու հստակ,  
Բայց յեթե չհասնենք այնտեղ մենք այսոր,  
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ:  
Դեպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինվոր:

Հ. Հովհաննիսյան

2. Ինչպէս թվել, ո՞վ Ֆիրդուսի,  
Մեր մահացման զենքերն ամեն.  
Ինչպէս գրել մեր որերի  
«Իլիականն» ու «Շահնամեն»:  
Յերգել այնպէս կայտառ յամբով,  
Վոր սրտի պէս յերգը տրոփե.  
Մուրճի նման կայծակնացայտ՝  
Յերգը զարկել հողիններին,  
Յերգով ձուլել, տաշել մարդկանց,  
Յերգով հղկել ծուռն ու թերին:

Ն. Զարյան

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԳԱՄՆԵՐ

§ 17. ՅԵՆԹԱԿԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Արտագրել հետեվյալ հասվածների մեջ յեղած յենթակաները  
իրենց լրացումներով:

- 1] Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,  
Հրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի:  
Գյուղն էյին իջել հովիվ պատանիք  
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի (1):  
Ամբողջ մի ամիս խուճրը զինավառ  
Սարեր ու ձորեր վոտնատակ տվեց (2):  
Ինչպէս մի հեղեղ վեր կենար հանկարծ,  
Յերկնքի մթնած ամպերից իջներ,  
Ինչպէս փոթորիկ սաստիկ սրբնիթաց,  
Գյուղից սլացան մի խուճը կտրելճներ (3):

Յեւ մի քանի բնիկեր տղերք,  
Չորում, գետի յեղերքին,  
Փոս փորեցին ու սրտաբեկ  
Հողին տվին հովվի դին (4):

Հ. Թումանյան

II Յեւ մի խորունկ զայրույթ, վառվող կատաղություն  
բռնկվում է մի ժամանակ մեծ, առատ տան դավակների մեջ (1):  
Այս և ուրիշ տեսակ մտքեր ներշնչում էին յեղբայրներին՝  
ամեն ինչ թողնել և լուսնին ընկնել (2): Բայց մուրհակներից  
հետո նրանց տերն ապրել չեր կարող (3): Մինչ այդ, աղայի  
կինը սթափվում է, դուրս է վազում և ճիչ ու աղմուկ բարձ-  
րացնում (4): Յեւ ճիշտ վոր, ուրիշ ճար չկար (5): Լսվում է մի  
խուլ թնդյուն (6), հետո բարձրանում են ճիչեր, աղմուկ, և  
չորս յեղբայրները հաղիվ կարողանում են իրենց դուրս նետել  
սյուղից, փախչել ազատվել հետապնդումից (7):

Վ. Փափազյան

§ 18. Վ Ո Ր Ո Շ Ի Չ

1. Արսագրեւ ընդգծված վորոշիցներն իրենց վորոշայի հետ յեւ  
յուրաբանցյուրի կողմից գրել, քե ի՛նչ խոսքի մասով են արսա-  
հայտված (ածական, գոյական, բվական, դերանուն յեւ այլն)  
յեւ ի՛նչ հոլով են գոյական վորոշիցները:

I Ստեփան Շահումյանին

Միրող վորպես վառ ատրուշան պահիր վառ  
Միրող հրկեզ, մթնում դաժան, պահիր վառ:  
Միրող խանդոտ, հրաբորբոք, պահիր վառ:  
Խինդը տենդոտ, սիրտդ՝ վահան, պահիր վառ:  
Չար աշխարհի խավարի գեւ պահիր վառ,  
Վորպես դրոշ արնանման պահիր վառ:  
Հեւվում անտուն յեղեր խնդուն, պահիր վառ,  
Միրող բորբոք՝ վարդ վառման պահիր վառ:  
Վորպես խարույկ յեյնող վկա պահիր վառ:  
Սրեւ պես, սիրտդ վառման պահիր վառ:

Վ. Տերյան

II Ավանդաբար կիրառվող մի սովորույթ կար Շիրակում,  
վոր մեր բուրդ հովիվներն արածում էին մեր հոտերը մինչև...  
ոգոստոսի սկիզբները: Յես պիտի պատմեմ իմ հովվական որե-  
րից մի որ, մի գիշերվա կյանք: Անհուն քաղցրությամբ ապ-  
րած մի գիշեր՝ բնավ չկրկնվող: Անխառն և անթերի մի գե-  
ղեցկություն: Բսան-քսանմեկ պատանի ընկերներով հովվում  
էինք մեր օտվար հոտը: Մենք հավաքվել էինք հոտին մո-  
տիկ, ձորակի լանջից բղխող ագրյուրի յուրը: Մտքաբ ծխում  
էր հաստ թղթով վաթաթած, խոշոր, կոպիտ դանակը: Յերկու  
դամվա խորունկ մրափում էին:

Խեղճ աղքատի հողին դուրս գա,  
Բարից-հողից հաց քամի:  
Բեռով հացը հարստին տա,—  
Հարուստն իշխի, վայելի:  
Խեղճ աղքատը դառը դատի,  
Դատարկ նստի ... հեյ, աշխարհ,  
Ել ինչու յես քարը թողնում  
Բարի վրա, քա՛ր աշխարհ:

Ավ. Իսահակյան

2. Հեսեվյալ հասվածների մեջ գտնել յեսագաս վորոշիցները,  
արսագրեւ հասվածները՝ բոլոր յեսագաս վորոշիցներն առաջ  
բերելով յեւ առաջագաս վորոշիցները յես սանելով:

I Հայացքն իմ սուր, վոր կարում է անձիր  
Լայնությունները, դաշտեր անհորիզոն,  
Յես հառել եմ անա այս մեծ դժին՝  
Սանմանածրին՝ աշխարհը կիսող:

Վ. Նորինց

II Մի քանի կտուրների վրա գեղնին են տալիս դոռմուկ-  
րը, մի քանիսն էլ փռել են իրենց լաթերը, կարմիր, կանաչ:  
Նրանցից մեկի դոտին ծոպավոր է, կարմիր-կապույտ փունջերով:

Ա. Բակունց

III Մնաք բարով ասում եմ յես բոլոր մարդկանց՝ չար ու  
բարի...

Մնաք բարով ասում եմ յես ընկերներս՝ մոտ ու հետուս  
Վոսոխներս՝ չար ու արթուն, ասում եմ յես մնաք  
բարով:

Վ. Տերյան

IV Մի ինչ վոր ցուրտ բան, կլորիկ ու պատիկ, հրացանի  
կոտորակի պես թրխկաց Սաքուլի յերեսին, վոր վերմակի տակ  
պառկած դիտում եր մոլեգնած բնության այդ արհավիրքը: Վա-  
նիչկան նախ փողը վերցրեց, պահեց ծոցում, հետո մոտեցավ  
պատի վառարանին, բաց արեց ծխնելույղի անցքի դռնակը,  
աչնտեղից հանեց հոր պարիկը, թղթի մեջ խնամքով փաթա-  
թած, և տվավ հորը: Պատրիկյանը վեր բարձրացավ տանտիրոջ  
բնակարանի պատշգամբը, վորը, մաքուր ու կարմրավուն,  
պլպլում եր հայելու պես...

Նար—Դոս

§ 19. ՀԱՏԿԱՅՈՒՅԻՉ

Պսենկ հեռեվյալ հասվածների մեջ յեղած հասկացուցիչները յեվ  
արագրել իրենց հասկացյալների հետ՝ յուրաբանցյուրի կողքին  
գրելով, քե ինչ խոսքի մասով և արտասանված յեվ ինչ, և  
ցույց տալիս՝ պատկանելութուն, սերունդ, քե՞ վերաբերութուն:

- 1 Մի յերգ գիտեմ յես անման,  
Հզոր մուրճի թափի նման....  
Ծնվել և նա մութ հանքերի  
Մետաղակուռ յիրականերից  
Ու ձայն առել քլունգների  
Ցասկոտ ու յեշտ հուր զարկերից:  
Հեյ, իմ յերգը միշտ անման,  
Հզոր մուրճի թափի նման....

Յեվ մարդկության հավատալիքն յես յերգեցի—  
Ծաղիկներով վողջ պսակված մի մեծ յերթի....  
Յես յերգեցի հուրը հալող ժանտ բոնուլթյան  
Յեվ հրապուրել նորեկ կյանքի գեղեցկության....  
Վոչ, նման չեմ ձեր սիրելի պոետներին,

Ձեր քուրմերին յերգս ոտար, մի խորթ հնչյունս  
Յես չուղեցի հաճոյանալ ձեր սրտերին  
Այս առորյա, մեղկ ու թունոտ մղձավանջում:

Հ. Հակոբյան

II Մարկոս Ալիմյանի հոյակապ աները, վոր հպարտ ճա-  
կասներով կանգնած եյին քաղաքի կենտրոնական փողոցնե-  
րում, մի-մի փուշ եյին դարձել քաղաքացիների աչքում, նրա  
բազմաթիվ հողերից ըզիտոդ նավթը խեղդում եր և դործարանի  
ծուխը կուրացնում նրանց աչքերը (1): Նա խաբել և, զողացել  
և, զոփել ու կողոպտել և խեղճերին, նա նուկնիսկ թունավորել  
և իր մի ընկերոջը (2): Նա վոչ վոքի բարեխն հեր սպասում (3):  
Արեգակը թեքվել եր դեպի մուտքը, և նրա վերջին ճառագայթ-  
ները վողոզել եյին բուսականութունից զուրկ, անհրապույթ  
քաղաքը և նրա առջև տարածված ծովի մակերեսը (4): Ծանր  
ու ճնշող և այդ քաղաքի արտաքին աղավորութունը (5): Այս  
յիզով Մարկոս Ալիմյանի վերջին խոսքը, վոր սակայն զուրս  
թռավ նրա բերանից շատ պարզ և շատ վորոշ (6): Մոր խոսքե-  
րը ճնշում եյին նրա հողին և սիրտը մորմոքում (7): Նրանց  
մեջ նա զգում եր իր արած քայլի բոլոր պատասխանատու-  
թյունն իր համար և ծանր հետևանքները՝ իր ծնողների հա-  
մար (8):

Շիրվանզադե

§ 20. ԲԱՅԱՀԱՅՏԻՉ

1 Արագրել բացահայտիչներն իրենց բացահայտյալների հետ յեվ  
ցույց տալ, քե ինչպե՞ս են ցրան համաձայնած (գեմֆով, քվով,  
հուլով):

- 1 Յես և իմ ընկեր Անդոն հայ ենք սանում նրա հոր  
բրուտ Ավագի համար (1): Նրա արհեստանոցի կողքը՝ ժայռի  
բնական ճեղքը հարմարեցված և ամանները թրծելու համար (2):  
Յեթե հարևաններից մեկը խոսք ընկնելուց Ձանուն հայտնում  
եր Մեծլումի ասածը, պատավի սիրտը կոտրվում եր, շողվում  
եր միտքը և մոլորված վերադառնում եր տուն, կանչում վոր-  
զուն՝ Ռուշանին, նստեցնում գոզը, և մասները նրա մաղերի

մեջ խրեւով՝ շոյում, հարցնում, թե սոված չի՞ (3)։... Ունանը պարտեզն ու բանջարանոցը նույնպես մաքուր ու խնամքով եր պահում, ինչքան կի՛նը՝ Ջանին դուռն ու բակը (4)։ Նրանց միակ կովը՝ պողը կոտրած նարգիզը, սերվում եր այն նախշուն յեքինջից, վոր Ջանին, վորպես ոժիտ, բերել եր Բարի Ոհանի տնից (5)։ Մնտոնի նկարը տեղը կախելուց հետո մեծ վորդու՝ Վարդի նկարն եր վերցնում (6)։ Պապս իզուր եր փորձել թարգմանի միջոցով հայտնելու, թե ինքը ուսաց թագավորին նամակ և ուղարկել միայն իր վորդու՝ Յեգոր Աղամովի մասին (7)։

Ա. Բակունց

II Բայց հանճարիդ բոցով անծիր,  
Տարերային վորպես արև,  
Դու «Շահնամեն» հորինեցիր՝  
Շղթայելով իրար դարեր։

Ն. Զարյան

§ 21. ՄՏՈՐՈԳՅԱԼԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Ա. Մրտագրել հեթեվյալ հասվածների մեջ յեղած ստորագրյալները իրօսց լրացումներով։

I Ասաղը չխոսեց այլևս։ Դնաց պառկեց մինդարի վրա ու քնեց։ Հետեյալ որերը տնից չեր հեռանում։ Յեվ մի յերեկո հորը հայտնեց, վոր ուզում և նիգյարին փախցնել Մաքու։

Կարտան իր սուր դանակը խրում և մինչև նրա հոգու խորքը։ Յեվ Ասաղը հուզմունքից խեղդված վեր և կենում և հենվելով պատուհանին՝ բարձր խոսում նիգյարի հետ, հանդիմանում, աղաչում նրան, նայում յետ, յետ, դեպի մշուշում սուղվող Մասիսները, կապտած Յերևանի հեռուները,

Գ. Դեմիրճյան

II Հետեյալ որը, վաղ առավոտյան, գյուղացիներին մի մեծ խումբ Կահնուտից ճամբա ընկավ դեպի կայարան։ Մարդ, կին, ջահել ու ծեր իրար խառնված գնում էին դաշտի ճանապարհով, վոր վորը-մորը ձգվում եր արտերի միջով և այդպես գնում դեպի կայարան։...

Արտերին նայելով գյուղացիները գնում էին մի հսկայական թափոր կազմած։ Ամենից առաջ իր ճերմակ ձիուն նստած՝ գնում եր տանուտեր Արսենը՝ չերքեղի չուխեն հագին։...

Բուրբի մեջ սակայն ամենից ավելի անհանգիստ եր Մարան նանը։ Աշխատանքի միջոցին և թե պարապ ժամանակ նա Դավթին չեր մոռանում, թե դաշտում, յերը հասած արտերում զընգում եր գերանդին, թե այն ժամանակ, յերը կովերը բառաչելով գալիս էին հանդից, թե տանը, յերը հարսը ման եր գալիս առաջին, նա վորդուն մտաբերելով շարունակ քրթմընջում եր։

Ստ. Զորյան

§ 22. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

1. Մրտագրել հեթեվյալ հասվածները յեվ ընդգծել ուղիղ խնդիրները։

I Զաքարն իրեն հատուկ շատախոսությամբ մի բան եր պատմում կնոջը, յերը հանկարծ ցիլինդրով և վայելուչ հագնւրված մի մարդ, վոր գալիս եր նրանց դիմացից, գրավեց նրա ուշադրությունը։ Նա լոկեց և զարմացած նայեց այդ մարդուն։ Նրան թվում եր, թե այդ մարդը ծանոթ և իրեն։ Բայց ցիլինդրով մարդը ուշադրություն չդարձնելով վնչ նրա և վնչ կնոջ վրա և մինչև անգամ կարծես չտեսնելով նրանց, անցավ նրանց մոտից և հեռանում եր։

Նար-Դոս

II Յեվ անա մեկն անվեհերներից  
սուրը ձողը ձեռքում  
Կաթսայի կուրծքն և զայրույթով մխուռ  
յերկաթը խայթում.  
(Կարիքն և կռել զայրույթ ու վրեժ  
նրա մեծ սրտում).  
Կարմիր հալոցը արյունի նման  
վիժում և ուժգին,  
Կարծես հոխորտում կլանել նրան,  
Ով վոր խիղախեց վերք աալ իր կրծքին  
Հ. Հակոբյան

2. Առանձին-առանձին արագրել անձի յեվ իրի ուղիդ խնդիր-  
ները. առանձին արագրել նայել անձի առում ունեցող, բայց  
անձ ցույց չսվող ուղիդ խնդիրները՝ բացատրելով, քե ինչո՞ւ յեմ  
հրահման անձի առումով գրված, ի՞նչ է ցանկացել արահայտել  
հեղինակը՝ իրի հայցականը տրականի ձեվով գեղելով:

I Ուզում ելի գրելի և համբուրել և՛ ընկերներին և՛ բոլոր  
մարդկանց, և՛ քարերն ու սարերը: Յեվ ախեղերքի բոլոր  
աստղերը համբուրել էյի ուզում: Յեվ զգում էյի ինձ բոլոր  
արարածների և բոլոր իրերի մեջ անմեկին ու անբաժան...  
Վերադարձավ մեր ընկերներից մեկը՝ Հովակիմը, վոր գնացել էր  
Սենոյի հետ գյուղի բոստաններից մի բան «թուցնելու»:

— Տո՛ւ, ընչի՞ ուշացար, — գահավեժ շատպեց Նազարեթը,  
մինչդեռ մենք լարված հետաքրքիր նայում էյինք, թե Հովակիմը  
ինչ բարիք պիտի թափեր մեր առաջ:

— Հորդ մեռելի գլխուն վառվող մոմը շինող մեղրա-  
ճաննին կփնտռելի:

#### Ավ. Իսահակյան

II Կույր վարպետը մենակ էր իր դաշնամուրի հետ և  
միասին՝ նրա հետ: Նա լացացնում էր այդ հարազատ գործի-  
քին, վորին վիճակված էր իր վաթսուսամյա վշտի ընկերը լի-  
նելու տխուր պարտականութունը (1):

Գնում է Մուկուչը լոբիններին բժշկելու, բայց նրա մըտ-  
քերն ուրիշ տեղ են (2):

— Կարիք կա, ընկեր Փարսաղանյան. յեթե կարողանաք  
ըմբռնել նրան, այդ չոր տախտակին (3):

#### Մ. Արմեն

III Յես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, վորքան չեք  
սիրում Լեյլան Մեջլումին: Յես քեզ սիրում եմ, այնքան եմ  
սիրում, վորքան չի սիրում թիթեռը նրազին, ստեակը՝ վար-  
դին, աշխարհն՝ արևվին և բույսը՝ հողին:

#### Վ. Փափազյան

### § 22. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ

Գտնել մատուցման, անջատման յեվ միջոցի անուղղակի  
խնդիրները հետեվյալ հասվածների մեջ:

I Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին,  
նայեց կոշիկներին հնացած ծայրերին, դուրս յեկավ սենյակից,  
դուռը փակեց կախովի կողպեքով, բանալին գրպանը կոխեց,  
անցավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, վորը  
մաքուր ու կարմրավուն, պլպլում էր հայելու պես՝ առաջնավա-  
արևի պայծառ ճառագայթներով վաղողված:

Նար—Դոս

II Մենք նոր իմաստ ու լույս տվինք  
Աշխարհաշին աշխատանքին:  
Նա յե հիմա մեզ մոտ հերոս,  
Ով իր կողնյա բազուկներով  
Ձև է տալիս թուջին, քարին:  
Ով յերկաթե մագիլներով  
Փորում է կուրծքը կուռ՝ հողի,  
Լեռնաշղթան յերկրից քերում,  
Սառնում է ծոցն անափ ծովին:  
Յերկրազնդի կաշին քերում,  
Վոր նրան նոր կեղև կարի:

Ն. Զարյան

III Քաշեց արևը ծիլերը հողից  
Իր շողապայծառ, լույս մագիլներով:  
Ծփաց կանաչը, ծածանվեց հովից  
Արտերի թավիշ հորձանքը սիրով:

Հովհ. Շիրազ

Մտազրեղ քննողոված պարագաները յեվ նշանակել, քե ի՛նչ պարագա յեն նշանք (տեղի, ժամանակի, ձեվի, նպատակի, պատճառի յեվ այլն) յեվ ի՛նչ հոլովով են գրված (գոյականները):

I Լենինականի հին թաղերից մեկում՝ Ջորի բողազում, վորն ամենայն իրավամբ դեռ կարող ե կրել Գյուլմրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հոչակավոր վարպետ ուստա Մկրտիչը (1): Մական նա պառկել էր և մեռնում էր մահվան դատապարտվածի անխուսափելի մահով (2): Նա մեռնում էր, վորովհետև հասել էր իր նպատակին, վորովհետև վերջացրել էր իր հաշիվներն աշխարհի հետ (3): Նա դրսում այլևս վոչինչ չուներ անելու (4): Նա յեկավ տուն, հանվեց, պառկեց, վորպեսզի այլևս յերբեք վեր չկենա (5)... Տանը գտնվում էին միայն ինքն ու իր հարսը (6): Հարսն էր, վոր բարձր դրել էր ուստայի մեջքի յետեվը, և այժմ ուստան հենված այդ բարձին՝ լուսամուտից նայում էր դուրս՝ դեպի աշխարհը, վորից ինքը շուտով պիտի հեռանար (7): Այդ յերկու տների արանքից յերևում էր ձորակի տափակ ու լայն հատակի մի ընդարձակ պատան՝ այնտեղով հոսող սակավաջուր սովակով (8):

Մ. Արմեն

II Ուր վոր գնամ՝ հեաց կգա—սրնգահարըդ իրիկնային, Արովյանի պատին կոթնած—սրնգահարըդ իրիկնային: Բոլոր թողած կայաններում յես կլսեմ յերգն այդ անկամ, Վոր յերգել և հազար անգամ—սրնգահարըդ իրիկնային:

Գնում ենք ու գնում ենք քեզ հետ,  
Մայրերի նանապարհով՝ հովիտ.  
Չի հասնում այստեղ յեվ վոչ մի թերթ,  
Մշուշները խոտվող մի միաք:

Գ. Մահարի

III Յերազումս մի մաքի  
Մոտս յեկավ հարցմունքի:

— Ստույած պահի քո վորդին,  
Վճնց էր համը իմ ձաղի...

Իմ սուր, արթուն ականջում  
Մի խոր ձեն և միշտ հնչում,  
Անհուն, անքուն կարոտով  
Իրեն մոտ և ինձ կանչում:

Մի հավք զարկի յես մի որս  
Թռավ գնաց վիրավոր:  
Թռչում և միշտ իմ մտքում  
Թեվը արնոտ ու մոլոր:

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,  
Հրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի.  
Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝  
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի

Հ. Թումանյան

IV Ամենահետաքրքրականը մի նկար էր պալատրայի վրա, վոր ներկայացնում էր յերկու պատանիների մենամարտությունը բռունցքներով՝ մի փողոցային յերգչուհու համար (1): Ներկայացումից հետո բոլոր յերաժիշաները գնացել են հյուրանոց ընթրելու (2): Արդարև, զառանցում էր նա, բաց ինչո՞ւ և ի՞նչ ... Ա՛խ, ներողություն,—գոչեց նա, հանկարծ ուշքի գալով—յես ... անքնությունից... (3): Այսոր գնացել էյի նբան շնորհավորելու յերեկվա աջողության համար (4):

Չնայելով իր չքավորությանը՝ յես մինչև այդ որը նրան կեղտոտ չեյի տեսել (5): Մի շիշ գարեջրի պատրվակով կարելի յեր նստել, և մենք նստեցինք (6): Նա ամոթից յերեսը դարձրեց ինձանից (7): Առանց վորեվի պատրվակի հրաժարվեցի մասնակցել սինյորա Ստեֆանիայի այդ որվա ուրախ խընջույքին (8):

Շիրվանզադե

ԳՅՆԵԼ ԲՅԱԳՄԱԿԻ ԻՐԱԳՈՒՄՆԵՐԸ յԵՎ ԱՐՏԱԳՐԵՎ՝ ԳՇԵԼՈՎ, ՔԵ  
ԳՆԱԳԱԳԱՍՈՒՔՅԱԳ Ի՛ՆՅ ԱՆԳԱՄ ԷՆՑ:

I Արդուլը հետը բերել եր մի յերիզավոր արախչի, մի  
կավազուչն ջվալ վերնաշապիկ, լայն կաշվե գոտի և իր առող-  
ջակազմ հասակը (1): Այստեղ ամբողջ գործարանը՝ բամբակի  
բաժնից մինչև ձեթի, սապոնի բաժինները, գործարանի բակը  
ևր բոլոր մասերով մի ընտանիք և (2): Այս բանվորները շատ  
են կուռ միացած, նրանք կանգնած են դրսի թշնամու դեմ՝ իր  
լսած Անգլիայի, Ֆրանսիայի, իսաների, շահերի ու հարուստների  
դեմ (3):

Գ. Դեմիրեյան

II Յերկնի մովին, կանաչ ծովին, անտառներին՝ խոր ու  
մթին,  
Գարնան ամպին լույս վոլորտում՝ ասում եմ յես մնաք  
բարով:  
Վոսկեղյթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,  
Արատաներին վոսկե արտում՝ ասում եմ յես մնաք  
բարով:

Վ. Յերյան

III Իվան Գրիգորիչ Մարությանը միջահասակ, չաղ ու բա-  
վական ջահել մարդ եր յեվրոպական սև հագուստով (1): Նրա  
լիքը, կոբրիկ և մաքուր սափրած յերևի կարմիր գույնը մի  
վայրկյանում թուավ դժբախտ լուրը լսելու ժամանակ (2): Նա չպի-  
տի ուշադրութուն դարձնի վնչ քամու, վնչ անձրևի վրա (3):  
Մի քանի լոպիյից հետո սևագույն նժուզներով լծված կառքը  
թանդալին, տաք մուշտակի մեջ փաթաթած Իվան Գրիգորիչին  
տանում եր գործարան (4):

Շիրվանզադե

IV Խորհրդային արտերի  
Վոսիկ հասկերն եմ սիրում,  
Արևը մեր մայրենի,

Այգեստանները հեռու  
Այգեստանները բերրի,  
Այգեստանները զվարթ,  
Բույրը գարնան վարդերի  
Ու վոսկեվոր հանդ ու արտ:

Գ. Մահարի

§ 26. ՄԻՉԱՆԿՑԱԼ ԲԱՌԵՐ

ԳՅՆԵԼ միջանկյալ կամ անկախ բառերը հետևյալ  
հասվածքներում:

I Սակայն նա իզուր և աշխատում ծածկել ինձից յուր  
վիշտը. մի վիշտ, և այն ել ծանր վիշտ, կրծում և նրա սիրտը  
դ մեծ մտատանջութուն պատճառում նրան (1): Իհարկե, նրա  
վիշտը Գրիգորի համար չի կարող լինել, վորովհետև Գրիգորն  
այնքան ել հիվանդ չե, վորի համար կարելի լիներ այդպես  
մտատանջվել (2): Վնչ, վնչ, յես այդ բանին վոչ մի կերպ չեմ  
ուզում հավատալ (3): Գուցե, այն, ուրիշ մարդիկ այդպես  
անեն, բայց իմ հայրը... (4): Առաջին նվագ, կարծես, չկարո-  
ղացավ ճանաչել նրան (5), վորովհետև նախ մի բոպե, ըստ  
յերևույթին, զարմացած և լուռ նայեց նրա դեմքին, հետո հան-  
կարծ բացականչեց... (6):

Նար—Դոս

II Լուսաբացին նա բարձրացավ կախազան  
(Արևածագ, ո՛ր, արշալույս արյունոտ).  
Կանգնած եյին վինվորներն ու քահանան,  
Գուհատ ու լուռ կանգնած եյին նրա մոտ...

Վ. Տերյան

III Ապրես հավետ, Մեծ Ֆիրզուսի.  
Դու, հիրավի, փառքիդ համար  
Ազամանդե սյուն կերտեցիր:

Ն. Ջարյան

Գտնել միջարկուրյունները հետեվյալ հասվածներում:

I Թեոսը մաճի վրա ընկած՝ գոմեշները քշողներին «հորովի-  
լին» եր ձայնակցում: Թեև տեսավ Ավագին, բայց չլսեց նրա  
ասածը:

— Բ՛ս, քեզ հետ չե՛մ ... եղ ի՛նչ բանի յես, և և՛ ...

— Հ՛ս, հ՛ս ... կանգնեցրեց գութանը Թեոսը և դարձավ  
դեպի յես (1):

— Յ՛մ ... արեց Ավագը, — տ՛ն, վ՛նց թե ...

— Տ՛ն, փիյե ... գոչեց տաքացած Ավագը, — ո՛վ քեզ  
կանչեց, վոր անես, ո՛ւր եյիր հողի վրեն քրտինք թափում (2):

— Եղ ա, վոր չես իմացել, և ... հողը վոր կա, աչխա-  
տավորինն ա, վրեն քրտինք թափողին (3):

Վ. Փափազյան

II Հե հեյ,

Հեռավոր Հինգում,

Իխուրի գավառում փոքրիկ՝

Հայրենի գյուղն ե յերևում (1):

Ե՛լս,

Ռամ Ռոյը ի՛նչպես չհիշի,

Թե քանի միտեր ու սիր

Հինգը շինել են խսիր

Ու նստած՝ քեֆ են քաշում (2):

Ջան,

Աղբբեյջան,

Եյ ջան,

Իգիթ ես հիմի,

Ջահել (1):

Ջան,

Աղբբեյջան,

Եյ ջան,

Սարահ խեյր,

Սալամ,

Բարև,

Ջան, ջան, ջան (2):

Ա. Վառունի

§ 28. ԿՈՉԱԿԱՆՆԵՐ

I. Գտնել կոչակաները հետեվյալ հասվածներում:

I Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատանի,  
Վոր բարձրացել ես ահա, լույսերի յերգով,  
Տես, բարձրանում են ահա սերունդներ քանի,  
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքո:

Գ. Սարյան

II Բայց տառապած մարդու համար չե՛ր ճառագել մի արև  
Մաքքսի նման ճաճանչափայլ, Ենգելսի պես հանճարեղ,  
Լենինի պես բոցակորով, Լենինի պես լուսահորդ  
Յեզ քեզ նման մեծ ու հստակ, ո՛վ պողպատ! առաջնորդ (1):  
Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,  
Դու մարդկային յերջանկության ճարտարապետ ու  
դարբին:

Ն. Ջարյան

2. Մտազրեկ հետեվյալ հասվածները յեվ բնագծեկ կոչակաները  
մեկ գծով, իսկ միջարկուրյունները՝ յերկու գծով:

I Հեյ, ձեզ մատաղ, բանվոր տղերք,  
Մեկ ել, մեկ ել, մի գարկ ավեք,  
Մի գարկ ավեք ցարի գահին,  
Վոր խորտակվի նա հիմնովին:

—  
Հեյ, ազատության անպարտ զինվորներ,  
դուք, վոր անխուզ

Ներկեցիք փողոց ու գործարաններ  
ձեր տաք արյունով ...

Ջ. Հակոբյան

II — Այ, ուստան Դավիթ, տասը մանեթ հինգ շաչի նիսիա  
կա վրեպ. բեր սուր, ախպեր, ու ելի ինչքան ուզում ես նասի  
խմի, քեզ անուշ ըլի (1):

— Աղջի, քունդ տանում ա, գնա քնի (2):

— Աղջի, բա եդ քոռացած աչքերովդ տեսնում չես՝  
արևը մեր ա մտել, խի՞ չես փարգեքը քաշել, վոր մի քիչ հով  
մտնի, — ասաց գիծ-Հոռոմսիմը: — Այ, վնչ ունենամ քեզ պես  
հարսը, վնչ (3):

— Ըր ... , ցավից մղկտաց Անանը և յերկու ձեռքով  
ամուր գրկելով յերեխային՝ խոնարհվեց նրա վրա (4):

— Վրի, վրի ... , — մղկտում եր Անանը ցավերից դա-  
լարվելով (5):

Նար — Դոս

III Ռան Ռոյ,

Հեյ,

Հնդիկ զինվոր,

Տերզ անաշխատ,

Դաժան՝

Յերկբումդ քեզ գերեց (1):

Յեվ հանկարծ գնդակ մի բացված՝

Ծակեց խոր կուրծքը չին աղի.

Ընկավ նա կրծքից խոցված,

Ճչալով նվաղ.

— Ախ, հայրի՛քիկ (2):

Ա. Վշտունի

IV Լի, լի, լի, Սև ջրի չորան, սար ու ձոր մղկտացնող ջի-  
վան, գազան մեղմնցնող, քար ու ծառ հուզող չորան (1): Զուր  
դառնայիր մորդ փորում, Հասն (2): Մղկտաց Հասոն: — Հեյ վնի,  
իմ սիրուն ների, — կանչեց սրտաբուխ (3):

— Վնի, վնի, իմ անձեղ վոչխար, — մղկտաց Հասոն (4):

Վ. Փախազյան

### Կ Ա Դ Ա Կ Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

§§ 29, 30. ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ.  
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏ

1. Գտնել, քե ի՛նչ կամաձայնություն կամ շարագասուրյուն  
ունենն ընդգծված բառերն իրար հետ:

1 Այս քաղաքում տեսել եմ յես անթափանց մի դիշեր,  
Յեվ տնակներ կիսաքանդ՝ անպատուհան ու անդուռ,  
Վորոնց վրա ծեփ ժամի զանգի դողանցն եր իջել  
Ու ծանրացել վորպես մուժ, վորպես անեծք,

վորպես բուռ

Հիմի ուր են, ել չկան, ինչ տեսել եմ յես առաջ,  
Մնացել են ժամերի սիլուետները կիսաքանդ,  
Յեվ կուզիկ մի քահանա, վորպես գանդի մի դողանց,  
Վորոնք մեր մեծ կառուցման քարերի տակ կմնան:

Գ. Սարյան

II Եմման կանգնած եր պատուհանի առջև և նայում եր  
դուրս: Նրա առջև բացվում եր Թիֆլիսի մի մասը ... հեռուն  
յերևում եր հորիզոնը՝ մառախուղի նոսր, թափանցիկ շղարշով  
ծածկված: Մոտակա լեռներն ու դաշտերն արդեն կանաչի  
եյին խփում: Յերբեմն տարանցիկ թռչունների փոքրիկ յերա-  
մակներ արընթաց անցնում եյին ողում: Եմման կանգնած եր  
անշարժ: Նրա սևուկ շրթունքների վրա խաղում եր մեղմ, յեր-  
ջանիկ մի ժպիտ, վոր նրա քնքույշ դեմքի կանոնավոր գծե-  
րին մի կատարյալ ներդաշնակութուն եր տալիս:

Վտաից գլուխ նա յերջանկութուն, սեր և խաղաղու-  
թյուն եր շնչում:

Նար — Դոս

2. Ընդգծված բառերի շարագասուրյունն այնպես փոխել, վոր  
բամաքահական շեշտը փոխվի:

Արխողոմ ազախն ներկայացավ յերիտասարդ մը (1)...

Յերիտասարդն ծոցն թուղթ մը հանեց և աչքերն Արխո-  
ղոմ ազախն տնկելով՝ բոլոր ձայնով պոռաց (2): Ատենաբանը

բեմեն կիջնա յեվ կերթա աթոռի մը վրա կը նստի (3): Յեռ վոտանավոր մտիկ ընելու չեկա հոս (4): Սեղրաք աղան կող- կակարի մը խանութը կը մտնե (5): Սեղրաք աղան այդ կո- շիկներով դուրս կելնե կողակարին խանութեն (6): Այս դե- տողութուններն Սեղրաք աղային ականջը կհամենն (7):

Հ. Պարոնյան

§§ 31, 32. ՅԵՆԹԱԿԱՅԻ ՅԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Գտնել բազմակի յեքրակաների ստորոգյալները յեվ ցույց տալ, քե ինչպե՛ս են նրանք համաձայնել քվով յեվ գեմբով:

I Խորհրդային գրականութունը, նրա բաղկացուցիչ մա- սը՝ հայկական խորհրդային գրականութունն ապրում են վե- ընելքի շրջան: Գրականության ներկա մեծ վերելքը Խորհրդային Միության մեջ, ինչպես նաև կուլտուրական շինարարության և արվեստի այլ ճյուղերի աննախընթաց աճումն ու ծավալումը, հիմք ունեն մեր յերկրի՝ Խորհրդային մեծ հայրենիքի հաստա- տուն և բարգավաճ գրութունը, տնտեսական վերելքը, սոցիա- լիզմի կառուցման հզոր առաջընթացը: Գրականության զար- գացման այսպիսի թափ ու ծավալ հնարավոր և միայն Խորհրդ- դային իշխանության պայմաններում ... Մինչդեռ ինչքան լայն են մեր գրողների հնարավորութունները:

Ա. Խանջյան

II Վեր հեքիաթի թեավոր ձին,  
 Ի՛նչ թունավոր նիզակ ու նեա  
 Կմրցեյին սավառնակի  
 Մահ տարածող թռիչքի հեա:

Ն. Չարյան

III Այնտեղ տիրում էյին անսովոր շարժում և իրարանցում (Շիրվ.): Ամեն տեղ յերևում էր գարնան վերածնող շնչի ուժն ու գորութունը (Ն. Դ.): Յես և ընկերս նստել էյինք քարին՝ հիացմունքով դաշտին էյինք նայում ու փորձում գտնել ծանոթ գյուղերը (Բակ.): Յես և իմ ընկեր Անդոն հաց ենք տանում

նրա հոր՝ բրուտ Ավագի համար (Բակ.): Յերը դարունը բաց- վում էր, այլևս չկար վնչ յեզ, վնչ գոմեշ, վնչ սերմացու, վնչ փող... (Փափ.): Յեվ մի խորունկ գայրույթ, վառվող կատաղու- թյուն բռնկվում էր մի ժամանակ մեծ, առատ տան գավակնե- թի սրտի մեջ (Փափ.): Հարկավոր էր քանդված ոջախի վրեժն առնել, գավառն ամբողջ ազատել կլանող հրեշի ձեռքից, վիշա- պի ակռաները լսել (Փափ.):

2. Արագրեկ հեքիաթի հասվածները՝ փոխելով յեքրակալի յեվ ստորոգյալի շարագաստը:

I Են ժամանակ մեր գործարանը մեծ տաղնապի մեջ էր (1): Մեր գիտակից ղեկավարը ընկերներից շատերը բանտում էյին (2): Մնացել էյինք մի քանի հոգի (3): Առուն անցնում էր այդու միջով (4): Եսպես մտքերի մեջ էլի, յերը նկատեցի, վր այդու մեջ (5): Ներքեից գալիս ե մի փոքրիկ տղա՝ գուն առաջն արած (5): Տարորինակ էր տղան (7): Հանկարծ մեկ մեկու յեակից ողբ թնդացրին գործարանների սուլոցները (7): Յերեք արդպես կա- բոտալի չեր թվացել ինձ մեր բանվորական այդ յերաժշտու- թյունը (8):

Արագրեկ

II Յեվ շինել տվեց աղան փայտյա սանդուղքը (1): Ո՛հ, չնր էր աղան, հպարտ էր, հպարտ (2): Այդ խայտառակութունն արեց աղան (3): Չալխեն տեսավ Հասոյին, ժպտաց նրան, կարմրեց և նշան արավ (4): Իմացավ հովիվը, վր Չալխեն ել սիրում և իրեն (5): Միրան ուրախութունով լցվեց (6): Թնդաց սար ու ձոր (7), շարժվեցին ծառեր (8), դողացին քարեր (9): Շարժվեցին վոչխարները, մոտեցան սանդուղքին ու սկսեցին միմյանց յեակից բարձրանալ աշտարակն ի վեր (10): Հա բարձ- բանում էյին վոչխարները, հրում միմյանց, սրնգի ձայնից դյուլթված՝ մոտանում էլին տակի անդունդը (11): Յես քեզ սի- բում եմ, այնքան եմ սիրում (12), վորքան չեր սիրում Լեյլան Մեջլումին (13):

Վ. Փափազյան

1. Արտագրել հետեվյալ հասկածները՝ յնսագաս կամ առաջագաս գարնանեղով բնագծված վորոշյալները:

I Նայիրյան այդ հնամյա քաղաքն ամեն ինչով նման էր նայիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին (1): Յերբ է շինված նայիրյան այդ հին քաղաքը, աստված ինքը գիտի (2): Բայց ասում են, վոր այդ քաղաքը հիմնողները յեղել են հին նայիրցիներ (3): զուցե խալդեեր լայնաթիկուկ ու ջլարազուկ, գուցե՝ գանգրահներ ու բարապետներ (4): Իսկ շոգեկառքի ճակատին, ճիշտ լապտերի վերևը, ծածանվելիս է յեղել կապույտ մի դրոշակ՝ վրան վոսկենկար յերկզխանի մի արծիվ (5):

ՅԵ. Չարենց

II Բաս ձայներով մրմուռ էլին հեռավոր փողոցները, դնգում, գրգռում (1). Կանտեղ լցվել էլին թրքուհիներ՝ կապույտ սպեց-հագուստներով, կարմիր գլխանոցներով (2)... Յերեկվա չաղրավոր ստրկուհիներն են, համ, լսվ իմացիբ, Սասգ, սրան խորհրդային լիխանություն կասեն (3):

Գ. Դեմիրճյան

2. Գտնել բնագծված վորոշյալների վորոշյալները յեվ արտագրել իրա կողմի:

Սավար է ... գիշեր ... հեռու գնդիթում  
Մշուշի միջից դալուկ զեմքերով  
Նիրհում են անգույն աստղերը տրտում,  
Սոսկումով պատած մարմրում շուտով:  
Տնքում է հողը. շնչով մահահոտ  
Վիշտն է գալարվում յերկրի յերեսին,  
Ողի թևերին կակիծի լացոտ  
Մրմունջն է հնչում, չկա է լուսին...  
Բայց զուք կամեցաք մրցել յերկնային  
Վառ կանթեղների լույսի հետ նսեմ,  
Յեվ ձեր բազմաթիվ լապտեր-ջահերին  
Մի ակնթարթում կյանք տվիք վսեմ:

Շ. Կուրղինյան

1. Արտագրել հասկացուցիչ-հասկացյալները յեվ գրել, թե ի՞նչ են ցույց տալիս հասկացուցիչները՝ պատկերելու թյուն, սերունդ, թե՞ վերաբերություն:

I Վարդան Ահրուսյանի ծնունդը կատարվում է Զիլդիլ քաղաքի միջին մասում, մի տափակ կտուրով միհարկանի քարաշեն տան մեջ (1): Դրսի կողմից այս տունն ունի միմիայն մի լուսամուտ (2): Մուսյուլթյունը կրկնապատկվում էր լուսամուտի յերկաթե ցանցի թանձր փողով ու սարդի խիտ վոստայներով, վորոնց մեջ հանդչում էլին անթիվ ձանձեր (3): Շատ չանցած մահուկն իր տուփն ավելի սիրեց, քան բոլոր խաղալիքները, քան բոլոր շրջապատողներին, քան նույնիսկ հարազատ ծնողներին (4): Յերկու ձեռներով տուփը մոտեցնում էր, ականջ դնում մետաղի ախորժալուր հնչյուններին (5): Նրանց աչքերին ներկայացավ հետևյալ տեսարանը (6). մյուս սենյակի անկյունում Վարդանը համբուս էր մի բուն արծաթի և սղնձի դրամներ (7):

Շիրվանզադե

II Յեվ մութ այրերից մամուտ ժայտերի,  
Թավուտ ծմակի լուին խորքերից  
Մանուկ հասակի հնչուն ծիծաղի  
Արձագանքն անա լուսն էմ նորից (1):  
Ամպի տակից ջուր է գալի,  
Դու է տալի, փրփրում (2).  
Են համ յարն է նստած լալի  
Հոնգուր-հոնգուր են սարում (3):

Հ. Թումանյան

2. Գտնել յնսագաս հասկացուցիչները յեվ արտագրել իրենց հասկացյալների հետ՝ ցույց տալով, թե ի՞նչ խոսքի մասով են ցուցնում արտահայտված (գոյական, գերանուն, ածական, դերբայ յեվ այլն):

I Ատաններն ուրազ, յեղունգները՝ թուր,  
Կուրծքը կասենաս մի լանջ էր լեռան,  
Մեջքը սարաժայռ, կունբը պերան:

Մի խոսքով՝ մի դե կ վոչ թե հակա (1):

— «Ուղիղ ե ասածն Առան իշխանի», —

Ասաց քեզիսը Գուգարաց յերկրի, —

Մեր հականերն ել ձորերը մտան,

Վոր գլխերներին վոչինչ հարկ չտան (2):

Դ. Աղայան

II Յեվ շող դառնալով դարնան արևի՝  
Կուզեցի պայծառ աչերումդ վառվել,  
Կամ ինչպես քնքույշ վոսկեվառ գոտի  
Չքնաղ իրանիդ փաթաթվելս փարել (1):

Մտերիմ գամփունքերը կրծում են կապանք,  
Կրծում են անդադար կապանքն արքայի (2)...  
Արաավազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,  
Յեվ դեռ շատ հեռու յի վախճանն աշխարհի (3):

Հովհ. Հովհաննիսյան

Յ. ԳՏՆԵԼ ԵՍԱԳԱԿԱՆ ԽԱՏԿԱԳՅԱԼԵՆԵՐԸ յԵՎ ԱՌԱՆՃԻՆ ԱՐՏԱԳՐԵԼ՝  
ԳՈՒՅԳ ՏԱԼՈՎ, ՔԵ ՎՈՐ ԳԵՄԲԻ յԵՎ ՔԻԻ ԽԱՏԿԱԳՈՒԳԻՆ ԵՆ ՓՈ-  
ԽԱՐԻՆՈՒՄ ԱՍԱԳԱԿԱՆ ԽԱՏԿԱԳՅԱԼԻ ԽՈՂԵՐԸ. ԱՍԱԳԱԿԱՆ ԽՈՂԵՐԻ  
ՓՈԽԱՐԵՆ ԳՆԵԼ ԽԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽԱՏԿԱԳՈՒԳԻՆԵՐԸ:

I Տան տղերքն ել աչքըները ճմոռեցին ու քնահարամ  
մտան գոմը, վոր ասվարին, ձխանոցը խոտ տան (1), հարզևոր  
հարսերը՝ ասղարույր գյուղաբաժն ու ոչմաղը մինչև քթներն կեսը  
խոր քցած, մեկ մեծ գոտակով մեջքըները չորս տակ, հինգ տակ  
կապած զի պես թռան (2): Տան ջահել աղջկերքն ել գլխըները  
սանդրեցին, մազըները հուսած քամակներին քյած՝ կարմրազա-  
գաթ պոպոզ մորթի գզակները գլխըներին, ականջները կապե-  
ցին, դաստամախն ուսըներին քցեցին, կուժը վրեն դրին ու զնա-  
ցին (3)... Ետը ջերդ լցնես, հքուց պետք ե մատդ լրստես (4):  
Ո՛ջազս լիքը ըլի, տանս՝ բարաքյաթ, վորդիքս՝ սաղ-սալամաթ (5):  
Գդակս ծուռը կղնեմ, քեֆս կքաշեմ (6):

Խ. Աբովյան

II Իմ քաղցրեկ ընկերուհի.

Շնորհակալ եմ ցավակցությանդ համար (1): Նախորն  
նամակումս խոստացել էյի քեզ տեղեկություն տալ մեր ընա-  
նիքից և ահա կատարում եմ խոստումս (2): Այս անգամ դար-  
ձյալ հորս մասին պիտի գրեմ, վորովհետև բոլոր մտածությանս  
առարկան նրա ոտարոտի դրությունն ե, վորից մինչև այժմ ել  
գլուխ չեմ կարողանում դուրս բերել (3): Աղքատ տեղովդ ինձ  
քսան ուսըլի յես ուղարկել (4): Յեվ դեռ ներողություն ես  
խնդրում, վոր ուշ ես ուղարկում, վորովհետև ոտձիկդ նոր ես  
ստացել (5): Նպատակդ թնչ ե, վոր ուղարկել ես (6) ... Նամա-  
կիս հետ յետ եմ ուղարկում ուղարկածդ քսան ուսըլին (7): Գո՛  
Աննա Սարոյան:

Նար—Դոս

§ 35. ԲԱՅԱՀԱՅՏՉԻ ՅԵՎ ԲԱՅԱՀԱՅՏՅԱԼԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

1. ԳՏՆԵԼ ԲԱԳԱԽԱՅԻՆԵՐԸ յԵՎ ԳՈՒՅԳ ՏԱԼ, ՔԵ ԻՆՊԵ՛Ս ԵՆ ՈՐԱՆՔ  
ԽԱՄԱՃԱՅՆԵԼ ԻՐԵՆԳ ԲԱԳԱԽԱՅՈՒՅԱԼԻՆ:

I Այդ մենք ենք զալիս...  
Մենք՝ բանվորներս, ապրելու ահից  
Կյանքի շուկայում ստոր վաճառքից  
Եժան ծախվածներս...  
Ո՛ր, մեծ տղրուկներ՝ մարդկային կյանքի  
Ստեղծագործության անարգ խեղդիչներ-  
Դուք՝ փարթամության, անառակ տենչի  
Քնած խիղճերով թմրած խլուրդներ.  
Դուք՝ ամոթապարտ դերեզման փորոզ  
Գարջ դահիճներդ սուրբ աղատության...  
—

Յերգեն զրկանքի յերգը հողեկան՝  
Չոր հացի յերգը՝ մահվան մրմունջով:

Շ. Կուրղինյան

II Կայարանի առաջ նվազելիս ե յեղել զինվորական յե-  
րաժշտախումբը և նրա մոտ կանգնած դիմավորել են գնացքը  
մի շարք պատկառելի նայիրցիներ և բարձրաստիճան պաշտո-

նյոսներ. Գններալ Արտըը, Մազութի Համոյի հայրը՝ Առաքել աղան, վոբը հիշես ... (1): Բայց ամենից հետաքրքիրը կոշկակարի հարեվանն է՝ պարսկաստանցի մի վաճառական, վոր դբազվում է գորգի, քիշմիշի, ձորթեկենի և շաքարի առևտրով (2): Կանուխ, մութլուսուն, բացվում են խանութներն իրար յեակից, ծույն դանդաղ, մխապաղաղ—սկսվում է քաղաքի դործնական յեռուզեորը՝ գործնական առորյան (3):

Յե. Չարենց

§ 36. ՀՈՒՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՍԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳՆԵԵԼ, ԲԵ ԸՆԳՉՎԱԾ ԲԱՌԵՐ Ի՛ՆՅ ԼՈՂՈՎ ԵՆ ԵՎ ԿԻՐԱՈՒԿԱՆ Ի՛ՆՅ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:

Ե Նորից փակվեցին Հաբիբայի ծանր ու անհյուրընկալ դարպասները (1): Թուրքական թաղամասում ով դեռ չէր հավատում նախապաշարմունքների, Հեղնարի մահից հետո համոզվեց, վոր անհետացած պառավի տան վրա անեծք կար ծանրացած (2): Յերբ մոլլայի կնոջ միջոցով լուրը տարածվեց ամբողջ թաղամասում, այնտեղ գտնվող բոլոր ընակիչները բահ ու քլունգներով գինգած, անասելի զոռոցներով հավաքվեցին Հաբիբայի տան առջև հիմնահատակ կործանելու այն (3): Ու մինչդեռ ուստա Մկրտչի դժբախտության լուրը սլացավ քաղաք՝ կայծակի արագությամբ և ուժգնությամբ տարածվելու այնտեղ, մոլլան, Իբրահիմը, Սաֆարը, Հաջի Քյարիմը և բոլոր մյուս տղամարդիկ սկսեցին քլունգների կատաղի հարվածներ տեղալ շենքի ազդուս պատի վրա և չեչոտել նրա հարթ մակերեսը (4): Աղյուսներից բարձրացավ կարմիր փոշին և դգալիորեն մշուշեց հավաքված բազմությանը (5): Չգիտես ինչու՝ կանայք սկսեցին վայնասուն բարձրացնել և իրենց մազերը պոկոտել իսկ յերեսներն այդ ամենից ազլած՝ զոռալով լաց յեղան (6): Միանգամից տերեց այնպիսի լուրթյուն, վոր թվաց, թե լսելի գարձավ կարմիր փոշու ձայնը, վորն ողից նստում էր մարդկանց գլխների, ուսերի վրա և գետնին (7): Բահերն ու քլունգները մարդկանց ձեռքերում գարձան ավելորդ և մարդիկ նայեցին միմյանց՝ չգիտենալով ինչ անել (8): Բոլորը կարծես նոր վերհիշեցին, վոր այնտեղ, տան ներսում, հա-

վիտենական քնով քնել էր մի կին, վորին խաղաղություն էր հարկավոր, ինչպես յուրաքանչյուր քնած մարդու (9): Նույն րոպեին դարբասը նորից բացվեց և ուստան դուրս յեկնելով մոտեցավ մոլլային (10):

Մ. Արմեն

Ո Հինգ ամիս էր ընդամենը՝ Ողեսայումն էյի, չորբորդ անգամ փոխեցի սենյակս (1): Փոքրի շատե մեծ քաղաքում բնակվող մենակեցի հայտար մի առանձին հանույք է ստեպ-ստեպ կացարան փոխելը (2): Անցնելով մի թաղից մյուսը, կարծում ես մի յերկրից մյուսն անցար (3): Տանտիրուհիս իտալուհի յեր (4): Նրա ամուսինը յեղել էր խալիկան ուղերայի հուշարար (5): Հենց առաջին որը յես ծանոթացա հարևաններես հետ (6): Չվարձության տաք միջոցին դռների մեջ նկատվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք (7): Անծանոթը հենց առաջին վայրկյանին գրավեց ուշադրությունս (8): Յես դիտեցի նրան (9): Մենք մտանք մի սենյակ (10): Այնտեղ, մութ անկյունում, պատի տակ յերևում էր ինչ վոր բան, նման անկողնակալի թե թախտի՝ չգիտեմ (11): Մինչորս Ստեֆանիայի հաղթանգամ մարմինը թագցնում էր այն իմ աչքից (12): Ամբողջ գարունը և ամառը պատանին այցելեց նավահանգստի պանդոկները (13): Յերբեմն գալիս էր սենյակս և ինձ հաշիվ տալիս (14): Հաղիվ այդ որից անցել էր մի շաքաթ, յերբ մի յերեկո, մոտ ժամը տասին, հանկարծ սենյակս մտավ Ալմաստը շփոթված (15):

Շիրվանզադե

§ 37. ԿԱՊԵՐ ՅԵՎ ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

ԳՆԵԵԼ ԻՍԿԱԿԱՆ ԵՎ ԱՆԻՍԿԱԿԱՆ ԿԱՎԵՐ ԵՎ ԱՐՏԱԳՐԵԼ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԻՐԵՆԵ ԽՆԳԻՐԵՆՐՈՎ:

Ե Յեթե դոմի դռան մոտ կապած բլլը չլինել, վորը թե առջև թափած խոտն էր ուսում և թե մեզ էր նայում, այլև պառավ, ուժազուրկ շունը, վոր սրահի շաքարանից յեկնելով՝ մի յերկու բերան ծուլաբար հաջեց և ապա նորեն բակի մեջ ընկած

հին սալլի տակը մտալ, մենք կկարծեյինք, թե այս տան մեջ կենդանի շունչ չկա (1): Այս ասելով նա գետնից մի քար վերցրեց և նետեց սալլի տակ պառկած շան վրա (2): Մտառը ըլեմքու աչքերին. ես ա հինգ տարի չա՛յ յերեսը տեսել չեմ ... քուսանա ինձ նման մերը (3): Վերջին խոսքերի հետ արտասուքի կաթիլները գլորվեցին պառկելի խորշոճած դեմքի վրա (4): Անշուշտ սն չե վերուեսց Սարգիսը,—ասացի չես Պետրոսին և նրա հետ միասին առաջացա դեպի նրան (5): Նշմարելով մեզ մի քանի քայլ հեռավորութեան վրա, նա խսկույն գործելուց դադարեց և բահը դեղձենու բնին դնելով առաջացավ դեպի մեզ (6): Բարի աջողում, Սարգիս ապեր,—ասացի չես առաջին անգամ և մոտենալով՝ ձեռքս պարզեցի դեպի ձերունին (7): Մի առանձին բան չունենք, հենց ման գալու համար ենք յեկել (8): Ծերունին ժպտաց: Սակայն նրա ժպտի մեջ այնքան ծաղր կար ուղղված դեպի ընկերս, վոր յես չկարողացա իմ հետաքրքրութունը դապել (9):

### Մուրացան

II Մի որ Բողոքասարը նրա համար շուկայից բերեց մի տափալ տուփ, վորի փակ կափարիչի վրա կար մի նեղ ծակ (1): Վաչ ե, յեթե մեկն այդ միջոցին փորձեր ձեռք տալ նրա դանձին, առնետի պես ծվծվալով կհարձակվեր հանդուգն փորձողի վրա, վորպէսզի յեղունգներով հանի նրա աչքերը (2): Ա՛խ, առանց նրան յես կարող եմ աղբիկ (3): Քեզ ել, Գյուլում, Վարդանի հետ կտանեմ Բագու (4): Հն, յես Բագվից քեզ համար կուզարկեմ մի լավ գիրք (5):

Վոչ վոր առաջին պահ չնկատեց նրան բացի ինձնից (6): Կար այդ ձայնի մեջ մի սրտաշարժ շեշտ, վոր արտահայտում էր հեղութեան հետ և թախիծ (7): Նա անմիջապես դիմեց դեպի գոները (8): Բացի ուսանողից և յերկրորդական բարիտուն Բուրիկից, բոլորս հեռեցինք նրան (9):

### Շիրվանզաղե

## ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### § 38. ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

#### 1. Զոկել բարգ համադասական յեվ բարգ ստորագասական նախագասուրջուցներ:

I Որը կիրակի էր, յեղանակը լավ. այդում բավական զրոսնողներ կային (1): Այստեղ՝ նոր կանաչող ծառերի տակ և նորածիլ, փթթող, փայլուն խոտերի մոտ գարնան կենսատու ույժն առավել ևս զգալի էր, արևի ճառագայթներն ավելի ևս այսորժելի էյին, ողն առավել ևս թարմ, պարզ և թափանցիկ (2): Նրան թվում էր, թե անասունները, յիրը նրանց սպանդանոց են տանում, ճիշտ նույնը պիտի լինեն զգալիս, ինչ վոր զգուս էր ինքն այդ բողբոջի (3): Սոհանոցից դուրս յեկող իմերել ճառային ինքրեց կամացուկ, վոր տանտիրոջն իմաց տա, թե ուզում ե տեսնել նրան (4): Պատրիկյանը յետևից նայեց նրա յերկարաճիտ փափուկ, անկրունի կոշիկներին, վորոնք քայլելիս վոչ մի ձայն չէյին հանում (5): Ուր նայում էր, տեսնում էր գորգ ու թավջյա բարձիկներ (6): Կար և գրքերի մի շատ յերկար պահարան ապակյա դռներով, վորի բոլոր դարակները լիքն էին վոսկեկաղմ գրքերով (7):

### Նար—Գոս

II Մրեզակը թեքվել էր դեպի մուտքը, և նրա վերջին ճառագայթները վողողել էյին բուսականութունից դուրի, անհրապույր քաղաքը և նրա առջև տարածված ծովի մակերևույթը (1): Քարե պատերը շիկանում են կիզիչ ճառագայթներից, ավազը խանձվում է, ողը դառնում է հեղձուցիչ (2):

Բնակիչներն շտապում են լողարանները, և որը մինչև յերեկո ծովը լի յե մերկ մարմիններով, վորոնք մերթ փայլիքը լում են արեզակի տակ, մերթ սուզվում ջրի մեջ վորպես դիֆիններ (3): Մահամերձն աչքերը բաց արեց, գլուխը դանդաղորեն բարձրացրեց (4): Նրա դեմքն արդեն ընդունել էր մահանիշ հողագույն սովերագձեր, բերանի անկունների բնորոշ աղտոներն այժմ հարթվել էյին, կլորիկ յերեսը յերկայնացել էր. մնում էր ինչ վոր անհանգստութեան մի թուլ ժպտա թառամած

զրթունքների վրա (5): Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար, վոր կնքված էր կարմիր դմուռետով (6): Մեռնողն ապակյա աչքերով նշան արեց դեպի Սմբատը, և մայրը ծրարը տվեց վորդուն (7): Խոսակցութիւնը դարձյալ դործերի մասին էր. սկսվել էր դրսում, աչքմ շարունակվում էր նույն յեղանակով (8): Նոր կացարանների շինութեան մեջ Սմբատը նկատել էր թերութիւն, վոր Սուլյանի անակղի խնայողութեան հետեւանք էր (9): Նա հանդիմանում էր կառավարչին մեղմարար, բայց հուզված էր, և յերբեմն ձայնի մեջ հնչում էր բարկութիւն (10): Պարզ էր, վոր Սուլյանը չէր նրա գովամակութեան բուն պատճառը (11):

### Շիրվանզադե

2. Գտնել գլխավոր յեզ յեկրորդական ցախագաստութիւնները բարդ ստորագասական ցախագաստութիւնների մեջ:

Իմ ծանոթը, վոր մինչ այդ անհամբերութեամբ հետևում էր նրանց շարժումներին, նրա գնալուց հետո հանդուստացավ և սկսեց յերգել (1): Յերբ չորանում էյին կտափերը, նրանք հավաքում էյին, կարմիր ելին ներկում (2): Յերբ փռում էյին տանիքների վրա, տանիքներն ստանում էյի տոնական տեսք (3): Սկզբվեց նրանից, վոր ջուլհակներն սկսեցին ձեռք առնել Ակրաղին՝ ինարկի նրա բացակայութեամբ (4): Չորրորդ օրը լիս լսեցի, վոր Քենոն մահացել է (5): Ակրաղան ձեռքով արեց, վոր թողնեն գործերը (6): Բոլորն էլ կարծում էյին, վոր մի վաս բան պիտի պատահի (7): Նույն գիշեր, յերբ լիս հանգիստ քնել էյի տատիս հետ, տատս ինձ զարթեցրեց (8): Յես չգիտեյի՝ «յանկուն»<sup>1</sup> ինչ բան էր (9): Յերբ աչքս բացի և սենյակը լուսաւ վորված անսա կրակի լուսից, հասկացա (10):

### Գ. Մանարի

### § 39. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Յույց օալ, թե քանի՛ համագաս ցախագաստութիւն է պարու ցակվում յուրաքանչյուր բարդ համագասական ցախագաստութիւն մեջ, յեզ առանձին-առանձին ցեղ օղկակներով ու առանց օղկակների իրար կապակցված համագաս ցախագաստութիւնները:

I Մենք փող զարկինք, և արձագանքն անավոր Յերկրից յերկիր վորոտածայն շառահեց, Յեզ սրտերում միլիոնավոր, բյուրավոր Ըմբոստութիւնն անազնացավ ու անեց (1): Յերթը ձգվեց հերոսական, փառավոր, Յեզ կայծակներ շնորհալով շողացին, Յեզ դրոշներ հազարավոր, բյուրավոր Նրա վերև արնանման շողացին (2):

### Յե. Չարենց

II Մութը գետինն առավ, վորքը խաղաղվեց, ամեն մարդ յուր սենյակը մտավ (1): Սաքոն ուղիղ ճանապարհով չի գնում, նա անց կացավ պատի տակը և շուտ-շուտ խլիչտեղով իրեն ձգեց մովրովի նախասենյակը (2): Նրա համար առաջուց իմաց տալ չկա. յասավուրն իրավունք չունի արգելել նրան (3):

### Պ. Պոռչյան

III Գունատվում է մութ գիշերը, և ուրախ Արեգակն է վոսկեզոծում սար ու ձոր (1):

Քնքշարույր ծաղկանց հրեղեն խաղով ժպտում են նորից անտառ ու ձորակ, Յեզ հեղեղները խոսուն-առնորակ Վողջունում են ինձ գվարթ ծիծաղով (2):

### Վ. Տերյան

IV Հյուսիսային քամին փչում էր, անձրևի կաթիլները՝ բռնի դորութենով զարկելով կառքի պատուհաններին, կրկնապատում էյին Իվան Գրիգորիչի հուզումը (1): Հասնելով քաղաքի ծայրը՝ կառապանը մի անգամ ևս մտրակեց ձիերին, և

<sup>1</sup> Հրգեհ

կառքն անհետացավ գիշերային խավարի մեջ (2): Յերկնակա-  
մարը կրակի լուսից շառագունել եր, քամու գործընթացն էր  
կատարարար այս ու այն կողմն եր տարածվում. ամբողջ Մե  
քաղաքը ծխի մեջ թաղվել եր (3): Տոթը խեղդում եր նրանց  
կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անձրևի նման հեղե-  
ղում էին նրանց գլխին, բայց՝ խորասուզված իբենց գործի  
մեջ, կարծես, նրանք վռչինչ չեյին զգում (4):

Շիրվանզաղե

§ 40. ՄԻՍՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԳՏՆԵԼ ԵՎ ԸՆԳՉԵԼ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՏԱԽԱԳԱՏՈՒՄՆԵՐ:

I Մի քանի որ Մարթայի վարմունքի մեջ մի առանձին  
տարրերնակ բան չեր նկատվում: Սովորականի պես առավոտ-  
ները վաղ վեր եր կենում, փոքրիկ ինքնայեռը գցում, անկողի-  
նը հավաքում, թախտն ու հատակն ավլում, ամեն բան իր տե-  
ղը դնում ու նստում հինաձ գործերու մինչև ինքնայեռի վեռ  
գալը:

Ջաղունյանն առավ նամակը և շտապեց դուրս գնալ:  
Ջաղորսկին ժպտաց նրա յերեսին, վերցրեց Ջաղունյանի համար  
լցրած դեղիքայն շուրը, խմեց, հանեց շշի դինը, դրեց սեղանի  
վրա, վեր կացավ, գլխարկը ծածկեց և դուրս գնաց Ջաղունյանի  
յետևից: Կես գիշեր եր: Փողոցում անց ու դարձը դադարել եր:  
Ջաղորսկին շտապեցրեց քայլերը և հասավ Ջաղունյանին: Նա  
դինվորական պատիվ տվավ, յերկարածիտ կոշիկները կրունկնե-  
րը խփելով իրար՝ գրնգացրեց խթանները, դարձավ, կանչեց դա-  
տարկ անցնող մի կառք, առանց շտապելու դնաց նստեց և հե-  
ռացավ:

Նար—Դոս

II Ուլեզը խնդաց, և սակայն մթնեց,  
Մռայլեց հանկարծ չարագույժ մաքից,  
Լուս ու մտախոհ թամբիցը բռնեց,  
Ներքև ե իջնում սիրած նժուզից  
Ու վերջին անգամ իր հին ընկերին  
Փայփայում, շոյում, փարում ե վզին:

Հ. Թում. (Թարգմ.)

2. Տույց օտլ, բե ին, ո՞վ ե՞ն միավորված եսեվյալ միավորյալ  
նախագասուրյունները (յեճրակայո՞վ, բե՞ ստորոգյալով) յեվ  
հանի՞ բազմակի յեճրակա կամ ստորոգյալ ունի նրանցից  
յուրաքանչյուրը:

Քամայյանը շարդված սրտով, թուլացած մարմնով ընկավ  
աթոռի վրա և յերկու ձեռներով պինդ սեղմելով գլուխը՝ սկսեց  
անթարթ աչքերով նայել հիշատակարանին (1): Հետո նա՝ շուռ  
ու մուռ դալով՝ դարձյալ մտոեցավ սեղանին և հանկարծակի,  
խելազարի պես, հարձակվեց հիշատակարանի վրա, վերցրեց  
այն և սկսեց ձեռներով ճմռտել ու ատամներով կրծոտել (2):  
Քամայյանը՝ հիշատակարանը կրծոտելով և վայրենաբար բղա-  
վելով՝ մտոեցավ վառարանին, վերցրեց ունեկեքը և կրակը  
խառնեց (3):

Դեպի մուտքը թեքվող արեգակի շողերը խուրձերով  
ներս էյին թափվել և լուսավորում էյին բազմաթիվ գլուխների  
խաչտարդետ շարքերը (4): Ամբոխի շունչը, կերակուրների գուրը-  
շին, ծխախոտի ծուխը, փոշին, կեղան ու քրտինքը միմյանց  
խառնվելով՝ սենյակում գոյացրել էյին ստորին տեսակի պանդո-  
կի մթնոլորտ՝ ծանր, անախորժ (5): Մարդկանց ազահությունը  
և դվարթ, ուրախ դեմքերը, վրմանց անամոթ բարձրաձայն  
ծիծաղները ակամա զզվանք էյին ներշնչում Սմբատին (6):

Հանգուցյալի գործակատարներն ու ծառայողները նրանց  
կերակուր էյին բաժանում (7): Կեզոտոտ, կիսամերկ մուրաց-  
կանները միմյանց հրում էյին, զարկում, հայհոյում՝ աշխատե-  
լով իրար առաջև և քոտենալ խոհանոցին (8): Պղնձե հսկայա-  
կան կաթսաների հնչյունները, շերեփների զրնգոցը, ծառայող-  
ների դողում-գոշյունները, քաղցած խուժանի կառաչյունը իրար  
խառնվելով՝ սսիական բազարի տպավորություն էյին գործում  
(9): Կոպտությունը, կեղաք, կերակուրների գուրըշին, ցնցոտի-  
ների հոտը նողկանք էյին ներշնչում կուշա ու անտարբեր դե-  
տողին (10):

Շիրվանզաղե

§ 41. ՀԱՄԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՁԵՂՉՈՒՄ

ԳճԵԼ, քե ընդգծված ցախազատութիւններէ մեջ ի՛նչ անգամ-  
ներ են գեղված յեվ արագրել այդ ցախազատութիւնները՝ վե-  
րականգնելով գեղված բոլոր անգամները:

- I — Խմբագիրն այստեղ չէ,—հարցրեց Ջափինյանը:
- Դժբախտաբար՝ վոչ,—պատասխանեց քարաուղարն  
ստորկական-հարգական ժպտով (1):
- Ներեցեք, դուք ստանձում եք մայրաքաղաքի թեր-  
թերը:
- Ինչպես չե (2):
- Ուրեմն անշուշտ կարդացած կլինեք ինձ վերաբերյալ  
ուցենդիաները: Ամենքը գովում են (3):
- Շոպենհաուերը և Հարամանը, ճիշտ ե, մտքի մեծ պա-  
շար են տալիս, բայց սրտին՝ յեվ վոչ մի (4):

Նար—Դոս

II Կասեցնել տեմպերը՝ դա նշանակում է չետ մնալ: Իսկ  
յետ մնացողներին խփում են: Բայց մենք չենք ուզում խփված  
լինել: Վո՛չ, չենք ուզում: Հին Ռուսաստանի պատմութեան  
էյուլթիւնն, ի միջի այլոց, այն էր, վոր նրան հետամնացու-  
թեան համար անդադար խփում էին: Խփում էին մոնղոլական  
խաները: Խփում էին թյուրքական բեկերը... Բոլորը խփում  
էին հետամնացութեան համար: Ռազմական հետամնացու-  
թեան համար, կուլտուրական հետամնացութեան համար, պե-  
տական հետամնացութեան համար, արդյունաբերական հետա-  
մնացութեան համար, գյուղատնտեսական հետամնացութեան  
համար:

Ի. Ստալին

§ 42. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդգծել գլխավոր ցախազատութիւնները:

- I Քանզում ենք ահա արդանդը հողի,  
Վոր թագցրել է իր դանձերը լուռ (1):  
Այս դույզ գծերը գնում են հասնում

Հին Արեւելքի դռանն, ուր հողի  
Յեվ մուրճի մարդը դիզում է ցասում  
Մի նոր աշխարհի պոռթկումով հղի (2):

Վ. Նորենց

II Յերբ խնամում էյինք թշվառին, պատմեց իր սարսա-  
փելի պատմութիւնը (1): Հողի աշխատավորը կարծել էր, թե  
քրտինքն ու աշխատութիւնը նույնքան արժեք ունեյին հողի  
արդյունքն ստանալու համար, վորքան բռնի ուշտը (2): Սակայն  
նրան շատ ազդու կերպով հասկացրել էյին, վոր դեռ չեն հասել  
այդ որերը, և վոր հողի տերը նա յե, ով ուշտ ունի, ով ունի  
կողիտ ու գազանային բռունցք (3):

Վ. Փափագյան

III Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սպիտակ մալաչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր (1):  
Դեռ հարս էյի, վոր գործեցի  
Քանի՛ կարպետ, խալիչա... (2):

Ղ. Աղայան

§ 43. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ  
ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ԳճԵԼ յերկրորդական ցախազատութիւնները յեվ ցույց տալ, քե՛  
նրանցից վո՛րն է առաջագաս, վո՛րն է միջագաս յեվ վո՛րն է  
վերջագաս:

I Պահակի աչքին կասկածելի թվաց ցնցոտիները հազին  
մի պատանի, վորը պտտում էր շտաբի շուրջը (1): Պարոն կա-  
պիտան, յեթե ինձ խփեք՝ մեծ վնասներ կստանաք, վորովհետե  
յես պարոն Սմբատին շատ կարեւոր ռազմական գաղտնիքներ  
ունեմ հաղորդելու (2): Ուժեղ պահակախմբով ուղարկեցեք պա-  
րոն Սմբատի մոտ և ասացեք, վոր վտանգավոր լրտես է (3):

Վ. Անանյան

II Ժամի յերկուսին, յերբ Չաքարը տուն յեկաւ, Չազու-  
նյանն արդեն դնացել էր (1): Յերբ նա՛ իր սովորութեան հա-  
մեմատ մտաւ կնոջ սենյակը, կինը նստած էր փոքրիկ թախտի  
վրա (2): Այդ որից, հենց այդ բոլորից եմման զգում էր, վոր  
Չաքարի հետ ունեցած իր հարաբերութեանն ականա թշնամա-  
կան բնույթ է ստանում (3): Այն տեղը, վոր Չաքարը բռնում  
էր նրա սրտի մեջ, դատարկվեց (4):

Նար—Դոս

III Մենք գիտեցինք, վոր այդ յերեկո պետք է կայանար  
Պետրոգրադի խորհրդի նիստը, ուր Լենինը սիտի զեկուցեր  
Գերմանիայի հետ վարած հաշտութեան բանակցութեանն երի  
մասին (1): Թ՛վում էր, թէ պայքար է տեղի ունենում մարդ-  
կային զանգվածի և բնութեան մոլեգնած տարերքի միջև (2):  
Արդեն չեմ լսում՝ ինչ է ասում Իլյիչը, վորովհետև մարդկային  
ալիքը քշում, շարտում է ինձ ավտոմոբիլից շատ հեռու (3):

Թարգման.

IV Բայլընիկ է Շիր-կանայը... Դարու զայակ այդ հերոսին,  
Մեր այս դարու հարազատին ս՛վ չի տեսել թող գն,  
տեսնի (1):

Ուր ձեռք մեկնես, այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ  
թող կանաչի (2):

Ուր յերեաս, ուր էլ հասնես, մի նոր սերունդ այնտեղ  
աճի (3):

Ո՛վ ծարավ է, թող հագնես (4), ս՛վ լարամաղ՝ թող  
կշտանա (5)...

Հ. Հակոբյան

§ 44. ՀԱՄԱՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՏԵՆԷԿ ԽԱՄԱՍՏՈՐԱԳԱՍ ԳԱԽԱՊԱՍՏՈՒՅՈՒՆՆԵՐԸ

I Այժմ Միքայելին թվում էր, վոր սառն ու քարացած  
դիակը ծաղրում է իրեն, ծիծաղում չարախինդ ու չարախինդ,  
վորպէս մի անծանոթ աշխարհից յեկած դիվային ուրվական, վոր  
խլել է նրա յերջանկութեանը (1): Իսկ նա միամտաբար կար-

ծում էր, թէ այդ մարդու մահով կադատվի վերջապես ճանճրա-  
լի հսկողութեանից, անտանելի կշտամբանքից, կզանա ինքնա-  
զուլս, կապրի՛ ինչպէս ցանկանում է, կծախսի՛ վորքան կա-  
մենում է (2):

Շիրվանզադե

II Այս Մարտինը, յերբ դեռ աղա չէր, այլ հասարակ  
մշակ, և անունն էլ Մարտին չէր, այլ Մարտիրոս, ամառ-ձմեռ  
և զիշեր-ցերեկ զգակը գլխից չէր վերցնում, վորովհետև քոսը  
տեղ-տեղ կերել էր նրա միանգամայն լեբի գանգի մաշկը՝  
զգվելի սպիւներ թողնելով այնտեղ, վորի համար և քաչալ  
Մարտիրոս էյին անվանում նրան (1): Մի զարմանալի զուգա-  
դիպութեամբ նրա կինն էլ քաչալ էր: Թերևս այդ էր պատճա-  
ռը, վոր մարդ ու կին փոխադարձաբար վոչ մի հակակրանք չե-  
յին տածում դեպի իրենց այդ ֆիզիկական պակասութեանը,  
և, ընդհակառակը, շատ հաշտ ու սիրով էյին ապրում իրար հետ  
(2): Տարին մեկ կամ յերկու անգամ զուցե, յերբ վորեւս պատ-  
ճառով նրանք զխոչնում էյին իրար, և կինը լեզուն իրեն չէր  
պահում, մարդը հանկարծ դուրս էր գալիս համբերութեանից և  
զոտում (3):

Բայց հայրը նկատեց, վոր նա մենակ գործի նստած  
ժամանակ խոսում է ինքն իրեն, դեմքով ինչ-վոր ծամածառ-  
թեաններ անում, յերբեմն ծիծաղում առանց վորեւս առիթի,  
յերբեմն էլ սգովորի պէս մղկտալով մրճոտում, լաց լինում (1):  
Մի օր էլ ձերուսին գրտից ներս գալով տեսավ թախտը մի  
կողմն է քաչել ու կացնով քանդում է գետինը (2):

Ի նկատի ունեցիր, վոր սիրտս արդեն բաց է յեղել քո  
առջև և յես այլևս չեմ կարող ծածկել քեզնից իմ զգացումները:

Նար—Դոս

III Վերին գյուղում ուսուցիչն ասում է, վոր պատերազմը  
շուտով կվերջանա, վոր փոշան անտառով տանելուց յերկու  
դինված մարդ վրա յեն տվել, վոր մեր հայոց լեզվի վարժապետ  
Մինասի տանը «կոմիտե» յե նստում, և նրանց պարվալը լիքը  
զենք է (Բակ): Պատավը տեսալ, վոր ասածն աղդեց, յերիտա-  
սարդ տղան ցնցվեց ահալոր հայանութեանից և գլուխը կախեց  
(Թոթ):

IV Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,  
Գնդակների շառաչուն տարափի ներքո,  
Յերբ մեր յերկրին շողջողուն արևն եր լջել,  
Յերբ բանվորները յերկրի՝ տուն դարձան յերգով:

Գ. Սարյան

V Նա յե հիմա մեզ մոտ հերոս,  
Ով կտրատում ե պատմության  
Կուռ շվթաները դարավոր,  
Քանդում դժոխքը հավիտյան,  
Կերտում նոր կյանք, նոր առավոտ:

Ն. Զարյան

§ 45. ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտազբեղ բարգ ստորագրական ցախագասուքյունները՝  
ընդգծելով ցրանց մեջ յեղած յերկրորդական կարգի  
ցախագասուքյունները:

I Զինչ ուրախությունը պատում ե ինձ, յերբ գրում եմ  
այս տղերը ժայռերի մեջ կորած յերկու մանուկների, գանգուր  
մաղերով լիսեմի և բրուտների քարանձավի մասին, վոր մյուս  
ժայռերից տարբերվում ե մարդու ձեռքով փորած խոռոչներով,  
վորի կիսամութում... բրուտը պտտացնում ե փայտյա «չար-  
խի» կլոր տախտակը (Բակ.): Առավել քան այժմ յես կարոտ եմ  
այդպիսի խրախուսանքի, վորովհետև զգում եմ, թե ինչպես  
վերջին հարվածը հիմն ի վեր տապալել ե ամբողջ բարոյական  
աշխարհս (Ն.-Դ.): Վերցրեք թեկուզ Ուրալը, վորը հարստու-  
թյունների մի այնպիսի կոմբինացիա յե, վորի նմանը վոչ մի  
յերկրում չկա (Ստալին): Լսում եյինք, թե ինչպես եր բանը  
զնգում, յերբ խրվում եր ավազոտ հողի մեջ (Բակ.): Յերբ  
տեսնում ես, յերբ դուրս ես, վոր տկար են ուժերդ, պետք ե  
հպատակվես (Ն.-Դ.): Մեր առավելությունն այն ե, վոր մենք  
չգիտենք գերարտադրության ճգնաժամեր, մենք չունենք և  
չենք ունենալու միլիոնավոր գործազուրկներ, մենք չունենք  
անարխիա արտադրության մեջ, վորովհետև մենք պլանային  
տնտեսություն ենք վարում (Ստալին): Առաջին պայթյունը

կարծես նրա համար եր, վոր հաստատեր, թե գալիս են (Բակ.):  
Իսկ փողոցում սպան՝ ստամները կրճատացնելով պատմում եր  
Մաշոյին, վոր ամբողջ ձմեռը սիգնալներ ե տվել ձորից այն  
գազանը, վոր մանույրի շորերով անե-տուն ման եր գալիս  
(Բակ.):

§ 46. ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԸՎՅԹԸ

Վարուցել ընդգծված յերկրորդական ցախագասուքյունների  
բնույթը:

I Հաղիվ թե կարիք լինի ապացուցելու, վոր կապիտալի  
տիրապետության, արտադրության միջոցների սեփականատի-  
րության յեվ դասակարգերի գոյության ժամանակ անկարելի  
յե պահանջել ազգությունների հավասարությունը, վոր քանի  
գոյություն ունի կապիտալի իշխանությունը, քանի դեռ կռիվ  
ե մղվում արտադրության միջոցներին տիրանալու համար,  
ազգությունների վոչ մի հավասարություն չի կարող լինել,  
ինչպես և չի կարող լինել ազգերի աշխատավոր մասսաների  
փոխադարձ աշխատակցություն: Պատմությունն ասում ե, վոր  
ազգային անհավասարության վերացման միակ միջոցը,  
հնչված յեվ կիսամնչված ժողովուրդների աշխատավոր մաս-  
սաների յեղաշարական աշխատակցության ռեժիմը հաստատե-  
լու միակ միջոցը կապիտալիզմի վերացումն ե յեվ խորհրդային  
կարգերի հաստատումը:

Ստալին

II Տեսին, ուր ապրում եր Մոսկին, գտնվում եր գյուղի  
ծայրում (1): Յեվ փոխանակ խոսքով դիտողություն անելու,  
քանոնի ծայրով բոթում եր կամ մեկի կրծքին՝ կամենալով  
ուղիղ նստեցնել նրան, կամ մյուսի գլխին՝ վորպեսզի սա շատ  
չկորացնի այն, իսկ հաճախ զարկում եր սրա ու նրա գրքին,  
վորպեսզի ծնկների վրա դնելու փոխարեն ձեռքերնին առնեն  
(2): Հին պատառոտուն հագուստը, վոր շատ տեղ չեր ծածկում  
տղայի նիհար մերկությունը, անմեղ և տխուր հայացքը,  
վոր մի առանձին գրավչություն եր ստացել զգացած յերկյու-  
ղի ազդեցության շնորհիվ, այնպես հուզեցին կամսարյանի  
սիրտը, վոր նա չկարողացավ իր դժգոհությունը զսպել, ծանր

դիտողութիւնն արավ վարժապետին, վոր նա կոպտարար ե վարվում յերեխաների հետ (3):

### Մուրացան

III Ինչ դարերով յողել ե թույն,  
Անեծք անանց յեվ նախատինք  
Ու ծանրացել «ադամորդու»  
Չարքաշ ուսին յեվ նակատին,  
Մենք դարձրինք խորհրդանիշ  
Հերոսութեան ու պարծանքի:  
Նա յե հիմա մեզ մոտ հերոս,  
Ամենամեծն ու պանծալին,  
Ով իր կաղնյա բազուկներով  
Ձեզ ե տալիս թուջին, քարին:  
Ով չի ձգտում հոգով ազնիվ  
Ամպածրար կատարներին,  
Նա բլուրին ել չի հասնի  
Իր յերգի գորշ ճանապարհին:

### Ն. Զարյան

IV Առյուծ ու վագր նրան տեսնելիս  
Սովոր շան նման մոտն ելին գալիս,  
Կարծում եյին, թե նա ել ե գազան  
Յեվ նա յե իրենց զորավոր արքան...  
Ինքն աչնուհետե գնում եր անտառ,  
Վոր սնունդ գտնի իր ուժի համար:

### Դ. Աղայան

V Գինետունն ուներ նուշնոյն մի լայն պարսպապատ բակ,  
Վորի մեջ կային մի քանի տներ (1): Յերկու մուտք ուներ  
նա, մինը ուղղակի դրսից, վոր եր հասարակաց դուռը, իսկ  
մյուսը՝ բակի միջից (2): Այսպիսի մի ժողովատեղին՝ հեռու լի-  
նելով գյուղից ե բնակութեանից, հարկավ պետք ե ունենար մի  
տեղ, ուր յեկվոր բազմութեանն իջեվաներ, կերակրվեր յեվ  
պատասպարվեր (3): Ատում են, վոր վոյ մի գինեվանառ չի  
կարողացել յերկու-յերեք ամսից ավելի պահել Սաքոյին (4):

Մանավանդ նրա հարգանքն ավելացավ, յերբ ամենքն իմա-  
ցան, թե Սաքոն մովրովի յերկու աչքի լույսն ե (5): Տեսեք,  
թե մեր միկիտանն ինչպես ե շարունակում իր տեսակցու-  
թեանները մովրովի հետ (6): Բախկան ե, վոր մովրովը  
տանն ե (7): Ներսից դուռը փակված ել լինի, Սաքոն ունի  
լուր բաղիսելու ձեւը (8): Թե վոր քեզանից ավելի խեր տվողի  
գտնեն, թող քո տեղը դրկեն (9):

### Գ. Պոռչյան

VI Կապիտալիզմի մնացորդները մարդկանց դիտակցութեան  
մեջ շատ ավելի կենսունակ են, քան թե վորեվն մեկ ուրիշ  
ասպարնգում: Նրանք ավելի կենսունակ են, վորովհետեւ հնա-  
րավորութեանն ունեն լավ դիմակավորվելու ազգային կոս-  
տյումով:

### Ստալին

### § 47. ՇԱՂԿԱՊԵՆԵՐ ՅԵՎ ՀՍՐԱԲԵՐՍԿԱՆ ԲԱՌԵՐ

I. Ջոկել համադասական յեվ սոսրագասական օաղկապները  
յեվ ցույց տալ, թե ի՞նչ ե են օաղկապում Երան՝ Եսխագասու-  
րյան սեղաններ, թե՞ Եսխագասուրյաններ:

I Ընկեր կոտնտեսականներ ե կոտնտեսուհիներ: Յես չե-  
յի մտածում հանդես գալ ձեր համազումարում: Չեյի մտածում,  
վորովհետեւ ինձնից առաջ հանդես յեկած հետորներ ճառերում  
արդեն ասված ե այն ամենը, ինչ վոր պետք եր ասել, ասված  
ե լավ ու դիպուկ: Արժեք արդյոք դրանից հետո ելի հանդես  
գալ: Բայց քանի վոր դուք պնդում եք, իսկ ուժը ձեր ձեռքին  
ե (յերկարատեով ծափահարութեաններ), յես պարտավոր եմ  
յինթարկել:

Ճիշտ ե արդյոք այն ուղին, վոր բռնել ե կոլանտեսա-  
կան գյուղացիութեանը, ճիշտ ե արդյոք կոլանտեսային ուղին:  
Այս հարցը պարապ հարց չե: Դուք՝ կոլանտեսութեանների  
հարվածայիններդ պետք ե վոր կասկածելիս չլինեք, վոր կոլ-  
անտեսութեանները կանգնած են ճիշտ ճանապարհի վրա: Ուտաի  
ե հնարավոր ե, վոր այս հարցը ձեզ ավելորդ թվա: Բայց վոյ  
բոլոր գյուղացիներն են մտածում այնպես, ինչպես դուք...»

Ահա ձեզ յերկու ուղի՝ կապիտալիստական ուղին ու սոցիալիստական ուղին, դեպի առաջ՝ դեպի սոցիալիզմ տանող ուղին և դեպի յետ՝ դեպի կապիտալիզմ տանող ուղին:

Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե կարելի չի վտաք դնել ինչ վոր մի յերրորդ ուղի: Այդ յերրորդ ուղուն, վորը հայտնի չէ վոչ վորքի, առանձնապես սիրով կառուցում են այն մի քանի տատանվող ընկերները, վորոնք դեռ լիովին չեն համոզվել կոլտնտեսային ուղու ճշտության մեջ: Նրանք ուզում են, վոր մենք վերադառնանք հին կարգերին, վերադառնանք մենատնտեսությանը, բայց առանց կապիտալիստների ... Իրոք դա յերրորդ ուղի չէ, այլ յերկրորդը՝ դեպի կապիտալիզմ տանող ուղին:

Ասում են, թե կոլտնտեսութունների ուղին ճիշտ ուղի չի, բայց նա դժվարին է: Դա ճիշտ է մասամբ միայն: Իհարկե այդ ճանապարհին դժվարություններ կան: Լավ կյանքը ձրի չի տրվում: Բայց բանն այն է, վոր գլխավոր դժվարություններն արդեն անց են կացված, իսկ այն դժվարությունները, վորոնք կանգնած են ձեր առաջ, չարժե նույնիսկ, վորպեսզի դրանց մասին խոսենք...

Միմիայն մեզանում՝ խորհրդային յերկրում գոյութուն ունի մի կառավարութուն, վորը սարի պես կանգնած է բանվորների ու կոլտնտեսական գյուղացիների թիկունքին, քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորների թիկունքին, ընդդեմ բոլոր հարուստների ու շահագործողների:

### Ի. Ստալին

II Դնացքը թեև դանդաղ, բայց փոխելով տեսարան տեսարանի յետևից գնում էր դեպի հարավ. Ասադը վազոնի պատուհանի մոտ նստած դիտում էր նորականաչ դաշտերն ու ծաղկած այգիները: Ծառերը չազրավոր նախշուն կանանց նման շարանշարան գնում էին գանազան ուղղութուններով և Ասադի յերևակայության մեջ վառում Նիգյարի գեղուղիչ հասակը, յերբ նա չազրայի մեջ ձեքձեքվում էր պատերի տակով ... Նրա բոլոր հրապույրները միայն տանջանքի բուն են, վոր ամեն բոպե այրող խանդ են զարթեցնում և տանջող սեր:

Ծնողները զարմացան, վոր նա առանց Նիգյարի յերբ

Ասադի հայրը հազաց և վեր կացավ տեղից, սկսեց անց ու դարձ անելով ծիսը:

Յեզ մի յերեկո հորը հայտնեց, վոր ուզում է Նիգյարին փախցնել Մաքու:

Մի գիշեր էլ հայրը ներս բերեց մի արևառ, սև տղա՝ մարդու և ուղղակի ասաց, վոր նա մաքսանենդ է և Ասադին ու Նիգյարին կանցկացնի Արաքսից՝ յեթե Նիգյարը գա և ձայն չհանի:

### Դ. Դեմիրճյան

2. Ընդգծել հարաբերական բառերը յեզ հարաբերյալները, յեթե այդպիսիները կան գլխավոր ցախադասության մեջ:

I Յերբ թեքվում է արևը և սովորում գետինը, դեռ յերկար ժամանակ փայլում են բարդիները բարձր, հեռավոր գագաթները՝ կարծես փառքի պսակով լուսավորված (1): Յեզ վորպեսզի վոչ վորք չխանդարի իրեն, նա տուն կուղարկի բոստանի վողջ բերքը, վոր հենց այդ նպատակով է ցանված (2): Մուկուչը համոզված է, վոր այնտեղ, լեռներում, ուր ձմեռները տաք է լինում, նա ցրտահար չի լինի, յեթե իր ձեռքի վրա բռնած ունենա այսպիսի մի դոլում՝ տաք ու պոյծառ (3): Փոքրիկ, սերտ վարունգներ, վորոնք, յերբ ձեռքով յերկու մաս անես, շրխում են ու կիսվում (4): Ահա թարխունը, վորի փոքրիկ յերկար ու նեղ տերևները հաճելի կերպով թմրեցնում են մարդու բերանը, ստեղծելով մի համ, վոր կարելի չի արտահայտել միայն թարխունահամ անունով (5): Ահա գազարները, վորոնց տերևներից յերբ ձգում էս, դեռնի տակից տուֆի պես վարդագույն արմատներ են դուրս գալիս՝ հողի մեջ ձաղարած անցքեր թողնելով (6): Ահա գետնախնձորը, վորն այնքան նման է կարտոֆիլին և նրա պես դուրս է գալիս գետնի տակից, սակայն բոլորովին տարբեր է նրանից իր համով (7): Սակայն նրա ինչի՞ն է պետք շահեկան այդ գիտելիքները, յերբ նա չի հասկանում անշահ մի բան՝ հողի փիլիսոփայութունը (8): Այդ սկզբից այն ուրից, յերբ քաղաքի հյուսիսում, տասներկու կիլոմետր այն կողմը, Արֆաչայը կիսվեց (9): Յեզավ այնպես, վոր նախ և առաջ սկսեցին իրեն հրավիրել (10): Մուկուչը չի ուզում արատավորել այդ բոռը, ուստի բանջարանոց անուն է

տալիս նրան (11): Նաև ուրիշները, ովքեր հանդիպում եյին իրեն և մի ժամանակ սիրում, այժմ մի տեսակ սառչում եյին, յետ քաշվում, յերբ լսում էյին, վոր Մուկուչը դեռ կոլտրուում չի (12): Միթե նրանք ուրիշ աչքեր ունեն, վորոնցով տեսնում են Մուկուչի համար այնքան անհասանելի հեռուները (13):

### Մ. Արմեն

II Նրան թվում, վոր ամենը, ինչ կատարվում էր շուրջը, յերազ է, հանկարծաստ, ծանր մի յերազ (Ստ. 2.): Ինչպես ամեն տեղ աշխարհիս յերեսին, այնպես էլ նայիրյան այդ փոքրիկ քաղաքում, կանուխ մութլուսուն յեղնում է նայիրցի խանութպանը (Չար.): Այդ փոշոտ, ցեխոտ, նեղլիկ փողոցում են կենտրոնացած քաղաքի առևտրական հիմնարկութունները և ուրիշ վոչ մի տեղ, յեթե, իհարկե, չհաշվենք թաղերում գտնվող այն մի յերկու տուն-խանութները, վորոնցում առևտուրը տեղի յե ունենում նահապետական ձևով՝ սպրանքների փոխանակությամբ (Չար.): Մրտում էյին առավելապես ձեռքերը, վորոնց ինչքան էլ աշխատում էր կուչ անել իր յերկարամյա սյուրբուղի կարճ թևերի մեջ, այնուամենայնիվ դաստակները բաց էյին փնում (Ն.-Դ.): Աղջիկը սովալլուկ հայացքով աչքի տակից նայեց հոր դատարկ ձեռներին և այն միջոցին, յերբ փակում էր դուռը, մի ծանր հարված զգաց գլխին (Ն.-Դ.):

3. Ահագրեկ հասգածը՝ փակագծում ետեմակված Եղկապետից յեվ հարաբերական բառերից ընտելով այն, վո՛րն ավելի հարմար է յեվ համապատասխան:

Իջնող խավարի մեջ նրանց ծողկաթեթերն արևի փետուրներ լինեն կարծես, (վոր, վորոնք) շաղ են յեկել և պայծառ վառվում են շրջապատի կիսախավարում (1): Սնա գողմները, (վոր, վորոնք) զաֆրանի հիանալի գուլն ունեն ներքեից (2): Իսկ դեռնի վրա, խավարի մեջ, փռված էր մի բան, (վորն, վոր, վորը) ամեն ինչ էր, (բայց, սակայն) վոչ իր բոստանը (3): Յետեից, Մուկուչի մեջքի վրա յեր ընկել էլեկարական լույսը (մինչդեռ, այնինչ, թեև) նրա դեմքը թազնված էր մթության մեջ (4): Խավարի մեջ, (ուր, վորտեղ) արդեն անգոյացել էյին բոլոր առարկաները, աղջիկը դեռ յերկար փնաց կանգնած (5):

(Բայց, սակայն) այդ վերավորոնքը կրկնապատկվեց, (յերբ, հենց, վոր) աղջիկը հիշեց (վոր, թե) Մուկուչն (այնուամենայնիվ, բայց և այնպես) պատասխանեց իրեն, (և, ու) նույնիսկ հիշեց, (թե, վոր) ինչպիսի պատասխան էր այդ (6): Յերեք որ պեռք յեղավ (վորպեսզի, վոր) Մուկուչը շրջեր տնտեսութունը (7): Նա փակեց իր աչքերը, (վոր, վորպեսզի) պատկերացնի այդ մեծ բոստանը (8): Սակայն նույն վայրկյանին կարծես մի կայծակ շանթում և Մուկուչին, (և, իսկ, ու) նա բաց է թողնում ձեռքից լոբարույսի յերկար թելը (9): Նա տեսնում է նաև, (թե, վոր) ինչպես այնտեղ՝ մարդերի սահմաններում աճում ու մեծանում են դալար այն ճյուղերը, (վոր, վորոնք) վաղը հով պիտի անեն կուսած քրտնաթոր մեջքերի վրա (10):

### Մ. Արմեն

§ 48. ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ

I. Կրճատել ընդգծված յերկրորդական ցախազատությունները:

I Դնից զարթնում են այդպիսի կսկիծով այն մարդիկ վորոնք նախորդ որը գործել են մի ստակալի հանցանք (1): Այդպիսի կսկիծ զգում է Լեոնը ամեն անգամ, յերբ արեվաճազից ուշ է զարթնում (2): Յեթև ուզում ես մարդկանց բուռն հավաքել, քաջուցից վոչ մի մազ չպիտք է տաս նրանց ձեռքը (3): Յերեխաները, վոր արդեն զարթնել ու նստել էյին տեղաշորում, իսկույն վեր ցատկեցին և սեղանի մոտ վազելով, սկսեցին կարաղը մատնել (4): Արուսն այդ բանակցութունների ընթացքում վոտով սեղմում էր մարդու վոտը և աչք-ուներով պահանջում, վոր վերցնի «փեշքյաչը» (5): Արուսը, ոգտվելով այն հանգամանքից, վոր ամուսնու ուշադրութունը գրավվեց ազգկա կողմը, Դրեգոր Սահակյանի յետեից դուրս գնաց (6): Լեոնը գործ գրեց իր վարպետության բոլոր նրբութունները, վոր համոզի Յոթծովմեբանին, թե հնարավոր չե հացահատիկ բաց թողնել առանց աշխորի (7): Նա չհամոզվեց և կոլխողի նախագահից զատակ դժգոհ դուրս գնաց՝ ճանապարհին հանդիպողներին խոսքած և փոփոխված գույներով պատմելով այն բոլորը, ինչ տեսել ու լսել էր նախագահի տանը (8):

### Ն. Զարյան

II Այն ժամանակ, յերբ քաղաքի տեղը շամբուտ եր յեվ անտառ, ծորի բոլոր տներից ծուխ եր բարձրանում (1): Յեվ յերբ առաջին մովրովը հրամայեց տափարակի վրա կառուցել սպիտակ բարե գորանոցը, Հյուսիսային ձորի աստղը թեքվեց (2): Գետի կամրջով գյուղից հեռացավ նա, ով վոսկի ունեւր (3): Յեվ ուղտերը, վորոնք քիւրման շալ բարձած, ծանր հակերի տակ տնքալով չորում եյին Հյուսիսային ձորի հրապարակում՝ վորքրիկ կրպակների առաջ, երեսնց գլուխները սպիտակ դորանոցի կողմը դարձրին և շամբուտները կոխելով մտան քաղաքի առաջին փողոցը (4): Բերդի քարերը մեկ-մեկ ընկան, յերբ տափարակի վրա բարձրացան սպիտակ գորանոցի պատերը (5): Հյուսիսային ձորի ժայռերը տեսան, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից, շալակով տարան յեվ վոխարհնր քաղաքից ստացան նավթ, շաքար (6): Յեվ միակ հարցը, վոր դառնում եր մեր գյուղում, մի «խնչու» յե այն մասին, թե ինչպես են մարդիկ ապրում այս քարերի տակ, ինչ՞ու չեն հեռացել մի ուրիշ, հարմար տեղ (7):

Այն յերկյուզը, վոր համակել եր հորը, անցավ վորդուն, անցավ և հարսին (8): Այն կաշվե պաշուսակը, վոր մաշել եր հոր մեջքը, վորդին ուսն առավ և շրջեց յերկրից յերկիր, և յերբեք ժանգ չստանց պողպատե դործիքների վրա (9): Յեվ մարմարի վորսորդը գոհ ե, վոր իր աշխարհի համար գտավ այդ գանձը (10): Ծրագը ծխի մեջ ավելի ազոտ եր լուսավորում, և նրանք, վորոնք կուսցել եյին Պետրոգրադի բարտեղի վրա, սպիտակած եյին գործածել նաև ձոճ և լուցկի, ավելի պարզ տեսնելու վորդոցները, կառուցվող բարեկազմները, կամուրջները (11):

### Ա. Բակունց

2. Հետեվյալ ընդգծված բառերից կազմեցե՛ք յերկուրդակամ  
ճախագասուրբյուններ յեվ կապակցեցե՛ք գլխավոր  
ճախագասուրբյունների հետ:

Նմուշ. Սակայն նրա այդ խալտի մեջ այնքան ծաղր կար ու գրգռած գետի ընկերս, վոր յես չկարողացա իմ հետաքրքրութիւնը զսպել.— Սակայն նրա ժպտի մեջ այնքան ծաղր կար, վորը ուղղված եր գետի ընկերս, վոր յես չկարողացա իմ հետաքրքրութիւնը զսպել:

I Ողոստոսի սիրուն առավոտներից մինն եր, յերբ յէս ու ընկերս՝ կանխավ արած մեր վորոշման համաձայն դուրս յեկանք քաղաքից ձիով՝ հայրենի գավառակի գյուղերը պատնելու յեվ մի քանի ավերակներ տեսնելու (1): Յերկուսս աչժմ միացած, դնում եյինք բնության քաղցրութիւններից մեր կարտոն առնելու (2): Ընկերս սիրում եր խառնվել ուրիշների գործին կամ հաճախ՝ ինքնակոչ դատավոր հանդիսանալ (3): Այսուամենայնիվ այս բոլոր տարրերնակութիւնների հետ միասին նա ճանապարհի լավ ընկեր եր (4): Միջոցի մտտ մենք գտնվում եյինք արդեն բաց ռաշտի վրա (5): Գիշ ժամանակից հետո մենք գլուղը հասանք և ուղղակի դիմեցինք ընկերոջս ազգական գյուղացու տունը (6): Վերջին հովանավոր սրահը և հյուրընկալի քաղցր ընդունելութիւնը շուտով մոտացրին մեզ ճանապարհի շոգից կրած մեր նեղութիւնը (7): Վերջունց բակը մտնելով՝ մենք վոչ վոքի չպատահեցինք (8): Այս ասելով նա գետնից մի քար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրա (9):

### Մուրացան

II Այսպիսի մի ժողովատեղին՝ հետու լինելով գյուղից յեվ ընակութիւնից, հարկավ պետք ե ունենար մի տեղ, ուր յեկվոր բազմութիւնն իջևաներ, կերակրվեր և պատասպարվեր (1): Գոմին կպած եր բանտը՝ յերեք չորս մանր յեվ մութ սենյակներով (2): Պատերի տակին համարչա միշտ կգտնես թիկնած յերկու կամ յերեք հուժկու մարդիկ՝ արխալուղների թեկերը վերելով ծալած յեվ կունները մինչև վարմունկները բաց (3): Յեվ անա պատրաստ ե յասավուրն յուր պաշտոնը կատարելու (4): Արժան և տեսնել յասավուրին մովրովի, կամ դիցուք, մի հասարակ աստիճանավորի հետ զնացած ժամանակ (5): Ականջները սրած՝ ամեն բոպե նա սպասում ե յուր տիւրոջ հրամանին (6):

### Գ. Գոռչյան

ԳՏԵԼ զԵՐԲԱՅԱԿԱՆ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՎՈՐՈՇԵԼՆ ԹԵ ՈՐԱՆՈՒ Ի՛Նչ պատճառ եմ կատարում, նախագասուրբյան ի՛նչ անգամ եմ:

I Մեր արդյունաբերութիւնը կառուցող բանվորական միլիոնավոր զանգվածները որ որի վրա շինարարութեան վիթխարի փորձ են կուտակում (1): Լենինիդը կուսակցական և պետական աշխատավորի հատուկ տիպ մշակող, աշխատանքի հատուկ լենինյան վճռ ստեղծող տեսական և գործնական դպրոց ե (2): Միայն դեպի անցյալը գնացող և կործանման դատապարտված կուսակցութիւնները կարող են վախենալ լույսից և քննադատութեանից (3): Արեւելքի ժողովուրդների համալսարանում կան գաղութալին և կախյալ վերկրներից մեզ մոտ չեկած ուսանողների մոտ 10 սարքեր խմբեր (4): Կապիտալիզմի զարգացումը չի կարող չստեղծել կապիտալիզմի հակասութիւնները սրող պայմաններ (5):

Ի. Ստալին

II — Մինյորինա Լուիզա, չես ձեզ խնդրում եմ ինձ չխըզճալ,— գոչեց պատանին վերավորված,— սինյորա Ստեֆանիան այստեղ չէ (1): Մի քայլ առաջ գնալով՝ տեսա հնամաշ վերձակի տակ պտուկած մի կնոջ դեմք (2): Ըստ յերևուցիին նրա միտքը կլանված էր մոր հիվանդութեամբ կամ մի ուրիշ հոգսով, վարդիտեմ մեր լերևալն աննկատելի մնաց նրա համար (3): Չեղինին հետեց նրան, ասելով, թե «արտիստի» մայրը մեռնելու ախորժակ չունի դեռ, կարիք չկար անհանդատանալու (4): Նրանց դուրս գնալուց հետո սենյակն աջնչափ գոնս ազատվեց, վոր յես կարող եյի դիտել շուրջս (5): Լիտնը կտորատվել չգիտեր, ամեն բանի վերաբերվում էր հասարակ (6): Յես արդեն մի քանի անգամ լսել եյի նրա նվագելը (7): Վատ էր նվագում, թե՛ լավ, չգիտեմ, միայն զգացվում էր և զգացնել տալիս լսողին (8):

Շիրվանզադե

III Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ, Յերկնքի մթնած ամպերից իջներ,

Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ: Յավից տաքացած էլ բան չեն հարցնում, Թռչում են, ասես, ասից հալածված, Ու նրանց առջև անուկի բացվում, Թշուռ է ձորը արյունով լցված: Գյուղը դատարկվեց մի ալինթարթում. Քարափի գլխին կանգնած անաբեր Լուռ, սրտատրուփ աղանջ են դնում, Նայում են ներքև ... ձեն չի գալի դեռ. Դեքետն է մենակ անզնգում՝ հոգված Խլածայն վողրով սողում դեպի ցած:

Հ. Թումանյան

IV Այդ տուն կոչվածը մի բավական մեծ խրճիթ էր, վոր լերբեմն տերոջ կլիան կովերի համար գոմի տեղ էր ծառայում (1): Շուշանն ամբողջ մարմնով դողալով կուչ էր չեկել հին լաթիքի վրա և վերձակի նմանութիւն ունեցող մի ինչ վոր բան էլ վրան էր առել (2): Սոնեն, դուռը փակելուց հետո, արագութեամբ մտակցով անկողնում պտուկած հիվանդ մորը և տողրակը շալակից վայր բերեց (3): Յերկու քույրերը հափշտակեցին նրա վրաների առաջ դրված առարակը և հավաքական ուժով քարշ տվին դեպի երեսց տաքացնող յափնջին (4): Մայրն այլևս չգիմացա՞վ, վեր թռավ տեղից, կատաղած վազեց դեպի աղջիկը և այնպես պինդ ձիգ տվեց նրա մազերից, վոր նա ձեռքից բաց թողեց չերխաաններից խլած հացի կտորները և մի սոսկալի ձիգ արձակելով վրովեց գետնին (5): Սոնեն պանրի փըշլանքները հացի կտորտանքից շոկում և քերիզանն էր ածում մեծ գործ կատարող մարդու լրջութեամբ (6): Նա մի առանձին հպարտութիւն էր գգում, վոր այդքան պանիր էր բերել իրենց ծանոթ մի ընտանիքից, ուր հաճախ կամ ինքը, կամ մայրը մի վոր հացի համար գնում ելին ամբողջ որով կամավոր ազախնի դեր կատարելու՝ սամավար սրբելու, բակն ավելելու, ծծկեր յերխալին պանելու և այլն (7):

Նար—Դոս

**1. ԳՏՆԵԼ ԸՆԳՉԾՎԱԾ ԳԵՐԲԱՅԱԿԱՆ ԻՐԱԳՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԵՆՔԻՎԱՆԵՐԸ (Ուղղական յեմ սեռական հոլովով), կողմնակի խնդիրները յեմ կողմնակի պարագաները:**

I Այդ կողմից մտնում էյին հեռու տեղից յեկած ինչպե-  
տունները՝ կապելով յուրյանց ձիանքը բակի մեջ կամ գոմում (1):  
Այդ չերկու ավերակներից հյուսիսային կողմը զտնվող այն ար-  
ժանահիշատակ ամարաթն է, վոր մի չերկու տարի դեպի յու-  
րյան բազմաթիվ ժողովուրդ էր քաշում արդարութունն և իրա-  
վունք խնդրելու (2): Մովրովի քնած ժամանակն էլ Սաքոն  
կարող և ուղղակի մտնել ննջարանը և զարթնեցնել (3): Մըտ-  
նում է Սաքոն մովրովի մոտ, կանգնում դռան տակին և զլուխ  
տալիս՝ ձեռքերը կրծքին դրած (4): Մեկին իր ետեղ յեղած  
վախտն եմ պատվիրել, մեկելին յասավուրի բերնով եմ ապսպը-  
րել (5): Դու յես մեր կյանքի ու մահի վճիռ տվողը (6):

Պ. Պոռչյան

II Սակավաթիվ վոչխար ունեցողները հանձնում էյին  
իրենց վոչխարները շատ ունեցողներին (1): Այն ժամանակ յես  
դժկամակությամբ թողնում էյի գյուղն ու հոտը՝ սիրելի վոչ-  
խարներս հանձնելով ուրիշին, և գյուղացիական ու խարկված  
դեմքով գնում էյի քաղաք (2): Մենք հավաքվել էյինք հոտին  
մոտիկ, ձորակի լանջից բղխող աղբյուրի բոլորը (3): Սոււբա-  
տը .... հրամաններ էր արձակում՝ ահագին դաշուհնը շարունակ  
ձախ կողմից առաջ մղելով (4): Յես կարդում էյի ազագայիս  
վոսկիտառ պիրքը, վոր եջ առ եջ բացվում էր հիացմունքով  
վառված աչքերիս առաջ (5): Ընկերս կողքիս բթեց՝ աչքի  
ձայրով Սոււբատին ցույց տալով (6): Յես հազիվ զսպեցի ծի-  
ծաղիս պայթումը, վորովհետև չէյինք սիրտ անում ծաղրել մեր  
մեծերին (7):

Ավ. Իսահակյան

III Մթին ամպերը դեկը կորցրած նավերի նման տատան-  
վում էյին՝ չիմանալով ուր գնալ (1): Յերկինքը խավար էր,  
կատաղի հողմից բարձրացող փոշին վոլոր-մոլոր պաուլաներ էր

գործում փողոցներում և քաղաքին տալիս վիթխարի աղորիքի  
տեսք (2): Թող ուրեմն այս քաղաքը կրի մի անգործ կատա-  
կարանի հնարած կեղծ անունը— Զիլզիլ (3): Շատ քչերն էյին  
ներս մտնում այդ դարբասի մեջ բացված փոքրիկ կամարածե  
դռնով, կանխապես զարկելով նրա վրա քաշ արած հաստ ու  
կեռ յերկաթե զարկոցը, վոր նույնպես ժանգոտվել էր քիչ  
զործածվելուց (4): Պատմում էյին, որինակ, թե մի որ սաս-  
տիկ բարկանալով կնոջ վրա, այնքան ինքն իրեն կորցնում է,  
վոր բռնում է մի տարեկան աղջկա թևից և նրանով զարկում  
մոր գլխին (5): Նայելով իր գանձը կրծքին սեղմած այդ հա-  
զիվ-հազ թոթովող մանկանը՝ կարելի չեր կարծել, վոր նա  
խանձարուրից արդեն ստացել է անխախտելի գաղափար դրամի  
մասին (6): Յեմ նա՝ մանրամասն բացատրելով սովորի նշա-  
նակութունը, ավելացրեց (7): Առաջիկա աշնան սկզբին Բաղ-  
դասարը վորոշեց Վարդանին տալ ուսումնարան (8): Վարդանը  
դուրսը քաշ լուծ էր հոր խոսքերը՝ ամուր ընկած նրա ձեռք և  
մի քային չերկուսն անելով՝ հազիվ կարողանում էր հավասար  
ընթանալ նրա հետ (9): Շուտով Բաղդասարը հանձնարարեց  
նրան՝ վաճառել ապրանքի հակերից մնացած խսիրներն ու  
պարանները (10):

Այն ժամանակ յես չհասկացա նրա խոսքերի մեջ թագնը-  
ված բուն վիշտը (11): Լեռնը չափազանց վշտացավ և սկսեց  
պաշտպանել մորը (12): Հետո գլուխը կրծքին թեքած, ով գի-  
տե ինչ խորհրդածութունների մեջ վերագառնում էր տուն (13):  
Նա նորոգել էր տվել մոր ձեռքով լուսամուտից փողոց շարտված  
կիթառը, նվագում էր (14):

Շիրվանզադե

IV Հագուստներն այնքան հին էյին, վոր հնախույզները  
զանոնք գնելու համար մեծաքանակ դումար մը կուտային (1):  
Աբխոզոմ աղա՝ այս տեսարանին առջև բորբոլին շվարած ան-  
համբեր տեսնել կուղեր, թե ի՞նչ պիտի ընէր այս պարոնը սե-  
ղանին վրա (2): Յերխոստարզն ծոցեն թուղթ մը հանեց և աչ-  
քերն Աբխոզոմ աղային տնկելով՝ բոլոր ձայնով պոռաց (3):  
Աբխոզոմ աղա՝ այս ահարկու ձայնն վախենալով նստած տե-  
ղեն չերկու կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել՝

պոռաց (4).—Ո՞վ է այս մարդը, հիմարանոցեն փախած խե՛նթ  
ե, թե՛ հիմարանոց յերթալու հիմար (5):

Սեղրաք աղան կը ձեռնարկէ նոր կոշիկներն հագնելու  
(6): Կոշիկաւարն քալֆայտօն և աշակերտներոն Սեղրաք աղային  
ոգնելու կերթա (7): Սեղրաք աղան կզգա, թե գերի բռնված է,  
ուստի անձնատուր կլլա կոշիկաւարին, վոր յուր խուճըովը կհա-  
ջողի կոշիկներն անցնել յուր հաճախորդին վտօքերուն (8):  
— Չըլլար, Սեղրաք աղա, չըլլար, ամեն խանութ նամուս ունի,  
մենք մեր խանութին պատիվը չենք կրնար կտարել անանկ  
մեծ, լայն և տձե կոշիկներ կարելով (9): Սեղրաք աղան կստիպ-  
վի հանել լարճիները և ընդունել մտապին համաձայն կոշիկ-  
ներն ու անոր հարգածները (10):

### Հ. Պարոնյան

V Այժմ նա տուն եր դառնում հուլսը բուրբուկին կտրած  
և խիտ չարացած ամենքի և ամեն բանի վրա (1): Դավիթը  
մտավ արյուն կտրած աչքերով (2): Չնայելով վոր ցերեկը սաք  
էր, բայց արեւ մայր մաննելուց հետո, ինչպես մարախն և լի-  
նում միշտ, չեղանակը զգալի կերպով ցրտել էր (3): Չգուճ էր  
միտն, վոր մի քանի բաժակ ողին բավական էր այդ հիվան-  
դազէն յերևույթները ձեռաց վանելու համար (4):

Ջափինյանն ամուր և չերկար սեղմեց քարաւզարի  
ձեռքը, թեթեակի գլուխ տվեց սեղանի ծայրին կուչ յեկած  
Պատրիկյանին և զուրս գնաց նուշնպիսի արագ քայլերով, ինչ-  
պես վոր մտով՝ հատակը թխթխկացնելով իր պլպլան կոշիկ-  
ների խիտ բարձր ու բարակ կրունկներով (5): Յերեկ—մե-  
կել որվա քեչիս ուտող տիրացուն էր, ե՛ (6): Իսկ հիմա ... իր  
պարտքն և համարել այցելութուն տալու խմբագրին (7):  
Իտալիայում իր արվեստը կատարելագործելուց հետո նա վեր-  
ջին վեց տարվա ընթացքում չերգել է Ռուսիայի զանազան քա-  
ղաքներում (8):

Դարունն այտեղ շատ վաղ յեկած լինելով՝ չեղանակը  
հիանալի չէր և այնքան տաք, վոր մինչև անգամ լուսամուտնե-  
րը բաց ելինք արել (9): Յեղրաքներս՝ չեղանակը լավ լինելու  
պատճառով այդ որը գուրս էլին գնացել և դեռ տուն չելին յեկել (10):

Նար — Դոս

## 2. Ընդգծված գեղարվեստական լուսամուտներն իրենց կողմնակի անգամներով վերածել յերեսողական ցախազատութան:

i Ամբողջ նամբին հիվանդ լինելով՝ չիմացով, թե քանթ  
որում չեկան, կամ ռւր կլին, գնում, կամ յե՛րը հասան (1):  
Հարկ էր լինում վորոնել ավելի հիմնական բազա (2): Ապաս-  
տանի բանտարկութունը՝ առաջին հարկադրանքը կյանքի մեջ  
ապրել, ինչպես թուլաարելի յե, սապաիլ գժվար չեկավ Լիպո-  
յին (3): Ի՞նչ, չի՛ կարելի բանալի շինելը սովորել (4): Արհես-  
տանոցում վարպետը տարված իր աշխատանքով սրում, ձեռ-  
վորում էր մի հին բանալի (5): Կամենալով ծածկել իր ասր-  
նեստը՝ խուժանութունը, նա իսկույն բատրակ մտավ մի կու-  
լակի տուն մի վոր հացի (6): Մոտանալով իր նպատակը՝ նա  
առաջ գնաց իր նոր կյանքի մեջ, սկսեց աշխատակցել պատի  
թերթին, վոր պուզի կոմիտեի անդամները հրատարակում էին (7):  
Ճիշտ է՝ մի անգամ սա գոգութուն կատարեց, բայց Լիպոն ու  
իր ընկերները միջամտեցին, խոստացան ուղղել նրան և նրան  
փրկեցին զուրս անելուց (8):

### Դ. Դեմիրճյան

II Մանր, մուլլ քշաթուխը գալիս է, կանգնում շրջակա  
ըլուրների վրա ու անպատկառ սպանում ներս խուժել գլուզը  
(1): Ինքն իր մեջ ուժ զգալով պաշտպանվելու համար, Մուքե-  
լը գողաղում էր ջանքերի հարձակումներից ու խախտում իր  
նախապետական հանգստութունը (2): Վերջին անգամ տուն  
դառնալիս Մուքելը փորձեց իր բախտը տերողորմյալով (3):  
Չորս կողմը մարդ ու մեքենա իրար խառնված մի չեռանդուն  
ժողոք էլին առաջացնում (4): Յերեկին Մուքելը բողբոջեց  
կանգ էր առնում շունչը անողը բերելու համար, նայում էր  
շուրջը սիռված խառնիճազանճ բազմության վրա ու բացու-  
կանչում (5): Մուքելն բատ իր սովորության ուղում է չգալ,  
բայց իր համազուգացի ջանել բանվորները՝ իմանալով նրա  
բնավորութունը ուղեցին ձեռք առնել ու պնդեցին, թե ժողո-  
վը մթերման հարցերի մասին է, և անպատճառ պետք է բոլորը  
ներկա լինեն (6):

Արագի

III Մարզոն վախենում եր նայել նրանց (1): Իսկ նայելիս՝ շփոթվում եր և մաքի թելը կորցնում (2): Այդ նկատելի յեր մանավանդ առաջին շարքում նստող մի ջահել մազմազոտ բանվորի աչքերում (3): Յեղ «բրդոտն» ուրախ-ուրախ ճանապարհ դրեց նրան մինչև տուն՝ պատմելով դարձյալ, թե վորքան ցանկությունն է ունեցել սովորելու, բայց չի յեղել մեկը, մի հարմար մարդ, վոր դիմեր (4): «Բրդոտից» բաժանվելով Մարզոն իրեն թեթևացած զգաց (5): Իսկապես հետաքրքրվում եր ամեն ինչով, ամեն տեսակ առարկաներով, հաճախ այնպիսի նշուժներով, վոր հանրադիտակ պիտի լիներ մարդ նրա հարցասիրությունը բավարարելու համար (6): «Բրդոտն» ու Անդրանիկն էլ ամեն որ ուզում էին. դաս պատասխանել և զրատախտակի մոտ գնալ (7): Մարզոն խոսք չգաավ ասելու. նույնիսկ հուզմունքից չերկար ժամանակ չկարողացավ դասն սկսել, իսկ յերբ սկսեց՝ շփոթվում եր, ասելիքը մոռանում (8): Մարզոն անբացատրելի տխրությունն զգաց (9):

#### Ստ. Զորյան

IV Զորացած ծառի դալար ճյուղն այնպիսի ուժով եր սեղմվել տանիքի յեղրին, վոր խոր վերքի պես ակոսել եր կտուրը (1): Ծան վզին կապած շղթան մեխի հետ դուրս եր պրծել պատի մեջ ամբացած փտած փայտից և ընկել հողի մեջ (2): Յերբ ծառից ընկած այդ վտիտ սավերը փոխում եր իր տեղը, նա էլ ծուլորեն, բայն բացած բերանով հորանջում եր և տեղից դժվարությամբ բարձրանալով՝ փոխում եր տեղը (3): Ապա խոսրոփն ուզում եր ծիծաղել, հրհուալ լիաթոք, բայց ձայնը դուրս չեր գալիս (4): Քնած գյուղացիները յերկրաշարժից արթնացածներին նման՝ սարսավահար դեպի դաշտ էյին վազում (5):

#### Միք. Մանվելյան

### § 51. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արագրել միջանկյալ Գախազասուրբուհները յեվ վերուծել օտրահյուսուրեհ:

1) Մեր քահանան վոչ մի աղոթք չեր հիշում (Միբաը նրան շնջում եր, անիծիր):

Լուսաբացի ծիրանավառ մշուշում  
Ցայտում էյին ճաճանչները ցան ու ցիր...  
Մռայլ սպան լուռ նայում եր աջ ու ձախ  
(Արդյոք հիշեց նա յուր մորը սգավոր).  
Գունասավում եր մուրթ գիշերը, և ուրախ  
Արեգակն եր վոսկեգոծում սար ու ձոր...

#### Վ. Տերյան

II Ես մի բանն ել (Սաքոն բուժը և ցուցամատը միմյանց քսելով հասկացրեց, վոր փողի համար և ասում), ես մի բանն ել շարթի ես գլխին դու գնում ես, շարթի են գլխին հետո տանում ես (Պռոշ): Անցյալ անգամները (այդ մասին, կարծեմ, քեզ չեմ զրել) հորս բժիշկը (դու պետք է, վոր ճանաչում լինես այդ պարոնին) դառնում է մեղ և ասում ծածուկ, վոր հորս այլևս վոչինչ չի ոգնի, և իզուր համ նա չե չարչարվում, համ մենք (Ն. Դ.): Հազար ութը հարյուր յոթասուսուն ... չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբերի յերեսունը մեկին—ներեցեք, յերեսունին պիտի ըսելի, վասնզի սեպտեմբերն յերեսուն որ միայն ունի—յերկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթտըված միջանասակ և գիրուկ մարդ մը, վոր Տրապիզոնի շոգենավեն նոր յկած եր, Ղալաթիո նավամատուցին վրա կախած՝ նավակն մը յուր սընտուկները հանել կաշխատեր (Հ. Պարոնյան):

II Տները, ինչպես ասացի, նայիրյան այդ քաղաքում ցածրիկ են, մեծ մասամբ միհարկանի, տափակ կտուրներով, բայց տներին և խանութների այդ միտրինակ տափակության ծովում, քաղաքի ճիշտ կենտրոնում վորպես ուրիշ մի աշխարհից, կամ յերկնքից ընկած քարեղեն մի հրաշք կանգնած կա, յերեակայում եք ... հինգհարկանի մի հսկա՝ քարե մի թյուրիմացություն (Յե. Չ.): Դեռ մինչև որս էլ կիրակի որբը շատ անգամ կարելի չե հանդիպել յերկու պատկառելի նայիրցիների, վորոնք կիրակնորյա պատույտի յկած (յերկաթուղու կաշարանը քաղաքային այգուց հետո յերկրորդ գրոսավայրն է նայիրյան այդ քաղաքում) կանգնել են յերկաթուղագծի առաջ և զբաղված են այսպիսի դրույցով (Յե. Չ.): Մնացած խանութների մասին թող նրանց ցուցակներն ասեն ճիշտ այն հերթով, ինչ հերթով վոր

շարված են նրանք Լորիս-Մելիքյան փողոցի մի ծալրից մյուս ծալրը՝ մինչև կաշարան «Մանրուքի խանութ. Պողոս Կոլոպոսյան» — «Գինի, արաղ, կոնյակ, Համբարձումով Նիկոլայ» (սա իր բավականին ընդարձակ փորի պատճառով քաղաքում կոչվում է բոչկա Նիկոլայ) — «Դագադագործ. ընդունում եմ պատվերներ, Յենոք Կարապետյան» (սա հենց ինքն է Մեռելի Յենոքը) — «Ճաշարան «Յեփրուպա». Յեգոր Արզումանով» և կլի մանրախճառ, ու կլի՝ մանր-մուկ խանութներ՝ մինչև կաշարան (Յե. Չ.):

III Ամենից առաջ իր ձերմակ ձիուն նստած դնում էր տանուտեր Արսենը՝ չեքքեզի չուխին հողին, ինչպես միշտ՝ տանուտերական նշանը դեղին շվժայով վիզը դցած, ինչպես անում էր սոճասարակ պաշտոնական գործերով տեղ գնալու ժամանակ (մի ուրիշ նշան էլ փոքրիկ ողով կարած էր կրծքին) (Մտ. Չ.): Մի քանի անգամ էլ հերանք եղպես ուղեղ հյին հարսին. մի յերկու անգամ նանը համաձայնել էր. մի յերկու անգամ էլ չեք համաձայնել, պատճառ ըսնելով իրենց մենակությունը, աշխատանքը. խոստացել էր, վոր ինքը կաանի Վարդիշաղին հերանց տուն (և տարել էր ու ինքն էլ հեռը մի քանի որ մնացել) (Մտ. Չ.): Լիպոյի կյանքը դառնացավ: Առաջին անգամ նա սկսեց մտածել — արդեն տասնհինգ տարեկան էր — թե ինչից ինչ դառավ (Դ. Դեմ.): Իր նոր ընկեր բանվորների սթանդակությամբ Լիպոն դուրս հանեց խուժանական վորջերից Կորտ Սարգսին, Գոռ Պետրոսին (Մոսկոն ուղղիչ տանն էր) և բերեց գործարան (Դ. Դեմ.):

§ 52. ՈՒՐԻՇԻ ՈՒՂՂԱԿԻ ՅԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍԲ

1. ԳՏՆԵԼ ՈւՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈւՂՂԱԿԻ ԽՈՍԲԸ ԵՎ ԱՐՏԱԳՐԵԼ ԱՌԱՅՆԻՆ-ԱՌԱՅՆԻՆ:

I — Տղանք, ով կա այստեղ, — ձայն է տալիս մովրովը լատավունքին և նորից խոսելով պատվիրում, վոր վոչ վորք չընդունեն:

— Հ'ը, — ձայնը բարձրացրեց մովրովը, — Ինչես պոռններդ կես գազ կախ քցում, բերնիցդ հս քրեհ չի՞ն ուզում:

Դրա համար մի քանիսն ասում են, թե քրդտանցի չե, վոմանք էլ պնդում են, թե աշտարակցի չե:

— Ա՛յ տղա, շուտ, — հրամայում է Սաքոն յուր սպասավորներին, — ազա Կարոյի ձիու հոգսը քաչեցեք, բոլ խոս ու դարման լցրեք առաջը, թամքը թուլացրեք, ծանրությունը տուն բերեք:

.... Նախըջին վերջին յերկու մանեթն էլ Սաքոյին տվեց ու խնդրեց, վոր դնա թե չե, մնացածն առաջին յեկողի հետ գրկի:

9. ՊՈՂՅԱՆ

II Մի անգամ գյուղում Տորքին գայրացրին, «Անգեղ, գեշ, անգեղ», — հետքից գոչեցին.... Արքան հրավիրեց կուսակալներին, վոր այդ ժամանակ պալատումն էին, — «Կուզեմ իմանալ, — ասաց, — մեր յերկրում Ի՞նչպես ցեղեր կան, ի՞նչպես են ապրում»: «Ուղիղ է ասածն Առան իշխանի, — Ասաց բղեղիսը Գուգարաց յերկրի, — Մեր հսկաներն էլ ձորերը մտան, վոր գրիբներին վոչին հարկ չտան»:

9. ԱՂԱԿԱՆ

III Ու կատաղեց հերն աղվա, հովիվ կարդեց ուրիշին, Միամանթոն իջավ սարից՝ աչքը սարի մշուշին: «Գնա, — ասաց բեկը նրան, — իմ աշխարհից հեռացիք, խեղդ մի տա էլ աղջկան, վոչխարն անի ցան ու ցիր: Մինչ արևմադ պետք է կորչես, վոր չսեսնի գյուղը քեզ, իմ հաճուքից թուած անհալտ, վաղուց կորած նետի պես»: Խճեղարեն հորը գրկեց ու խնդրում էր, աղերսում. «Հայրիկ, ինձ մի մալուլ թոգնի, հայրիկ, իմ սիրան և մբսում: Հայրիկ, հայրիկ, ծիծեռնակի ձագր բնից մի հանի, Մի սպանի քո աղջկան, յարին մալուլ մի անի»: Բայց քարի պես, մեռ քարի պես բեկի սիրար անդա Ասես չեք էլ ուզում լսել լացն ու մորմոքն աղջկա: Յեկ աղջիկը, չեք մանում էր առաջանքը իրենց նով,

Մտայլում եր ու բոցի պէս սիրտն եր մտնում մի հին զոդ՝  
Ու հիշում եր որ ու գիշեր ու տեսնում եր յերազում՝  
Միամանթոն և հով դառած իր ականջին փսփսում,  
Թե «սիրելիս, չի մոռանա շնչավորը արևին,  
Միրուդ վարդը դեռ չի թոշնել սրտիս կանաչ տերեխն»:  
Յե՛վ աղջիկը մոլոր, տխուր միշտ ասում եր իր մտքում,  
«Չի մոռանա և սիրտս քեզ, դու ասող հոգուս յերկնքում»:

#### Հովհ. Շիրազ

IV Ես վախկոտ Նազարը մի գիշեր կնգա հետ շեմքն և  
դուրս գալիս Վոր շեմքն և դուրս գալիս, տեսնում ե ճրըք-  
ճրըքան լուս լուսնյակ գիշեր, ասում ե.

— «Ա՛յ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր ե ... Միրտս  
ասում ե՛ վեր կաց գնա Հնդստանից չեկող Շահի քարվանը  
կտրի բեր տուն լցրու...»

Կնիկը թե.

— «Ձենդ կտրի, տեղդ նստի, քարվան կարողիս մտիկ  
արա...» (1): Եստեղից վեր ե կենում Վախկոտ Նազարը ուղիղ  
գնում և իրենց գյուղի տերտերի մոտ:

Պատմում ե իր քաջագործությունը ու հետն ել հայտ-  
նում ե, վոր պետք ե կնգանից կորչի, միայն խնդրում ե՛ իր  
արածը տերտերը գրի, վոր անհայտ չմնա, ամենքն ել կար-  
գան իմանան (2):

#### Հ. Քումանյան

### 2. Արագրեյ վարժարանները՝ ուղղակի խոսքը անուղղակի դարձնելով:

I Մխական դպրոցի ծանոթ ուսուցիչ պարոն Մարուքե  
Դրաստամատյանը, վոր պակաս մի հրաշք չե նաչիրյան ալը  
քաղաքում, ամեն անգամ ալը շինության մտաբաց անցնելիս  
ասում ե ինքնիբեան, կամ, յեթե խոսակիցներ և ունենում՝  
նրանց. «Ուրիշ բան ենք մենք, ուրիշ՝ յեղրտպացիք ... ա՛յ»:  
Յե՛վ նա հիացած աչքերով նայում ե հինգհարկանի շինքի տա-  
րորինակ փոքրիկ քառակուսի պատուհաններին: — «Դեռ մենք  
չմտ ենք հետամնաց», — ասում ե նա (1):

— «Ան վոչխարը նայե. մեկ վուրթ դմակ կախված ե

յետևից», — ասում ե Հաջի Ռնիկ Եֆենդի Մանուկոֆը դահվենի  
(սրճարանապետ) Սեթուլին: «— Յես յաղու՛ մը կլլած եմ առաւուս»  
— տեղի-անտեղի պատասխանում ե դահվենին, ինչպէս յերևում  
ե, բոլորովին տարբեր տրամադրություններով տարված (2):

Յե. Չարենց

### § 53. ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

#### 1. Բացառել հետեվյալ հասկածների կեսագրութունը:

I Տղամարդիկ հունձ ելին գնացել: Ու յերեկոյան տղերքը  
հնձից յեկան թե չե, տանուտերը բոլորին կանչեց կանցիլար ...  
Դրանց մեջ եր ամենից առաջ Մաճկալանց Դավիթը, հետո Միրա-  
նանց Արշոն, Ժամհարի աղա Չաքարը, Անդարդ Սեթոն, Է, վոր մեկի  
անունը տաս, բոլորն ել ջահել տղաներ, բայց դրանց մեջ Դա-  
վիթն եր մենակ, վոր վեց ամիս չկա՛ չեկել եր «ժառանգությու-  
նից» և յերեք ամիս եր, ինչ պատկվել եր ... Մի խոսքով, տա-  
նուտերը սրանց բոլորին կանգնեցրեց և հայտնեց, վոր «թուղթ  
ե չեկել զապասը հավաքելու», թող պատրաստ կենան վաղը  
քաղաք գնալու:

— Կոխվ, ես նեղ մաջալին եզ եր պակաս, — խոսեց  
առաջինը Միրանանց Արշոն:

— Բա մեր արտերը, վոնց պիտի անենք, — բղավեց  
Ժամհարի աղա Չաքարն իր հաստ, բամբ ձայնով:

Ու ամեն կողմից սկսեցին՝ «արտեր, արտեր»...

Բոլորը խոսում ելին արտերի մասին, վորովհետև ար-  
տերը հասնելու վրա ելին: Իսկ Անդարդ Սեթոն, ինչպէս ամեն  
բանում, այստեղ ել անդարդ ձևացավ:

— Ե՛, տնաշենի՛ տղերք, արտեր, արտեր ... կնտեղ  
կննձենք, ելի. մարդ թե արտ, մին չի...

Ուրիշ ժամանակ դուցե տղերքը ծիծաղելին այս խոս-  
քերից, բայց այսօր վոչվոք ուշագրություն չդարձրեց, մի յեր-  
կուսը նույնիսկ ահաճությամբ նայեցին նրան. «Մարտնդ սալ-  
սալակ»...

Այդ ժամանակ Մաճկալանց Դավիթը լուռ եր: Նրան  
թվում եր, վոր ամենը, ինչ կատարվում և շուրջը, յերազ և,

հանկարծահաս, ծանր մի լերադ: Կռիվ. Ինչ կռիվ, վճռոեղ,  
ինչի՞ համար....

### Ստ. Զորյան

II Արեւը կամաց-կամաց սկսում է բարձրանալ, և անա  
մյուս, վոչ—խանութպան, քաղաքացիները լեղում են և մայթերի  
վրայով դնում են մի մասը «պրովիզ» գնելու, մի մասը՝ դոր-  
ծի: Պաշտոնյաներն շտապում են պաշտոնատեղի, պ. Մարուքեն  
շտապում է դպրոց: Սանուկներում գործը հետզհետե սկսում է  
լեռալ, և գուցե միայն դադադադործը և «Յեվրոպա» ճաշարանի  
անտրեն Յեզոր Արզումանովն հիմա անդործ նստած իրենց խա-  
նութներին տուջ ձանձրույթից հորանջում են .... Սրբում, սըր-  
բում է գուքանչի Յեզորը և շվացնելով «Վասաղուլի» ուսաս-  
կան յերգը՝ մտածում է, վոր հարկավոր է մի մեծ քաղաք տե-  
ղափոխվել՝ Ռոստով կամ Կատինդար, և այնտեղ կարգին  
«ստալավո» պահել Յեվ հանկարծ, ինքն ել չգիտի՝ ինչու, հի-  
շում է, վոր զահվեճի Սեթոն մի անգամ բարեկենդանին մի  
Ֆուենտ լվացքի սապոն մի անգամից կերավ տասը ուրբու գրա-  
դի համար: «Թյու՛ւ քո դալած ճամբեն...», զղվանքով հաչոյում  
է Յեզոր Արզումանովը և սրբիչը մի կողմ նետելով՝ յեղում է  
փողոց:

Մարդիկ անցնում են դանդաղ, անշտապ անցնում են  
մարդիկ, կանայք, լերելաներ. յեղել են փողոց, վոր գնան  
պաշտոնի, գնումներ անելու, բաղնիք, գործի Բաղնիք, ասենք,  
առավոտվա վաղ ժամերին միայն կանայք են գնում նայիրյան  
այդ փոքրիկ քաղաքում. քաղաքում կա միճիայն յերկու բաղ-  
նիք, յերկուսն ել ասիական, թեկուզ մեկի ան լան է «Շերմակ»,  
վորովհետե պատերն սպիտակացրած է կրով, իսկ մյուսը, վոր  
մեկի թի նման ձմերուկաձև դմբեթ ունի, կոչվում է «Փանտա-  
զիա, բաղնիք առանձին համարներով»....

«Եսոր ելի հաջին բաղնիք է զրկել Նունուֆար հանըմին»,  
ասում են հարևանները քձծիծաղ: «Խեյր եղի», ասում է այդպիսի  
որերին Յեզոր Համարածուովը՝ «Յեվրոպա» ճաշարանի տերը  
Հաջի Մնիկին. «Եսոր Հաջին մեզ մոտ պիտի ճաշե. լավ բողբաշ  
եմ շինել ավե, իսկական դամաշնի՝ պամիդորով ու սոխով»:

Յն. Զարենց

### 2. ԴՆԵՂ ԵՆԵՑՎՅԱԿ ԿԱՏՎԱԾԻ ՄԵՅ ԱՆԽՐԱԾԵՑ ԿԵՏԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ:

Լենինիզմի հիմունքների մասին բրոշյուրում աված է լե-  
նինիզմի հայտնի բնորոշումը վորն ըստ յերևույթին քաղաքա-  
ցիության իրավունք է ստացել Նա ասում է լենինիզմը իմպե-  
րիալիզմի և պրոլետարական հեղափոխութեան դարաշրջանի  
մարքսիզմն և ավելի ճշրիտ լենինիզմը պրոլետարական հեղա-  
փոխության թեորիան ու տակտիկան է ընդհանրապես, պրոլե-  
տարիատի դիկտատուրայի թեորիան ու տակտիկան առանձնապես  
ձիշտ և արդյոք այս բնորոշումը

Յնա կարծում եմ վոր ճիշտ է Նա ճիշտ է նախ այն պատ-  
ճառով վոր ուղիղ է մատնանշում լենինիզմի պատմական ար-  
մատները բնութագրելով այն վորպես իմպերիալիզմի դաբաշր-  
ջանի մարքսիզմ ի հակակշիտ Լենինի քննադատներից վոմանց  
վորոնք սխալ կերպով կարծում են թե լենինիզմը ծագել է իմ-  
պերիալիտական պատերազմից հետո Յերկրորդ նա ճիշտ է այն  
պատճառով վոր ուղիղ է նշում լենինիզմի միջազգային բնույթը  
ի հակակշիտ սոցիալ-դեմոկրատիայի վորը լենինիզմը կիրառելի  
լե համարում միայն ազգային-ուսական պայմաններում Յեր-  
րորդ նա ճիշտ է այն պատճառով վոր ուղիղ է նշում լենինիզ-  
մի որդանական կապը Մարքսի ուսմունքի հետ բնութագրելով  
այն վորպես իմպերիալիզմի դարաշրջանի մարքսիզմ ի հակա-  
կշիտ լենինիզմի քննադատներից վոմանց վորոնք այն համարում  
են վոչ թե մարքսիզմի հետագա զարգացում այլ միայն մարք-  
սիզմի վերականգնումն ու նրա կիրառումը ուսական իրակա-  
նության նկատմամբ:

Ի. Ստալին



Յ Ա Ն Կ

Յերկու խոր . . . . . 3

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՅՈՒՆ

ՀԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ . . . . . 5

ԽՈՍԲ յեւ ճախադասութիւն

- 1. Խոր . . . . . 7
- 2. Նախադասութիւն . . . . . 9
- 3. Պարզ և բարդ նախադասութիւններ . . . . . 10
- 4. Նախադասութեան անդամներ և կապակցութիւն . . . . . 13
- 5. Նախադասութեան տեսակներն ըստ բնութի . . . . . 13

Պարզ ճախադասութիւն

- 6. Նախադասութեան պիտակոր անդամներ. համառոտ նախադասութիւն . 15
- 7. Նախադասութեան յերկրորդական անդամներ. ընդարձակ նախադասութիւն . . . . . 16
- 8. Լրացման լրացումները . . . . . 17

Յենթակա

- 9. Յենթակայի արտահայտութիւնը . . . . . 19
- 10. Զեղչված յենթակայով նախադասութիւն . . . . . 21
- 11. Աւենթակա նախադասութիւն . . . . . 23

Ստորոգյալ

- 12. Պարզ ստորոգյալ . . . . . 25
- 13. Բաղադրու ստորոգյալ . . . . . 27
- 14. Վերացական բայով պարզ ստորոգյալ . . . . . 28
- 15. Զեղչված ստորոգյալով նախադասութիւն . . . . . 29
- 16. Անդեմ նախադասութիւն . . . . . 31

Նախադասութեան յերկրորդական անդամներ

- 17. Յենթակայի լրացումներ . . . . . 32
- 18. Վորոշիչ . . . . . 32
- 19. Հակացուցիչ . . . . . 34
- 20. Բացահայտիչ . . . . . 35
- 21. Ստորոգյալի լրացումներ . . . . . 37
- 22. Ուղիղ խնդիր . . . . . 37
- 23. Անուղղակի խնդիրներ . . . . . 39
- 24. Պարագաներ . . . . . 40

- § 25. Բազմակի լրացումներ . . . . . 43
- § 26. Միջանկյալ բառեր . . . . . 44
- § 27. Միջարկութիւններ կամ ձայնարկութիւններ . . . . . 45
- § 28. Կոչականներ . . . . . 45

Կապակցութիւն


- § 29. Համաձայնութիւն և զարգացութիւն . . . . . 46
- § 30. Տրամաբանական շեշտ . . . . . 47
- § 31. Յենթակայի և ստորոգյալի համաձայնութիւնը . . . . . 48
- § 32. Յենթակայի յեւ ստորոգյալի զարգացութիւնը . . . . . 51
- § 33. Վորոշիչ և վորոշյալի կապակցութիւնը . . . . . 52
- § 34. Հակացուցիչ և հատկացյալի կապակցութիւնը . . . . . 53
- § 35. Բացահայտիչ և բացահայտյալի կապակցութիւնը . . . . . 54
- § 36. Հորոշիչի կիրառական նշանակութիւնը . . . . . 56
- § 37. Կապեր և կապական բառեր . . . . . 59

Բարդ ճախադասութիւն

- § 38. Համադասութիւն և ստորադասութիւն . . . . . 62
- § 39. Բարդ համադասական նախադասութիւն . . . . . 66
- § 40. Միավորյալ նախադասութիւններ . . . . . 67
- § 41. Համադաս նախադասութիւնների անդամների զեղչումը . . . . . 67
- § 42. Բարդ ստորադասական նախադասութիւններ . . . . . 68
- § 43. Բարդ ստորադասական նախադասութիւնների զարգացութիւնը . . . . . 69
- § 44. Համաստորադաս նախադասութիւններ . . . . . 71
- § 45. Յերկրորդական կարգի նախադասութիւններ . . . . . 71
- § 46. Յերկրորդական նախադասութիւնների բնույթը . . . . . 73
- § 47. Շաղկապներ և հարաբերական բառեր . . . . . 79
- § 48. Յերկրորդական նախադասութիւնների կրճատում . . . . . 81
- § 49. Դերբայական լրացում . . . . . 83
- § 50. Նախադասութեան կողմնակի անդամներ . . . . . 84
- § 51. Միջանկյալ նախադասութիւններ . . . . . 86
- § 52. Ուղիղ ուղղակի և անուղղակի խոր . . . . . 87
- § 53. Կետադրութիւն . . . . . 89

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ . . . . . 99



Геразірне 1948

այ. Թիվ 8

Հայկական հանրապետության  
Գրականության կոմիտեի  
հրատարակչության  
ԿԵՆՏՐՈՆ  
Երևան

44

4. նս.  
5. նս.

« Ազգային գրադարան »



NL0245707

7402

В 90 409.  
1917 40 469.



И С С В И Р  
Ученый секретариат  
Ученый секретариат  
Ученый секретариат  
Ученый секретариат